

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվաիսաարակագիտական համալսարան

Անդրանիկ Վաչագանի Այվազյան  
«ԼՌՈՒԹՅՈՒՆ» ՖԵՆՈՄԵՆԻ  
ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԽՈՍՈՒՅԹՈՒՄ  
(ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՉԱՅԵՐԵՆ ՆՅՈՒԹԻ ՅԻՄԱՆ  
ՎՐԱ) (առեկախոսություն)

Ժ. 02.02 – «Ընդհանուր և  
համեմատական լեզվաբանություն»  
մասնագիտությունը ամբիոնական  
գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝  
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Բրուտյան

Երևան-2017



## **Բովանդակություն**

Ներածություն.....	4
ԳԼՈՒԽ 1. «ԼՌՈՒԹՅԱՆ» ԼԵԶԿԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ՅԱՐԱՑՈՒՅՑԻ ՓՈՒԼԱՐԿՄԱՆ ՅԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....	9
1.1 Մարդակենտրոն հարացույցի փուլարկումը և եզրաքանություն մեջ 9	
1.2 «Լռություն» և եզրագործաբանական ուսումնասիրությունների ծավալումը մարդակենտրոն հարացույցի առանցքում.....	16
1.3. Լռելու և լռության գործառույթների տարբերակումը.....	23
1.4. «Լռություն» ֆենոմենը ըստ հաղորդողի և հաղորդակցվողի.....	32
ԳԼՈՒԽ 2. ԼՌՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԼԵԶԿԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ.....	49
2.1. Խոսույթի սահմանմանն առնչվող որոշ տեսական մոտեցումներ.....	49
2.2 Քաղաքական խոսույթը որպես և եզրաքաղաքագիտություն ուսումնասիրման առարկա.....	55
2.3. Լռությունը որպես բազմաշերտ հաղորդակցային նշան քաղաքական խոսույթում.....	59
2.4. Ֆիզիկական բռնությունը որպես ոչ խոսքային հաղորդակցություն միջոց քաղաքական խոսույթում.....	68
2.5 Լռեցնելու և եզրական արտակամիջոցների գենդերային տարբերությունները քաղաքական խոսույթում.....	74
ԳԼՈՒԽ 3. ԼՌԵԼՈՒ ԻՄԱՍՏԱԾԱՐԱՅՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԼԵԶԿԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՄՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ.....	87
3.1 Ստորոգական բաղադրիչների վերլուծությունը՝ որպես ծածկասույթների իմաստաբանական բացորոշման միջոց քաղաքական խոսույթում.....	87
3.2 Լռելու շարահյուսական միջոցները Բ. Օբամայի ապրիլ քսանչորսյան ուղերձներում.....	96
3.3 Բ. Օբամայի ապրիլյան ուղերձներում լռություն և եզրագործաբանական վերլուծություն.....	109
Եզրակացություններ.....	117
Հավելված.....	121
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	134

## Ներածություն

«Լռություն» ֆենոմենի ուսումնասիրությունը ներկայումս բավականին արդիական հարցադրումներ է առաջ քաշում, որը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, այդ թվում՝ աշխարհաբաղաբան և տեխնոլոգիական զարգացումների հարածուն տեմպերով: Թեև հնում «Լռություն» ֆենոմենին անդրադարձել են բազմաթիվ մտածողներ, սակայն դրանք եղել են հիմնականում իմաստասիրական և բարոյախրատական բնույթի մեկնաբանություններ: Այսպես, Սուրբ Անտոն Մեծը հորդորում է. «Յեռո՛ւ փախեք ուրիշներին վատաբանելուց և եռանդով փարվեք Լռությանը» [Սուրբ Անտոն Մեծ, 2007, 114]: Տիցերոնի խոսքով՝ մեծ գործերի ընդունակ մարդիկ Լեզուն փակ են պահում [Բանականության սիմֆոնիա, 1981, 276]:

Այդուհանդերձ, «Լռության» նկատմամբ հետաքրքրությունն ակտիվացել է գիտության, այդ թվում՝ Լեզվաբանության մեջ մարդակենտրոն հարացույցի ձևավորմանը գուզընթաց: Այս առնչությամբ զարգացումները համեմատաբար նոր են՝ սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից, սակայն մի շարք մոտեցումներ արդեն ուրվագծվել են: Ոմանք նույնիսկ խոսում են «սայլենթոլոգիա» (Լատիներեն *silentium*՝ «Լռություն» բառից) հնարավոր գիտության մասին [տե՛ս Эпштейн, 2001, 212]:

«Լռություն» ֆենոմենի բազմաշերտայնությամբ պայմանավորված՝ երևույթը հայտնվել է Լեզվաբանական մի շարք գիտակարգերի և միջգիտակարգերի ուսումնասիրության ծիրում: Սույն խնդրին 20-րդ դարի կեսերին առավել ապես փիլիսոփայական անդրադարձ է կատարել Մ. Պիկարդը [Picard, 1952], հոգեբանական ուղղվածության աշխատանքով է հանդես եկել Ս. Ջ. Բեյքերը [Baker, 1955], իսկ մարդաբան Ի. Թ. Յոլի 1959 թ. հրատարակած «Լռության Լեզուն» գիրքը ծավալուն ներդրում էր երևույթը միջմշակութային հայեցակետից դիտարկելու առումով:

Հաղորդակցային տիրույթում «Լռություն» ֆենոմենն ուսումնասիրելու համար հիմք են Կ. Յ. Բասոյի [Basso, 1970], Թ. Ջ. Բրունոյի [Bruneau, 1973], Վ. Ջ. Ջենսենի [Jensen, 1973], Ռ. Լ.

Յոհանեսենի [Johannesen, 1974] և այլ ոչ աշխատանքները: 20-րդ դարի երկրորդ կեսում «Լռության» ֆենոմենը հայտնվել է հոգելեզվաբանների ուշադրության կենտրոնում, որոնք երևույթը դիտարկել են հարալեզվաբանական միջաբերանայիններին գուգահեռ: Այս տեսանկյունից խնդրին անդրադարձել են Դ. Դյուզը [Duez, 1982], Ջ. Ա. Սմիթը [Smith, 1984], Ս. Լ. Քրաուն և Ս. Ֆելդսթեյնը [Crown & Feldstein, 1985] և այլք:

Խնդրո առարկայի բազմակողմ, սակայն առավելապես լեզվագործաբանական ուղղվածության ծավալուն աշխատանք է կատարել Ա. Յավորսկին 1993 թվականին հրատարակած «Լռության ուժը» (The Power of Silence) գրքում: Բացի հաղորդակցային, գործաբանական, լեզվաբաղադրիչական դիտարկումներից՝ հեղինակը նշված աշխատանքում անդրադարձել է նաև լռության-արվեստ հարաբերությանը՝ այդ կերպը նդարձակելով երևույթի ուսումնասիրման տիրույթը:

«Լռության» ֆենոմենի նկատմամբ բազմազիտակարգային հետաքրքրությունները առավել ակտիվացել են 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին: Խնդիրը քննվել է տարբեր գիտակարգերի և միջգիտակարգերի ծիրում՝ ներառյալ նշանագիտության [Почепцов, 2002], միջմշակութային հաղորդակցության [Nakane, 2007], լեզվի փիլիսոփայության [Бибихин, 2007, 29-43], գեղեցիկային լեզվաբանության [Брутян, 2008, 104-105], քաղաքական խոսույթի [Freedon, 2015], միջազգային հարաբերության ոլորտի տեսության [Dingli, 2015] և այլն:

Քաղաքական խոսույթում «Լռության» ֆենոմենի նկատմամբ համակարգված և բազմակողմանի ուսումնասիրություն կատարելու խնդրի կարևորությամբ պայմանավորված՝ սույն ատենախոսության շրջանակներում մենք տարրորոշել ենք լռությունը՝ որպես արտալեզվական հաղորդակցային նշան և լեզվական տիրույթում դրսևորվող իրողություն, որը հնարավորություն է տվել համալիր կիրարկել ինչպես նշանագիտական, այնպես էլ իմաստաշարահյուսական ու լեզվագործաբանական գործիքակազմը՝ համապատասխան

տիրույթներում քննարկվող ֆենոմենի բազմակողմանի քննությունն իրականացնելու համար:

Առաջին անգամ փորձ է արվել քաղաքական խոսույթում «լռություն» հաղորդակցային նպատակը բացորոշելու համար կիրարկել նշանային շերտերն առանձնացնելու և դրանց միջև առկա հարաբերությունները որոշարկելու մեթոդը, իսկ տեքստային մակարդակում երևույթը քննվել է լեզվական նշանի ծավալման իմաստաբանական, շարահյուսական և գործաբանական հարթություններում: Բացի այդ՝ փորձել ենք քաղաքական խոսույթում վերլուծել ֆիզիկական բռնությունը որպես հաղորդակցային միջոց, որը հաճախ գործածվում է ինչպես որոշակի բանի մասին լռելու, այնպես էլ քաղաքական հակառակորդին լռեցնելու նպատակով:

Նշանագիտական, իմաստաշարահյուսական և լեզվաբանական մի շարք երևույթներ դիտարկվել են նոր հայեցակետերից: Մշակվել են քաղաքական տեքստերում լռությունն առնչվող երևույթների վերլուծության որոշակի մոտեցումներ, որոնց արդյունավետ կիրարկումը կարող է օժանդակել ոչ միայն համապատասխան ոլորտում ուսումնասիրությունն կատարող տեսաբաններին և հետազոտողներին, այլև քաղաքական գործիչներին ու նրանց հասարակական կերպարը կերտող մասնագետներին:

Աշխատանքում առաջարկվող «լռություն» բազմագիտակարգային հայեցակետերը կարող են հաջողությամբ ներդրվել բուհերում դասավանդվող այնպիսի դասընթացներում, ինչպիսիք են լեզվագործաբանությունը, հաղորդակցային լեզվաբանությունը, լեզվաքաղաքագիտությունը, ճանաչողական լեզվաբանությունը և այլն: Առաջարկվող մի շարք նոր եզրեր կարող են հետագայում ընդգրկվել համապատասխան մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատություններում և հաջողությամբ շրջանառվել լեզվաբանական տեսական և գործնական գրականության մեջ:

Խնդրո առարկայի բազմաշերտ և բազմագործառնությամբ առանձնահատկություններին ելնելով՝ որպես նյութ են ընտրվել ինչպես քաղաքական տեքստեր, մասնավորապես, ԱՄՆ նախագահ Բ.

Օբամայի բուրձը՝ թվով ութ ասորիլ քսանչորսյան ուղերձները, այնպես էլ հայաստանյան, որոշ դեպքերում նաև ռուսաստանյան քաղաքական կյանքին վերաբերող այնպիսի իրողություններ, որոնք անմիջականորեն առնչվում են «լռություս» ֆենոմենի համակողմանի քննությանը:

«Լռության» նշանագիտական, լեզվագործաբանական և իմաստաշարահյուսական առանձնահատկությունների բացորոշմամբ ու որոշարկմամբ փորձել ենք ցույց տալ, թե ինչպես մարդակենտրոն հարացույցի փուլարկմամբ սկիզբ առան «լռության» միջգիտակարգային ուսումնասիրություններին վերաբերող հետազոտական աշխատանքները, որոնց հենքի վրա ձևավորվեցին քննվող ֆենոմենին առնչվող տեսական արդի մոտեցումները: Նպատակ ենք ունեցել նաև տարորոշել ու լեզվագործաբանական գրականության մեջ առաջարկվող «լռության» գործառույթները՝ հիմք ընդունելով դրանցում առկա կամ բացակա հաղորդակցային դիտավորությունը, ինչպես նաև տարբերակել ու «լռություս» և «լռել» եզրերը: Դասակարգվել են հաղորդակցային լռության ընդհանուր դրսևորումները՝ ըստ հաղորդողի և հաղորդակցի՝ հաշվի առնելով նաև վերջինիս՝ լռեցնելու հնարավորությունները:

Սույն ատենախոսության շրջանակներում ցույց է տրվել «լռության»՝ որպես արտալեզվական նշանի բազմաշերտայնությունը քաղաքական խոսույթում, առաջարկվել որոշակի լեզվանշանագիտական մոտեցում՝ դրանք բացորոշելու և դրանց միջև առկա փոխհարաբերությունները պարզելու համար: Առանձնացրել ենք նաև արտալեզվական այն գործոնները, որոնք ազդում են քաղաքական խոսույթում լռեցնելու լեզվական արտակա միջոցների ընտրության հաճախականության վրա՝ գենդերային տարբերակվածության առումով:

Իմաստաբանական, շարահյուսական և գործաբանական վերլուծության միջոցների կիրարկմամբ ուսումնասիրել ենք «լռության»՝ որպես ծածկասույթի դրսևորման հնարավորությունը քաղաքական խոսույթի տեքստային

մակարդակում՝ լեզվական նյութի ծավալ ման երեք՝ իմաստային, շարահյուսական և գործարանական չափումներում:

Աշխատանքում փորձել ենք կիրարկել մեթոդաբանական նոր մոտեցում՝ պարզելու հաղորդակցային առավել լայն իրադրության բաղադրիչների հարացուցային փոփոխության ազդեցությունը լեզվական միավորների ստորոգական շերտերի առկայացման վրա: Սույն առենախոսության շրջանակում վերլուծություն կատարելիս գործածվել են նաև նկարագրական և վիճակագրական մեթոդները, որոնց միջոցով ստացված տվյալները համակարգվել և ներկայացվել են համապատասխան աղյուսակներով:



**ԳԼՈՒԽ 1. «ԼՈՒԻ ԹՅԱՆ» ԼԵԶԿԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ԶԱՐԱՑՈՒՅՑԻ ՓՈՒԼԱՐԿՄԱՆ ԶԱՄՍԵՔՍՈՒՄ**

**1.1 Մարդակենտրոն հարացույցի փուլը արկունքը և էզվաբանություններ**

Լեզվաբանական և և էզվագործարանական ուսումնասիրություններում «լեզվային» ֆենոմենի նկատմամբ հետաքրքրության աճը, կարծում ենք, անխաբեղիորեն առնչվում է մարդակենտրոն հարացույցի հետ, որի փուլարկունքը էական ազդեցություն ունեցավ ոչ միայն վերոնշյալ գիտակարգերի, այլև գիտական հետաքրքրությունների այլ տիրույթների վրա: Այդ պատճառով հարկ ենք համարում համառոտ անդրադառնալ համապատասխան հարացույցի փուլարկման հարցին, որի լույսի ներքո առավել կորոշարկվեն քննարկվող ֆենոմենին առնչվող այն խնդիրները, որոնց անդրադարձել ենք սույն առենախոսության տարբեր գլուխներում:

19-րդ դարում որպես առանձին գիտություն ձևավորված էզվաբանությունը վերջին մի քանի տասնամյակում, շեղվելով իր ավանդական ուղեծրից, նորանոր ուղղություններ է ընդգրկում ուսումնասիրության իր ոսպնյակի տակ, ինչպես նաև փորձում տարբեր դիտանկյուններից նայել այն կնճռոտ հարցերին, որոնք տասնամյակներ (եթե ոչ հարյուրամյակներ) շարունակ եղել են ոլորտի մասնագետների ուսումնասիրությունների կենտրոնում:

Այս միտումները ծնունդ տվեցին բազմաթիվ միջգիտակարգերի ու էզվաբանական ուղղությունների և մեծամասամբ պայմանավորված էին հենց գիտության ներսում ծառայած խնդիրներով:

Լեզվաբանական հարացույցերի վերաբերյալ մասնագետները համակարծիք չեն, հետևաբար այն հարցը, թե արդի էզվաբանությունը ներկայում որ փուլում է, չունի միանշանակ պատասխան: Զատկանշական է, որ, ըստ երևույթին, էզվի ուսումնասիրություններում նկատվող ներգրավող

(ին տե գրացի ոն) մի տում ներով պայ մանավորված՝ Ի. Ս. Կուբրյակովան լեզվաբանության ներկայիս կարգավիճակը բնութագրում է որպես բազմահարացուցային [տե՛ս KyбpяkoBa, 1995, 59]: Այս առումով որոշ լեզվաբաններ մտահոգություն են հայտնում, որ դեռևս Սոսյունրի կողմից առանձնացրած լեզվաբանության նպատակներից երրորդը՝ «ճշտել սեփական սահմանները և ուսումնասիրության առարկան» [Սոսյունր, 2008, 17], թվում է առավել քան երբևէ «վտանգված», քանի որ լեզվաբանությունը հարակից գիտակարգերից բաժանող սահմանները հարաճուն կերպով դառնում են աննշմարելի [Harris, 2006, 209]:

«Գիտական գիտելիքի հարացույց» եզրը շրջանառության մեջ դրեց Տ. Կունը 1962 թվականին՝ այդ մասին խոսելով «Գիտական հեղափոխությունների կառուցվածքը» աշխատությունում: Դասելով՝ նա նկատի ուներ «բոլորի կողմից ընդունված այն գիտական ձեռքբերումները, որոնք առժամանակ գիտական հանրությանը տալիս են հարցադրումների և դրանց լուծման կադապարը» [Kuhn, 1970, V]:

Անդրադառնալով ներկայիս լեզվաբանական հարացույցի անվանման խնդրին՝ Ի. Ս. Կուբրյակովան գիտելիքի նեոգործառական հարացույցի բնորոշ գիծն է համարում «լեզվական երևույթների նկատմամբ ճանաչողական և հաղորդակցային մոտեցումների հաջող համադրումը» [KyбpяkoBa, 1995, 59]: Չհամաձայնելով վերջինիս, ինչպես նաև նրան համակարծիք մի շարք տեսաբանների հետ՝ Վ. Ա. Մասլովան առաջարկում է «մարդակենտրոն հարացույց» անվանումը [տե՛ս MacлoBa, 2008, 10]՝ իր տեսակետը հիմնավորելով այն փաստարկմամբ, որ առաջարկված եզրը «հնարավորություն է տալիս ընդգրկել ոչ միայն ճանաչողական լեզվաբանությունը, այլև լեզվամշակութաբանությունը, հաղորդակցային լեզվաբանությունը և թնուլեզվաբանությունը, որոնց կենտրոնում նույնպես կանգնած է մարդը» [նույն տեղում]:

Մենք չենք փորձում վերջնական տարբերակ առաջարկել, սակայն, կարծում ենք, որ արդի լեզվաբանության մեջ մարդակենտրոն միտումներն առնվազն խիստ նկատելի են, և դրանք կարելի է դասել այն հիմնական առանձնահատկությունների շարքին, որոնցով բնորոշվում է ժամանակակից լեզվաբանությունը:

Այս միտումներին, թերևս, հավանություն չէր տա լեզվաբանական բազմաթիվ ուղղությունների վրա մեծ ազդեցություն գործած շվեյցարացի լեզվաբան Ֆերդինանդ դը Սոսյուրը, ըստ որի՝ «լեզվաբանությունը պետք է որոշակիորեն զատորոշվի [...] մարդաբանությունից, որը մարդուն ուսումնասիրում է միայն որպես տեսակ, այնինչ լեզվական գործունեությունը հասարակական իրողություն է» [Սոսյուր, 2008, 18]:

Պետք է նկատել, սակայն, որ մարդաբանությունը ևս ընդլայնել է իր սահմանները և ներկայում համարվում է «քառադաշտ» գիտակարգ՝ ներառելով մշակութային, կենսաբանական, հնագիտական և լեզվաբանական ուղղությունները [տե՛ս Beeman, 2012, 532]: Յետևաբար, զարմանալի չէ այն հանգամանքը, որ մարդաբանական լեզվաբանությունը դիտարկվում է որպես մարդաբանության ենթագիտակարգ [տե՛ս Klein, 2006, 296]:

Երբեմն մեջբերելով Ֆ. դը Սոսյուրին վերագրվող հայտնի խոսքը («լեզվաբանության միակ և իսկական առարկան ինքն իր մեջ և իր համար դիտարկվող լեզուն է» [դը Սոսյուր, 2008, 357])՝ կարծես ակնարկվում է, որ լեզվաբանության ներկայիս հարացույցը շվեյցարացի լեզվաբանի հայացքների հակառակ համեմատականն է [տե՛ս Macroba, 2008, 16]: Իհարկե, այս տեսակետը հիմնավոր կարելի է համարել՝ հղում կատարելով նաև «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» գրքում հնչած հետևյալ մտայնությանը. «Եթե ուսումնասիրում ենք լեզվախոսությունը մի քանի կողմերից միաժամանակ, *լեզվաբանություն* առարկան մեզ երևում է որպես տարաբնույթ և միմյանց հետոչ մի կապչուն երևույթների խառնակույտ: Այսպես վարվելով՝ մենք դուռ ենք բացում մի քանի

գիտությունների առջև՝ հոգեբանության, մարդաբանության, նորմատիվ քերականության, բանասիրության և այլն, որոնք հստակորեն զատում ենք լեզվաբանությունից, բայց որոնք սխալ մեթոդի հետևանքով կարող են լեզվախոսությունը ներկայացնել որպես իրենց առարկաներից մեկը» [Սոսյուր, 2008, 22]:

Սակայն, նախ՝ գրքի վերջին նախադասությունում հնչած սկզբունքային տեսակետը («լեզվաբանության միակ և իսկական առարկան ինքն իր մեջ և իր համար դիտարկվող լեզուն է») կասկածի տակ է առնվում որոշ սոսյուրագետների կողմից, որի մասին նշվում է գրքի ծանոթագրություններից մեկում. «Արդեն համարյա վստահաբար կարելի է ասել, որ Սոսյուրին վերագրվող այս վերջին նախադասությունը, որն ասես գրքի ամփոփումը լինի, և որը կառուցվածքաբանական տարբեր դպրոցների մեթոդաբանական ելակետն է, պատկանում է ոչ թե դասընթացների հեղինակին, այլ «Դասընթացի» խմբագիրներին» [տե՛ս Սոսյուր, 2008, 362-363]:

Եվ երկրորդ՝ տարանջատելով լեզվի լեզվաբանությունը խոսքի լեզվաբանությունից [տե՛ս Սոսյուր, 2008, 35-38]՝ շվեյցարացի տեսաբանը, ինչ-որ առումով, ճանապարհ է հարթում այն բոլոր լեզվաբանական հոսանքների համար, որոնք եկան ուսումնասիրելու լեզվախոսության *խոսքային* դաշտը՝ ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստելով ներկայիս մարդակենտրոն հարացույցի գոյարկմանը: Իսկ լեզվաբանությունում «յուրաքանչյուր նոր հարացույց չի փոխարինում նախորդին, այլ ակտիվորեն գործածելով նրա ձեռքբերումները՝ ստիպում է ուշադրություն դարձնել լեզվի այն կողմերի վրա, որոնք հին հարացույցում գրեթե չեն ուսումնասիրվել» [Маслова, 2008, 16]: Չավանաբար, մասնավորապես այս հանգամանքը հաշվի առնելով են ներկայիս տեսաբանները խոսում արդի լեզվաբանության մեջ բազմահարացույցայնության մասին [տե՛ս նույն տեղում]:

Ըստ էության, տեղի է ունենում լեզվաբանական և այլ գիտակարգերի փոխներթափանցում, որը նպաստում է լեզվագիտության զարգացմանն ընդհանրապես, և ավանդական լեզվաբանությունը՝ մասնավորապես: Ուսումնասիրության տարբեր

մեթոդների համադրումը հնարավորություն է տալիս նոր լույսի ներքո դիտարկելու և եզրակացություն այնպիսի դրսևորումներ, որոնք մինչ այդ ստվերում էին մնացել :

Վերջին մի քանի տասնամյակում ձևավորված և եզրաքանական միջգիտակարգերից ճանաչողական և եզրաքանակությունը, և եզրաքաղաքագիտությունը, և եզրամշակութայինությունը, և եզրագործաքանությունը, հաղորդակցային և եզրաքանակությունը և այլն իրենց ուսումնասիրության կենտրոնում են դնում մարդ-և գույն հարաբերությունը: Կառուցվածքաբաններից շատերի կողմից հաճախ անտեսված այս հարաբերության բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առավել ընդգրկուն պատկեր ունենալու, այսպես կոչված, *խոսող մարդու* վերաբերյալ . Յուրմբուդի ձևակերպմամբ՝ մարդը մտածում, զգում և ապրում է միայն և եզրում [Гумбольдт, 1985, 378]:

Մարդաքանական հայեցակարգի ձևավորման հետ բավականին սերտ աղերսներ ունի գործաքանությունը, որն ի սկզբանե ձևավորվել է որպես նշանագիտության բաժին ի թիվս իմաստաքանության և շարահյուսության: 20-րդ դարի 30-ականների վերջին այս բաժանումը կատարեց ամերիկացի փիլիսոփա Չ. Ռ. Մորիսը՝ «իմաստաքանություն» ասելով նկատի ունենալով նշանների և առարկաների միջև հարաբերությունների, «շարահյուսություն» ասելով՝ նշանների միջև, և «գործաքանություն» ասելով՝ նշանների և դրանք մեկնաբանողների միջև հարաբերությունների ուսումնասիրությունը [տե՛ս Моррис, 2001, 50]:

Սակայն գործաքանության՝ որպես և եզրաքանական միջգիտակարգի ձևավորումն առավել ապես նշանավորվեց 60-ից 70-ական թվականներին, երբ ոչ միայն և եզրաքանակների, այլև հիմնականում փիլիսոփաների (Օստին, Սերլ և Նրանց հետևորդները) և մարդաքանակների (Յայմս, Յենքս), ինչպես նաև սոցիոլոգների և հաղորդակցման տեսության մասնագետների (Գոֆման, Սաքս, Շեգլոֆ) շրջանում խորապես զգացվեց մարդկային և եզրի՝ ամբողջական իրականության ըմբռնման համար անհրաժեշտ

լեզվական ավանդական մեթոդների անբավարարությունը [տե՛ս Mey, 2006, 58]:

Փորձելով գերծ պահել լեզվաբանությունն այլ գիտակարգերի մեջ տարրալուծելու վտանգից՝ կառուցվածքաբանները մինչև 70-ականները ձգտում էին կադապարել լեզուն՝ որպես անփոփոխակ (ինվարիանտ) միավորների մի ինքնաբավ համակարգ, որն ինքնին հղի էր մեկ այլ վտանգով. այս մոտեցման հետևողական զարգացումը հնարավոր է՝ ի վերջո հանգեցնել այն բանին, որ լեզվաբանությունը կվերածվեր նշանային համակարգերի ընդհանուր տեսության: Սակայն աստիճանաբար լեզվաբանական ուսումնասիրությունների ծիրում հայտնվեցին լեզվի և արտալեզվական իրականության հարաբերություններին վերաբերող հարցադրումներ, որոնք անխուսափելիորեն հանգեցրին իմաստաբանության դարաշրջանի փուլարկմանը, որն էլ իր հերթին խթանեց լեզվագործաբանական երևույթների նկատմամբ աճող հետաքրքրությունը:

Դեռևս 20-րդ դարի 20-ական թվականներին իմաստաբանության տեսաբանների շրջանում սկսում է գերիշխել այն տեսակետը, որ օբյեկտիվ աշխարհը ոչ թե առարկաների, այլ փաստերի, այսինքն՝ տեղի ունեցող իրադարձությունների համախումբ է: Հենց այդ շրջանում է, որ իմաստաբանությունը մերձենում է տրամաբանությանը և փիլիսոփայությանը: Չնայած այս ամենին՝ խոսքը (ասույթը) վերլուծելիս դեռևս անտեսվում էր հեղինակի գործունը:

Փորձելով որոշարկել իր առարկայական ուսումնասիրության դաշտը՝ իմաստաբանությունն առանձնացրեց լեզվական այն միավորները, որոնց իմաստը սերտորեն կախված էր համատեքստից: Լեզվաբանները սկսեցին ուսումնասիրել սպասարկու այնպիսի բառեր, ինչպիսին են տրամաբանական հանգույցները, դերանվանական և մակբայական ցուցիչները, քվանտորները և այլն: Նախկինում ասույթների ուսումնասիրման վրա բևեռված տեսաբանների ուշադրությունը գրավեցին եղանակավորող այն տարրերը, որոնք անքակտելիորեն կապված են

ասույթի հեղինակի հետ: Այս ամենը հիմք ծառայեց  
լեզվագործաբանական ուսումնասիրության ներքին համար: Սկսվեց  
շրջանառվել նույնիսկ «գործաբանական աղբարկո»  
հասկացությունը [տե՛ս Yule, 2011, 6]: Վերջինս նշանակում էր, որ  
լեզվագործաբանությունը կոչված էր ուսումնասիրել այն, ինչն  
իրենց հետազոտությունների ծիրից դուրս էին թողել ձևական  
համակարգերի վերլուծության ամբ հետաքրքրված տեսաբանները:

Ինչպես արդեն վերն ասվեց, համատեքստի նկատմամբ զգայուն  
սպասարկու բառերից զատվեց լեզվագործաբանների ուշադրությունը  
գրավեցին լեզվական այն միավորները, որոնք նախադասության  
իմաստը կապում են խոսքի սուբյեկտի հետ: «Յենց ասույթի  
հեղինակին դիմելն ինքնին նշանավորեց անցումը բառերի  
կայուն իմաստների վերլուծությանից ասույթի փոփոխական  
բովանդակության դիտարկմանը» [Аргументова, 1985, 8]:

Բնականաբար, այս միտումը խոսքի ուսումնասիրության նոր  
հեռանկարներ է բացում. եթե նախկինում լեզվաբանները  
բավարարվում էին հիմնականում լեզվական նյութի գուտ  
բովանդակային կազմի, մասնավորապես՝ կառուցվածքային  
վերլուծությամբ, նրանց հետաքրքրության շրջանակն են  
ներթափանցում լեզվամշակութային կամ դրան առնչվող տարրեր:  
Յասկանալի է, որ յուրաքանչյուր մարդ որոշակի մշակույթի կրող  
է, և լեզուն, իր ներկայացուցչական բնույթից ելնելով, չէր  
կարող անմասն մնալ համապատասխան մշակույթի որոշակի տարրեր  
արտացոլելուց: Ավելին, լեզվական նյութում արտացոլվում են  
նաև անձի հոգեկերտվածքը և նրա՝ սոցիալական որոշակի խմբի  
պատկանելությունը: Լեզվի ուսումնասիրմամբ կարելի է  
բացորոշել նաև ազգի մշակութային կողը, որի մասին  
հանգամանալից խոսել է դեռևս Յուլիան Գյմբոլդտը [տե՛ս Гумбольдт, 1985,  
370-381]:

Չարմանալի է, որ գիտական հետաքրքրությունների այս  
խճանկարի խորապատկերին ձևավորվեց  
լեզվամշակութաբանությունը, որը նպատակ ունի ուսումնասիրել  
տվյալ ազգի մշակութային դրսևորումները լեզվում, ինչպես նաև

լեզուների գուգադրական ուսումնասիրմամբ վեր հանել մշակույթների առանձնահատկությունները:

Համաշխարհային ակտիվ զարգացումների, մասնավորապես միգրացիոն հարաճուստ միտումների համատեքստում առանձնահատուկ կարևորություն են ստանում միջմշակութային հաղորդակցմանն առնչվող խնդիրները, որոնց առնչակցումը լեզվի հետ վերածվում է բուհական ծրագրերում ուսումնասիրվող առանձին առարկայի [Тер-Минасова, 2008, Брутян, 2014]: Պարզ է դառնում, որ տարբեր ազգերի ներկայացուցիչների միջև հաղորդակցությունը չի կարող սահմանափակվել ընդամենը մեկը մյուսի լեզուն իմանալով: Միջմշակութային հաղորդակցման ընթացքում թյուրըմբռնումների և բախումների առիթ կարող է հանդիսանալ լեզվական նյութի հետևում ընկած, դրանով պայմանավորված և դա պայմանավորող մշակութային բազմատարր խորապատկերը:

Երևան եկած նոր խնդիրների հախուռն ուսումնասիրումը գիտական առումով, բնականաբար, ցանկալի արդյունք տալ չէր կարող և, ինչպես հաճախ է պատահում, դրանց նկարագրությունը, վերլուծումն ու դասակարգումը ստանձնեցին տարբեր գիտակարգերի ու միջգիտակարգերի ներկայացուցիչներ՝ այն դարձնելով բազմակողմ և, հետևաբար, գիտական շրջանակների համար առավել հետաքրքիր ուսումնասիրության նյութ:

## **1.2 «Լռության» լեզվագործաբանական ուսումնասիրությունների ծավալումը մարդակենտրոն հարացույցի առանցքում**

Մարդակենտրոն ուսումնասիրությունների առարկա է դառնում նաև «լռություն» ֆենոմենը, որը հայտնվում է բազմաթիվ լեզվաբանական գիտակարգերի և միջգիտակարգերի ու շարժումների կենտրոնում, մասնավորապես հոգելեզվաբանության, հանրալեզվաբանության, լեզվամշակութաբանության և այլն: Լռության բազմակողմանի ուսումնասիրությունը հիմնականում պայմանավորված է նրա ընդհանուր առմամբ երկկերպ դրսևորմամբ: Այսինքն՝ մի դեպքում այն հաղորդակցային նշան է, մյուսում դիտարկվում է որպես



խոսքաչարում որոշակի ասելիքի միտումնավոր բացթողում, ընդ որում՝ ինչպես ամբողջական, այնպես էլ մասնակի:

Սակայն դեռևս վաղ ուսումնասիրություններում, երբ առավելապես փիլիսոփայական, հոգեբանական և մարդաբանական ծավալուն անդրադարձներ եղան սույն խնդրին (Picard, 1952, Baker, 1955, Hall, 1959), հաղորդակցային և ոչ հաղորդակցային դեպքերին տարբերակված մոտեցում չէր ցուցաբերվում: Ավելին, Մ. Պիկարդը լռությունը նույնիսկ դիտարկում էր որպես խոսքից անկախ գոյություն ունենցող մի ֆենոմեն՝ պնդելով, որ «լռությունը կարող է գոյություն ունենալ առանց խոսքի, մինչդեռ խոսքն առանց լռության՝ չի կարող» [Picard, 1952, 13]:

1953 թ. մի շարք տեսաբաններ սկսեցին խոսել «լռությունը» հաղորդակցային տիրույթում հանգամանորեն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին [տե՛ս Barnlund, 1968, 530, Denner, 1969, 835]: Դրան գրեթե անմիջապես հաջորդեցին «լռությանը» վերաբերող տարբեր ուղղվածության, սակայն միևնույն ժամանակ տարբեր շեշտադրումներով հոդվածներ [Basso, 1970, Bruneau, 1973, Jensen, 1973, Johannesen, 1974], որոնք որոշակի առումով «ցատկահարթակ» ծառայեցին համանման թեմաներով հետագա ծավալուն աշխատանքների համար:

Ք. Յ. Բասոյի հեղինակած հոդվածը (1970) էթնո- և հանրալեզվաբանական ուղղվածություն ունեցող աշխատանք է, որում նա, հիմնվելով 1964-1969 թթ. կատարված ուսումնասիրությունների վրա, փորձում է բացորոշել, թե ինչու որոշ իրավիճակներում Յյուսիսային Ամերիկայում բնակվող ապաչի ցեղախմբի հնդկացիները նախընտրում են լռել: Այսպես, նա առանձնացնում է վեց իրավիճակ, որոնցում հնդկացիները նախընտրում են լռել, ինչպես օրինակ՝ անձանոթների շրջապատում, սիրահար գույգերի մտերմության նախնական փուլում, դպրոցից վերադարձող սեփական երեխաներին հանդիպելիս և այլն: Ք. Յ. Բասոն եզրակացնում է, որ չնայած իրավիճակների տարբերությանը, ապաչիների մոտ խոսելուց խուսափելու միտումը պայմանավորված է ոչ այնքան տարաբնույթ

իրադրություններով, որքան հաղորդակցի սոցիալական կարգով և հոգեբանական վիճակով [տե՛ս Basso, 1970, 226]:

Թեև հեղինակը խնդրին նայում է առավել ասես էթնոլեզվաբանության դիտանկյունից, նրա տեսական ընդհանրացումներն արդեն խիստ հետաքրքրական են «լեռնայնում» հաղորդակցման տեսության շրջանակներում ուսումնասիրողների համար: Այսպես, նա նշում է, որ թեև լեռնայնում ձևով միշտ նույնն է, բայց իրադրությամբ պայմանավորված՝ այն կարող է առանձին դեպքերում տարբեր գործառնություններ կատարել [Basso, 1970, 215]:

Յետաքրքրական է, սակայն, որ Թ. Ջ. Բրունոն մի քանի տարի անց (1973) հրապարակում է ծավալուն մի հոդված՝ հետևյալ վերնագրով՝ «Հաղորդակցային լեռնայններ. ձևերը և գործառնությունները»: Յեղինակը առանձնացնում է լեռնայն դրսևորման երեք ձև՝ հոգելեզվական, ինտերակտիվ և հասարակական-մշակութային: Առաջին գլխում տեսաբանը նախ փորձում է հիմնավորել այն դրոշմը, որ «բացարձակ լեռնայնն անհնար է» [Bruneau, 1973, 17], այնուհետև անդրադառնում խոսք-լեռնայն փոխարաբերությանը՝ վերջինը դիտարկելով որպես խոսքի բացակայություն, որը նա բնութագրում է ինտենսիվության, տևողության և հաճախականության աստիճաններով [տե՛ս նույն տեղում]:

Ըստ Թ. Ջ. Բրունոյի՝ լեռնայնը խոսքի համար կատարում է որոշակի խորապատկերի դեր, որի վրածավալվում է խոսքը: Իր այս կարծիքը նա պատկերավոր ներկայացնում է ճերմակ թղթի և դրավրայի տեքստի հարաբերությամբ [տե՛ս Bruneau, 1973, 18]: Նույն գլխում տեսաբանը հետաքրքիր և խորը դիտարկում է կատարում լեռնայն և ժամանակի փոխարաբերության վերաբերյալ, ինչը երևույթը լեզվամշակութային ծիրում դիտարկելու լավ առիթ է տալիս՝ հատկապես հաշվի առնելով նրա արդարացի պնդումը այն մասին, որ «տարբեր մշակույթներ, հասարակական խմբեր և, հավանաբար, անհատներ ժամանակի հաշվարկի վերաբերյալ տարբեր ըմբռնումներ ունեն» [Bruneau, 1973, 21]:

Խոսելով հոգեկեզվական լռության մասին՝ հեղինակը հանգամանորեն կանգ է առնում միջանձնային հաղորդակցման ժամանակ դրսևորվող հապաղումների վրա՝ իր տեսական դիրքորոշումների համար հիմք ընդունելով բանավոր խոսքի ուսումնասիրությանն առնչվող ավելի քան 40 հետազոտության արդյունքներ:

Եթե հոգեկեզվական լռությունը հեղինակն առավելապես առնչակցում է ասելիքը կողավորելու հետ, ապա «ինտերակտիվ լռությունը», ըստ Թ. Ջ. Բրունոյի, խիստ կապված է հատկապես հաղորդակցային իրավիճակների և հանգամանքների հետ, իսկ համանման լռության ակտերի ժամանակ ընդունվում են որոշումներ, կատարվում եզրահանգումներ և արվում դատողություններ [տե՛ս Bruneau, 1973, 28]:

Չասարակական-մշակութային լռության դեպքերին անդրադառնալիս տեսաբանը համառոտ գուգահեռներ է անցկացնում արևմտյան և արևելյան մշակույթներում լռության ընկալումների առնչությամբ՝ պնդելով, որ առաջինի պարագայում «լռություն» Ֆենոմենն առավելապես հարաբերակցվում է բարձրագույն հեղինակության կամ Աստծո գաղափարի հետ, մինչդեռ արևելյան մշակույթներում ինտերակտիվ լռությունը հաճախադեպ է [տե՛ս Bruneau, 1973, 37]: Մեր կարծիքով, արևմտյան մշակույթում Աստծո և լռության միջև Թ. Ջ. Բրունոյի նկատած աղերսները հնարավոր է պայմանավորված լինեն արևմուտքի երկրների մեծամասամբ քրիստոնեական լինելու հանգամանքով, որի ծիրում ձևավորվել է ապոֆատիկ (ժխտական) աստվածաբանությունը՝ հիմնված Աստծո բացարձակապես անճանաչելի լինելու սկզբունքի վրա [տե՛ս Մեյենդորֆ, 2013, 263], ինչը, ըստ էության, լռության յուրօրինակ դրսևորում է:

Թ. Ջ. Բրունոն չի շրջանցել լռության որոշ դրսևորումներ նաև քաղաքական կյանքում՝ նշելով, որ դրանք կիրարկվում են ինչպես իշխանությունների կողմից սեփական հեղինակությունն ու դիրքը պահպանելու նպատակով, այնպես էլ շարքային

քաղաքացիների կողմից իրենց բողոքն արտահայտելու համար [տե՛ս Bruneau, 1973, 39]: Լռության համանման ակտերը թերևս կարելի է անվանել գործառական, քանի որ դրանք հիմնականում ոչ թե որոշակի ուղերձ փոխանցելու նպատակով են գործածվում, այլ որպես մի գործիք համապատասխան նպատակներն իրագործելիս:

Այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ Թ. Ջ. Բրունոյի ծավալուն հոդվածում, թեև հնչում են լռության ֆենոմենի հետագա բազմակողմ ուսումնասիրությունների համար մի շարք կարևոր հարցադրումներ, քննարկված դեպքերն առավելապես դիտարկվում են որպես անձի հոգեբանական վարքագծի որոշակի դրսևորումներ: Լռության հաղորդակցային բնույթը հաշվի առնելով հանդերձ՝ հեղինակը հստակ չի տարորոշել որոշակի նախադրույթ (պրոպոզիցիա) պարունակող դեպքերը մյուսներից: Յետևաբար, կարելի է ենթադրել, որ ուսումնասիրությունների այս փուլում դեռևս չէր կարևորվում լռության մեջ հաղորդակցային դիտավորության առկայության կամ բացակայության հանգամանքը:

1980-ական թվականներին հրապարակված հոգելեզվաբանական ուսումնասիրություններում (Duez, 1982, Smith, 1984, Crown and Feldstein, 1985) լռությունը (դադարներ, հապաղումներ), դիտարկվում է հարալեզվական (paralinguistic) համակարգին պատկանող այնպիսի երևույթների զուգահեռ, ինչպիսին են ձայնի բարձրությունը, տեմպը, հաճախականությունը և այլն: Այսպես, հաղորդակցության ընթացքում լռության և ձայնի փոխհարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված աշխատանքում Ս. Լ. Քրաուն և Ն. Ս. Ֆելդսթեյնը, դատելով դադարների տևողությունից, եզրահանգումներ են կատարում ինչպես խոսողի, այնպես էլ ունկնդրի հոգեվիճակի վերաբերյալ [տե՛ս Crown and Feldstein, 1985, 38]:

Տարբերակելով առանց ձայնի և ձայնի ուղեկցությամբ դադարները՝ Դ. Դյուզն ուսումնասիրել է ֆրանսիացի տասը քաղաքական գործիչների ելույթներ և հարցազրույցներ, որոնցում հաշվի է առել դադարների հաճախականությունը,

տևողությունը և բաշխումը: Յեղիսակը հանգել է այն եզրակացության, որ ձայնի ուղեկցությամբ դադարներն ավելի հաճախաբար և երկար են մասնավորապես քաղաքական գործչի կյանքին, առօրյային վերաբերող հարցազրույցներում, մինչդեռ գրեթե լիովին բացակայում են քաղաքական ելույթներում [Duez, 1982, 27], ինչը թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինները նախապես մշակված են, իսկ ելույթ ունեցողներն էլ սովորաբար ժամանակ են ունենում նախապես դրանք էլ սերտելու համար:

Դ. Դյուզի ուսումնասիրության հետաքրքիր փաստերից է նաև այն, որ առանց ձայնի դադարները քաղաքական ելույթներում 50 տոկոսով գերազանցում են հարցազրույցներում դրսևորված համանման ակտերին, ինչից հեղիսակը եզրակացնում է, որ «այդ դադարներից մի քանիսը, մասնավորապես անսպասելիներն ու ամենաերկարները, հնարավոր է ունենան ոճական գործառույթ» [նույն տեղում]: Ինչպես նկատում ենք, թեև տեսաբանը այս պարագայում ակնարկում է լռությունը միտումնավոր կիրարկելու մասին, այդուհանդերձ բացակայում է հաղորդակցային դիտավորությունն այն առումով, որ քաղաքական գործիչները այդ կերպ փորձել են ոչ թե որոշակի ուղերձ փոխանցել, այլ հավանաբար մեծացնել համապատասխան խոսքի ազդեցությունը իրենց լսարանի վրա:

Յաղորդակցային տիրույթում լռության էզվագործաբանական ուսումնասիրությունների համար ըստ մեզ՝ կարևորագույն հանգամանքի՝ հաղորդակցային դիտավորության առկայությունը բացորոշելու հիմնարկեքին վիճակված էր սպասել ևս մի տասնամյակ, երբ 1993 թ. լույս տեսավ լեհ էզվաբան Ա. Յավորսկու «Լռության ուժը» գիրքը, որտեղ հեղիսակը խնդրին նայում է առավելապես հասարակական և գործաբանական դիտանկյունից՝ հինգերորդ գլխում խոսելով նաև արվեստ-լռություն հարաբերության մասին:

Ինչպես արդեն վերը նշվեց, լռության մեջ հաղորդակցային դիտավորության առկայությանն անդրադարձներ եղել են նաև

նախկինում, սակայն Ա. Յավորսկին խոսել-չխոսել հակադրության փոխարեն առաջարկում է երևույթը դիտարկել ավելի լայն համատեքստում, երբ չեն ասում որոշակի բան: Յեղիևակը փորձում է հիմնավորել իր այս մոտեցումը՝ գրքի 72-77 էջերում ներկայացնելով իրավիճակ, որում խոսողը ոչ թե լուռ է, այլ պարզապես գերծ է մնում խոսակցի կամ համապատասխան լսարանի կողմից ակնկալվող ասելիքին հնչյունային կադապարտալուց:

Մեր կարծիքով՝ այս մոտեցումը կարող է օգտաշատ լինել լռությանը քաղաքական խոսույթում դիտարկելիս՝ հատկապես հաշվի առնելով վերջին շրջանում փաստարկման տեսության ծիրում խլասանավող խոսույթի նկատմամբ աճող հետաքրքրությունը [տե՛ս van Eemeren, 2009, 2010, Չոլյան, 2015], քանի որ վերջինին առնչվող վերլուծությունները նպատակ ունեն «բացորոշելու այն խոսողական ակտերը, որոնք բուն խոսույթում (actual discourse) մնում են ներակա» [van Eemeren and Houtlosser, 2009, 1]: Ի դեպ, խլասանավումը՝ որպես լեզվական երևույթ, երբեք դիտարկվում է անգամ որոշակի ազգին բնորոշ լեզվամշակութային երևույթ: Այսպես, «ճապոնացին գերադասում է չօգտագործել այնպիսի շաղկապներ, ինչպիսին են՝ «այն ժամանակվանից», «երբ», «քանի որ», «որովհետև», «հետևաբար», «այսպիսով»: Այդ և դրանց նման շաղկապները տրամաբանորեն խիստ որոշակի են դարձնում ճապոնացու խոսքը, որից նա խլասավում է» [Բրուտյան, 1987, 162]:

1990-ականներից պարբերաբար հնչում են լռության հաղորդակցային բնույթի շուրջ տարաբնույթ հարցադրումներ: Այսպես, Դ. Կուրզոնը, խոսելով կասկածյալ լռելու իրավունքի մասին, տարորոշում է միտումնավոր և ոչ միտումնավոր լռությունները՝ ակնդեղով, որ «երբ հասցեատերն ունի ընտրություն խոսքի և լռության միջև, նշանակում է վերջինը ունի իմաստ» [Kurzon, 1995, 56]:

Լռություն-համատեքստ հարաբերությանն է նվիրված Ն. Դ. Արուտյունյանի հեղինակած հոդվածը (1994), որում դրանից զատ՝ հեղինակը նրբին դիտարկումներ է կատարում լռություն

(молчание), անդորր (тишина) և անբարբառոլթյուն (безмолвие) հասկացողությունների առնչությամբ [տե՛ս Арутюнова, 1994, 114-115]:

Ռուս լեզվաբան և նշանագետ Կ. Ա. Բոգդանովը 1998 թ. հրատարակեց ծավալուն մի աշխատանք, որում մարդաբանության դիտանկյունից բազմակողմ քննության է ենթարկում «լռություն» ֆենոմենը՝ ուսումնասիրելով այն ինչպես գրականության, այնպես էլ ազգագրության, կրոնի և հասարակական-քաղաքական խոսույթի տիրույթում: Խոսելով լռության հաղորդակցային բնույթի մասին՝ հեղինակը եզրակացնում է, որ յուրաքանչյուր «լռություն» ինչ-որ բանի մասին է և ունի ինչպես հասցեագրող, այնպես էլ հասցեատեր [տե՛ս Богданов, 1998, 55], ինչից կարելի է ենթադրել, որ լռության ակտը փոխկապակցված է հաղորդակցային գործընթացի համար անհրաժեշտ գրեթե բոլոր բաղադրատարրերի հետ:

Նույն թվականին լռության հանգամանալի ուսումնասիրություն է հրատարակում նաև Դ. Կուրզոնը, որի «Լռության խոսույթը» գրքի առաջին երկու գլուխներն առավելապես նշանագիտական դիտարկումներ են, մինչդեռ երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է իրավական համատեքստում լռության ուսումնասիրությանը: Մյուս երեք բաժիններում հեղինակը վերլուծում է համապատասխանաբար գեղարվեստական, աստվածաշնչյան և ֆիլմի հերոսների լռությունները:

2000-ական թվականներից «լռություն» ֆենոմենի նկատմամբ հարածուն հետաքրքրությունը շարունակվում է: Խնդրի առնչությամբ տարաբնույթ անդրադարձներ են լինում այնպիսի գիտակարգերում և լեզվաբանական միջգիտակարգերում, ինչպիսին են նշանագիտությունը [Почепцов, 2002], միջմշակութային հաղորդակցությունը [Nakane, 2007], լեզվի փիլիսոփայությունը [Бибихин, 2007, 29-43], գենդերային լեզվաբանությունը [Брутян, 2008, 104-105], քաղաքական խոսույթը [Freedon, 2015], միջազգային հարաբերությունների տեսությունը [Dingli, 2015] և այլն:

### **1.3. Լռելու և լռության գործառույթների տարբերակումը**

Հաղորդակցման տեսության շրջանակներում «լռություն» ֆենոմենը դիտարկելիս մենք չենք կարող շրջանցել դրա գործառույթների տարբերակման խնդիրը, որն առաջին հայացքից այնքան էլ բարդ չի թվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ թեմայի վերաբերյալ էզզվաբանական գրականության մեջ մի շարք անդրադարձներ արդեն եղել են [Крестинский, 2011, Меликян, 2000, Ephratt, 2008 և այլք]: Սակայն հենց վերջին հանգամանքն էլ մեզ խնդրահարույց է թվում, քանի որ համապատասխան աշխատանքներից շատերում խոսքը վերաբերում է լռությանը՝ որպես խոսքին (հիմնականում՝ բանավոր) հակադիր երևույթի: Մինչդեռ մեր խնդիրն է որոշարկել այն լռության գործառույթները, որի հակադիր բևեռն ասելիքն է թե՛ գրավոր և թե՛ բանավոր, այդ թվում՝ համապատասխան ուղերձի փոխանցումը լռելու միջոցով:

Ամփոփելով Վ. Վ. Բոգդանովի, Թ. Գ. Բրուկոյի և Մ. Սավիլ-Թրուակի մոտեցումները՝ Ս. Վ. Կրեստինսկին առանձնացնում է լռության հաղորդակցային 18 գործառույթ՝ 1) կոնտակտային, 2) ապակոնտակտային, 3) հուզարտահայտչական, 4) տեղեկատվական, 5) գնահատողական, 6) ռոգատիվ (հարցական), 7) ճանաչողական, 8) տարակուսանքի (hesitative), 9) ակնկալման, 10) խորապատկերային, 11) ազդելու (աֆեկտիվ), 12) ռազմավարական, 13) հռետորական, 14) շարահյուսական, 15) սոցիալական դիրքորոշման, 16) դերորոշիչ (ролемаркирующая), 17) սոցիալ-դերային, 18) արարողակարգային (տե՛ս Крестинский, 2011, 35-36):

Ուսումնասիրելով նշված գործառույթները՝ կարող ենք նկատել, որ բոլոր դեպքերում լռությունն ընկալվում է որպես խոսքի բացակայություն, իսկ հաղորդակցայինության հատկանիշի առկայության տեսանկյունից դրանք լրացուցիչ մեկնաբանման կարիք ունեն, հատկապես, եթե հաշվի առնենք հոդվածի հեղինակի եզրափակիչ նախադասությունը. «նշված գործառույթներից յուրաքանչյուրում լռությունը հաղորդակցային առումով նշանակալի է» [Крестинский, 2011, 37]:

Մենք չենք պատրաստվում վիճարկել նշված բոլոր գործառույթներում լռության հաղորդակցայինությունը, այլ



ցանկանում ենք ցույց տալ, որ դրանց առանձնացման սկզբունքը ոչ միշտ է համապատասխանում մեր դիրքորոշմանը տվյալ խնդրի շուրջ: Մասնավորապես, եթե դիտարկելու լինենք հոլգարտահայ տջական գործառույթը, Ս. Վ. Կրեստինսկու հոդվածում արդեն իսկ կարող ենք նկատել հետաքրքիր մի ձևակերպում. «Լռություները կարող է արտահայտել հաղորդակցվողների բազմաթիվ հոգեբանական վիճակներ՝ կաշկանդվածություներ, վիրավորանք, վախ [...]» [Крестинский, 2011, 35]: Ինչպես տեսնում ենք, խոսքն այն մասին չէ, թե ինչ է ցանկանում հաղորդողը/հասցեագրողը ասել, այլ՝ թե նրա համապատասխան հոգեվիճակն ինչ կարող է հայտնել նրա մասին: Այսինքն՝ համանման ակտերում բացակայում է կամային պահը կամ, ինչպես տեսաբաններն են անվանում, հաղորդակցային դիտավորությունը, որն առանցքային նշանակություն ունի մեր դիրքորոշման դեպքում:

Մարդու հաղորդակցային վարքում լռության գործառույթների ուսումնասիրմանը նվիրված հոդվածում Ս. Վ. Մելիքյանը, հղում կատարելով Ս. Վ. Կրեստինսկու համապատասխան աշխատանքին [Крестинский, 1993], առանձնացնում է երեք անհրաժեշտ պայման, որոնց առկայության պարագայում միայն կարելի է խոսել լռության՝ իմաստուն ենալում մասին: Դրանք են՝

1. հասցեագրողի կողմից լռության գիտակցված և նպատակադրված կիրառումը,
2. հասցեատիրոջ իրազեկվածությունը լռության նպատակադրված կիրառությանը,
3. հասցեագրողի ու հասցեատիրոջ՝ լռության նշանակության վերաբերյալ ընդհանուր գիտելիքի ներառումը [Меликян, 1998, 36]:

Նշված պայմանները հստակ հուշում են, որ լռությունն այս պարագայում դիտարկվում է որպես հաղորդակցային երևույթ, որում կարևոր դեր ունի տվյալ ակտի հեղինակի նպատակադրվածությունը: Լիովին ընդունելով Ս. Վ. Մելիքյանի նշած պայմանները, սակայն, չենք կարող միանշանակ վերաբերվել

նույն սկզբունքով առանձնացված բոլոր գործառույթներին, քանի որ, մեր կարծիով, դրանցից մի քանիսի պարագայում անհրաժեշտերեք պայմանները բավարարված չեն:

Այսպես, «խորհրդածելու (մեդիտատիվ) գործառույթն անհրաժեշտ է, որ [նա, ով պատրաստվում է խոսել,] հավաքի մտքերը, ծանրութեթև անի հաջորդ խոսքը, գտնի փաստարկներ հաղորդակցվողին համոզելու համար» [Меликян, 1998, 37]: Ինչպես կարելի է նկատել, լռությանն այստեղ պարզապես բնական պայման է հաղորդողի և հաղորդակցվողի միջև ընթացող երկխոսության համար: Առօրյայում հեշտությամբ կարելի է բազմաթիվ օրինակներ գտնել, երբ հաղորդակցվողներից մեկը, առանց որևէ հատուկ ուղերձ ներդնելու, պարզապես մի պահ լռում է հերթական խոսքի համար մտքերը հավաքելու նպատակով՝ ամենևին չձգտելով իր այդ ակտով որևէ բան հաղորդելու դիմացինին:

Եթե վերոնշյալ դեպքում մեզ անհրաժեշտ եղավ ենթադրել, որ կան հավանական իրավիճակներ, որոնցում նշված գործառույթը պայմանավորված չէ հաղորդակցայնությամբ, ապա զգացական (էմոտիվ) դադարի պարագայում հոդվածի հեղինակն ինքն է նշում, որ «զգացմունքային լարվածության պատճառով [հաղորդակցվողը] անկարող է լինում կամ ցանկություն չի ունենում խոսելու» [Меликян, 1998, 38]: Այսինքն՝ հնարավոր են դեպքեր, երբ լռությունը պայմանավորված է տվյալ պահին խոսելու անկարողությամբ:

Այսպիսով, Ս. Վ. Մելիքյանի՝ լռության գործառույթների դասակարգումը ևս չի համապատասխանում մեր (կարծում ենք, որ ոչ դեպքերում նաև իր) դիրքորոշմանը, ըստ որի՝ ակտի հեղինակը պետք է որոշակի նախադրույթ (պրոպոզիցիա) կա՛մ հաղորդի, կա՛մ թաքցնի լռությամբ:

Լռությանը հանգամանալի անդրադարձ է կատարել Մ. Էֆրատը [Ephratt, 2008], որն իր տեսակետը շարադրելիս գուգահեռներ է անցկացրել Ռ. Յակոբսոնի հաղորդակցության կադապարի հետ: Վերջինս մասնավորապես առանձնացնում է հաղորդակցման 6 գործառույթ՝ վերաբերման (ռեֆերենտային),

հուճարտահայ տչական, կամային (կոնստիվ), ֆատիկ, մետալեզվական և բանաստեղծական [տե՛ս Якобсон, 1975, 198-203]:

Մ. Էֆրատը համանուն գործառույթները կիրառել է լռության նկատմամբ՝ բնորոշելով այն «պերճախոս» (eloquent), ինչն ասելով՝ նա նկատի ունի «մի ակտիվ միջոց՝ ընտրված խոսողի կողմից սեփական ուղերձը հաղորդելու համար» [Ephratt, 2008, 1913]: Նա նաև տարբերակել է պերճախոս լռությունը երեք այլ երևույթներից՝ անդորրից (stillness), դադարից և լռեցնելուց: Ըստ Մ. Էֆրատի՝ առաջինը հակադրվում է ոչ թե խոսքին, այլ աղմուկին: Երկրորդը որոշարկվում է ոչ թե ըստ դրա բովանդակության կամ արտաքին հարաբերության, այլ ըստ հերթագայող բնույթի: Իսկ վերջինը կապված է ոչ թե արտահայտվելու, այլ ուրիշին նման հնարավորությունից զրկելու հետ [տե՛ս Ephratt, 2008, 1912-1923]:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, մասնավորապես այն հանգամանքը, որ Մ. Էֆրատը դիտարկում է լռությունը լեզվի հաղորդակցային գործառույթների յակոբսոնյան դասական կառավարին գուճահեռ՝ կարելի է ասել, որ ըստ հոդվածի հեղինակի՝ պերճախոս լռությունը պետք է անհրաժեշտաբար հաղորդակցային լինի: Սակայն այստեղ ևս կարելի է որոշ հետաքրքիր նկատառումներ անել:

Վերաբերման գործառույթ կատարող լռության օրինակների թվում Մ. Էֆրատը, իր խոսքով, որոշ ծայրահեղ դեպքեր է առանձնացնում, որոնցից մեզ հետաքրքրական թվաց հետևյալը. գեղարվեստական մի գրքի էջ 25-ն ամբողջությամբ սև է, և միայն էջի համարն ու վերևում հեղինակի անունն է առկա: Վերջինս, ըստ Էոթյան, էջը նման կերպ ձևավորելով, ակնարկում է գրքի հերոսներից մեկի մահը [տե՛ս Ephratt, 2008, 1915]: Քանի որ հաղորդակցային լռությունն ասելով՝ մենք հասկանում ենք լռության այնպիսի ակտ, որը հակադրվում է ասելիքին, այլ ոչ թե լեզվին, վերոնշյալ օրինակը, ըստ մեզ, ոչ թե լռությունն է, այլ նշանային մի համակարգը, այս դեպքում՝ բնական լեզուն, մեկ այլ համակարգով՝ գույների խորհրդանշային լեզվով փոխարինելն է: Այս օրինակը հետաքրքիր կերպով կարելի է աղերսել մեկ այլ

գրքի հետ, որը լույս է տեսել Չայաստանում: Յեղիակը, վերնագրելով այն «Կաշառակերության և ընտրակաշառքների դեմ պայքարի բոլոր ձևերը Չայաստանում» [Խաչիկյան, 2012], գրքի բոլոր էջերը պարզապես դատարկ է թողել՝ ակնհայտորեն ակնարկելով, որ նման ձևեր Չայաստանում պարզապես չկան: Կարծում ենք, որ այս օրինակն ավելի դիպուկ է հաղորդակցային լռության համար, քանի որ դրանում դատարկ էջերի սպիտակը առանձնահատուկ ոչինչ չի ակնարկում տեղեկության բացակայությանը ու նից գատ: Իհարկե, սպիտակը նույնպես գույների խորհրդանշային համակարգի միավոր է, սակայն այս դեպքում այն նշութավորված չէ: (Ի դեպ, այս ենթադրությունները՝ կապված գրքի ուղերձի և էջերի գույնի հետ, մենք ճշտել ենք անձամբ հեղինակից:) Այսպիսով, 2. Խաչիկյանի կիրառած հնարքը կարելի է դիտարկել որպես հաղորդակցային լռության օրինակ, որն այս պարագայում կատարում է վերաբերման գործառույթ:

Չուզական գործառույթի մասին խոսելիս խնդիրն առավել բարդ է, քանի որ հույզերը հաճախ արտահայտվում են ակամայից, հետևաբար, եթե համապատասխան իրավիճակում լռությամբ է արտահայտվում տվյալ հույզը, հարց է առաջանում՝ որքանով է այդ ակտը հաղորդակցային, այսինքն՝ պարունակում է արդյոք հաղորդակցային դիտավորություն: Բացի այդ, խիստ հուզված պահերին մարմնի լեզուն տարբեր կերպ, հաճախ ակամայից, բավականին տեղեկություն կարող է հաղորդել: Այսինքն՝ այստեղ ևս առնչվում ենք հաղորդակցային մի համակարգը մյուսով փոխարինելու դեպքերին:

Լռության հուզական գործառույթին անդրադառնալիս Մ. Էֆրատը խոսում է պերճախոս լռությունը որպես որոշակի գործողություն (enactment) դիտարկելու մասին: «Դրանք զգացմունքների ոչ խոսքային արտահայտություն են՝ իրականացված վարքագծի ձևով, որպես իրական աշխարհի գործողություններ» [Ephratt, 2008, 1918]: Ինչպես տեսնում ենք, հոդվածագիրն ինքն էլ չի հերքում, որ լռության նման դրսևորումները վարքագծային են:

Մ. Էֆրատը հետաքրքիր դիտարկումներ է կատարում նաև լռության կամային (conative) գործառույթի վերաբերյալ: Վերջինս հիշեցնում է խոսողական ակտերի տեսության մեջ հայտնի պերլոկուտիվ ակտը: Այսինքն՝ սաբաբերի այնպիսի կիրարկում է, որը կարծես ակտիվացնում է խոսակցին, մղում նրան որոշակի գործողության [տե՛ս Ephratt, 2008, 1919]: Մ. Էֆրատը լռության կամային գործառույթի երեք տեսակ է առանձնացնում. 1) լռությունը՝ որպես խոսույթի ցուցիչ, 2) հասկացութային կամային լռություն և 3) խոսողի լռությունը՝ որպես խոսողական ակտ:

Առաջինի մասին խոսելիս հեղինակը նշում է, որ լռությունն այս դեպքում խոսույթի կառուցվածքի բաղկացուցիչ է: Այն հուշում է հասցեատիրոջը, որ այժմ նրա հերթն է խոսելու [տե՛ս Ephratt, 2008, 1920]:

Նույն տեղում հասկացութային լռությանն անդրադառնալիս Մ. Էֆրատը, հիշատակելով աստվածաշնչյան հայտնի տողերը («Քո տեր Աստուծոն անունն զուր տեղը չպիտի արտասանես» [Ելք, 20:7]), ասում է, որ «որևէ մշակույթում անունը դերանվամբ փոխարինելը ակնկալվող լռություն է» [Ephratt, 2008, 1920]: Մարդիկ դարեր շարունակ հավատացել են տարբեր մոգական ուժերի և կենցաղում դրանց անունը տալիս որոշակի զգուշավորություն են դրսևորել: Լռության համանման դեպքերը հոդվածագիրը համարում է կանխարգելող, երբ «խոսողը խուսափում է արթնացնել առասպելական (mythic) ուժերին, որոնք ակտիվանում են, երբ դրանց անունները բարձրաձայնվում են» [նույն տեղում]:

Որպես կամային լռության երրորդ տեսակ՝ տարբերակվում են ուղղակի և անուղղակի խոսողական ակտերը: Այսպես, որպես պատիժ մեկի հետ չխոսելը լռության՝ ուղղակի խոսողական ակտի դրսևորում է: «Ութեն պատիժն ինքնին արտալեզվական երևույթ է, այս պարագայում, այդուհանդերձ, այն իրականացվում է լեզվի տիրույթում» [Ephratt, 2008, 1920-1921]: Յետաքրքրական է, որ բազմաթիվ դեպքերում լռության բովանդակային պլանը լիովին

հայ տնի էլ ինու մ խոսակցին, քանի որ խոսողը ի սկզբանե որպես սպառնալիք հայ տնել էլ ռելու իր մտադրության մասին:

Լռություները՝ որպես անուղղակի խոսողական ակտ, նույնպես տարբեր կերպ է դրսևորվում խոսքում. այն կարող է հանդես գալ ինչպես հռետորական հարցերում, այնպես էլ ինչ-որ բան խնդրելիս: Հասկանալի է, որ առաջինի դեպքում խոսակիցը չի արձագանքում հարցին, որի պատասխանը սովորաբար ակնհայտ է, իսկ երկրորդի պարագայում խոսողը, խոսքի տնտեսման, ոճական կամ այլ նկատառումներից ելնելով, զեղչում է նախադասության մի հատվածը: Օրինակ՝ մեկից որևէ բան խնդրելիս խոսողը կարող է միայն տվյալ առարկայի անուներ տալ որոշակի հարցական հնչերանգով [Ephratt, 2008, 1922-1923]:

Ֆատիկ գործառույթը, որը, ըստ Յակոբսոնի՝ «լեզվի այն միակ գործառույթն է, որն ընդհանուր է և՛ թռչունների, և՛ մարդկանց համար» [Якобсон, 1975, 201], կարող է դրսևորվել նաև լռությամբ: Մ. Էֆրատի խոսքով՝ «պերճախոս լռություներն առանձնահատուկ ուժեղ գործառույթ է իրականացնում ֆատիկ իմաստի փոխանցման մեջ» [Ephratt, 2008, 1923]: Համադրելով տարբեր հեղինակների մոտեցումները՝ Մ. Էֆրատը նշում է, որ այս գործառույթի շնորհիվ որոշակի մերձավորություն (ինտիմություն) է հաստատվում երկու անհատի միջև [տե՛ս Ephratt, 2008, 1924]: Փաստորեն, այստեղ հեղինակը «լռություներն» ասելով հիմնականում նկատի ունի չխոսելը: Քանի որ մեզ առավելապես հետաքրքրում է լռություներն-ասելիք հակադրությունը, ապա կարելի է մի հետաքրքիր նկատառում անել. կան իրավիճակներ, երբ լռություները ճնշող է, և որոշակի հանրության շրջանում հայտնի են, այսպես կոչված, «ապահով թեմաներ», որոնց շուրջ կարելի է զրուցել: Դրանցից են, օրինակ՝ բրիտանացիների համար եղանակը և սպորտը [տե՛ս Հովհաննիսյան ևն, 2006, 159]: Այսինքն՝ կան իրավիճակներ, երբ մարդիկ խուսափում են լռություներից և փորձում են «ծածկել» այն խոսքով:

Տրամաբանական հարց է ծագում. ինչո՞ւ են մարդիկ, այդուհանդերձ, խուսափում լռություներից: Մեր կարծիքով՝ նման

իրավիճակներում խոսակիցները մտահոգվում կամ անհանգստանում են, որ իրենց վարքագիծը (ժեստերը, կեցվածքը, դիմախաղը) կարող է կամ մատնել, կամ պարզապես անցանկալի տեղեկատվություն տալ խոսակցին: Այդ անկանոն հոսքը կարգաբերելու, խոսակցությունն իրենց ձեռնտու հունով տանելու նպատակով նման իրավիճակներում սկսվում է հաճախ անկարևոր զրույց:

Մենք չենք հերքում, որ հաղորդակցային նման ակտերը հնարավոր է նալ պատճառ ունենան, այլ ցանկանում ենք նշել, որ որոշ դեպքերում խոսքն ինքնին կարող է լռելու գործառույթ կատարել:

Այսպիսով, տեսաբաններից ոմանց ուշադրությունը գրաված *լռությունը* անձանոթների կամ ոչ այնքան մտերիմ մարդկանց նախահաղորդակցային որոշակի իրավիճակ է, որի տևականությունը հաճախ հանգեցնում է հոգեբանական լարվածության: Վերջինս հաղթահարվում է խոսքի միջոցով, որն էլ կարգաբերում է արտալեզվական և վերհատույթային տեղեկատվությունը՝ որոշակիորեն «ֆիլտրելով» այն: Յետևաբար, այս պարագայում հաղորդակցային լռությունն ենք համարում ոչ թե նրանց *չխոսելը*, այլ *խոսելով որոշակի տեղեկատվության կանխումը*: Ի դեպ, այս պարագայում *տեղեկատվություն* ասելով նկատի է առնվում նաև այն *կարծիքը*, որը խոսակցի մոտ կարող է ձևավորվել մեր վարքագծից. օրինակ՝ մեր նյարդային դիմախաղից դիմացինը կարող է ենթադրել, որ լարված կամ նյարդայնացած ենք, որը մեզ համար, հնարավոր է, տվյալ իրավիճակում խիստ անցանկալի տեղեկատվություն լինի: Ու թեև այն, ինչ փորձում ենք խոսքով *ծածկել*, ըստ էության, վերհատույթային միջոցներով *ակամա* փոխանցվող տեղեկատվություն է, դրական խարգելման ակտը հիմնականում *գիտակցված* և *կամային* է:

Յամադրելով բերված օրինակներն ու տեսակետները՝ մենք ցանկանում ենք նշել, որ լռության գործառույթների մասին խոսելիս անհրաժեշտ է նախ որոշարկել՝ խոսքը լռելու՝ որպես կամային ակտի°, թե՞ լռության՝ որպես որոշակի իրավիճակի կամ

ակամա վարքագծի մասին է: Իհարկե, երբ խնդիրը նման որոշարկունքը չէ, այս երկու հասկացությունները կարող են (ինչպես տեսանք, հաճախ այդպես էլ արվում է) կիրարկվել փոխարինաբար: Սակայն անհրաժեշտության պարագայում պետք է համապատասխան եզրերով սահմանազատել այս երկու երևույթները:

Մեր կարծիքով նշված հայերեն եզրերն առնվազն մասամբ բավարարում են նման սահմանազատում կատարելու խնդիրը: Այդուհանդերձ, չենք բացառում, որ հատկապես հայագետների ուշադրությունը գրավելու պարագայում հնարավոր է հետագայում առաջարկվեն առավել հաջող տարբերակներ:

Քանի որ վերոշարադրյալ մեր դիտանկյունից հաղորդակցային կարող ենք համարել առավելապես լռելու ակտը, ապա, կարծում ենք, ճիշտ կլինի ամփոփելով նշել դրա երկու առանցքային գործառույթները. առաջին՝ տեղեկատվության փոխանցումը, երկրորդ՝ այդ տեղեկատվությունը թաքցնելը: Իհարկե, վերջիններս էլ իրենց հերթին կարող են ունենալ այլ ենթագործառույթներ, սակայն դրանց մանրամասն քննությունն առանձին անդրադարձի կարիք ունի:

#### **1.4. «Լռություն» ֆենոմենը՝ ըստ հաղորդողի և հաղորդակցվողի**

Ներկայումս հաղորդակցման տեսության շրջանակներում «լռություն» ֆենոմենին վերաբերող բազմաթիվ անդրադարձներ կան [Ephratt, 2008, Jaworski, 1993], որոնք հող են ստեղծում նոր քննարկումների համար: Սույն ենթագլխում ցանկանում ենք մասնավորապես առանձնացնել հաղորդակցային լռության հիմնական դրսևորումները՝ ըստ հասցեագրողի և հասցեատիրոջ, ինչպես նաև տարբերակել նշույթավորված և չնշույթավորված դեպքերը:

«Լռությունը» հաղորդակցային միավոր դիտարկելիս ուղեկցային ենք ընդունել Ջ. Ռ. Սերլի այն մոտեցումը, որ նախադասության առկայացումը համապատասխան խոսքային իրադրությունում իլոկուտիվ ակտ է, իսկ վերջինս էլ պետք է



դիտարկել որպես լեզվական հաղորդակցման նվազագույն միավոր [տե՛ս Сербь, 1986, 152]: Այլ կերպ ասած՝ հաղորդակցային մտադրությամբ է պայմանավորված համապատասխան միավորի գոյությունը:

Այս մոտեցումը բավականին շահեկան է սույն աշխատանքում մեր տեսակետը շարադրելու համար, քանի որ հաղորդակցման տեսության մեջ առանցքային է համարվում հենց հասցեագրողի և հասցեատիրոջ միջև ծավալվող խոսքային ակտը, որը, խոսողական ակտերի տեսության համաձայն, ներկայացվում է երեք մակարդակով՝ լոկուտիվ, իլոկուտիվ և պերլոկուտիվ:

Լեզվաբանական գրականության մեջ «լռությունը» հաճախ դիտարկվում է որպես բանավոր խոսքի բացակայություն [տե՛ս Picard, 1952]: Մեզ, սակայն, առավելապես հետաքրքրում է լռությունը՝ որպես ակնկալվող ասելիքի բացակայություն կամ խոսքի այնպիսի շարադրանք, որի միջոցով համապատասխան ուղերձը փոխանցվի առանց վերջինիս բացորոշ նյութականացման:

Մեր մոտեցման համաձայն՝ խոսքն ու լռությունը գտնվում են դիալեկտիկական հակադրամիասնության մեջ: Նկատի ունենք ոչ թե այն, որ հաղորդակցային ակտում դրանք պարզապես բնականորեն հերթագայում են մեկը մյուսին, այլ այն, որ մե՛րթ լռությունն է շրջանակում խոսքը, մե՛րթ խոսքն է ուրվագծում լռությունը՝ նման այն նկարին, որը ստացել են՝ ներկանյութով ծածկելով կտավի բոլոր հատվածները՝ բացի անհրաժեշտ պատկերը ստանալու համար թողնված մասից: Գիտական տեքստում նման պատկերավոր միջոցի դիմելով՝ մենք ցանկանում ենք ցույց տալ, որ սույն աշխատանքում «լռությունը» հաղորդակցային դիտարկելու համար անհրաժեշտ պայման է համարվում դրա իլոկուտիվ լինելու հանգամանքը: Այլ կերպ, լռության ակտը պետք է ունենա հաղորդակցային նպատակ:

Մեծ հուզմունքից, այսպես ասած, պապանձվելը կարող է հատկանշային ցուցիչ լինել, բայց ոչ հաղորդակցային նշան, քանի որ զուրկ է հաղորդակցային դիտավորությունից (ինտենցիոնալությունից). այն պարզապես ցույց է տալիս ինչ-որ

մեկի հոգեվիճակը: Ոչ միտումնավոր լռելը, կարելի է ասել, մեկնաբանելի է, բայց ոչ՝ հաղորդակցային: Օրինակ՝ ծառից խնձորի վայր ընկնելը ենթադրել է տալիս, որ կա ձգողականության ուժ, սակայն այդ ակտն ինքնին հաղորդակցային չէ: Այնուամենայնիվ, խնձորի ընկնելն անգամ կարող է վերածվել հաղորդակցային ակտի, եթե ենթադրենք հետևյալ իրավիճակը. խոսակիցներից մեկը ջանասիրաբար պնդում է, որ աշխարհում ոչ մի ձգողականության ուժ էլ գոյություն չունի, մյուսը, ի պատասխան դրա, վերցնում է սեղանին դրված խնձորը և վայր գցում՝ փորձելով գործնականում ապացուցել, որ ինքն է իրավացի: Այս դեպքում վայր ընկնելու/գցելու ակտն ինքնին փոխարինում է խոսքին, և, որ ամենակարևորն է, այն կատարվում է հենց այդ նպատակով:

Կարևոր է նաև որոշարկելը՝ լռությանը լեզվակա՞ն, թե՞ արտալեզվական միավոր է: Լեզվականի օգտին կարող է խոսել «գրո ձևույթի» օրինակը, այսինքն՝ ինչպես վերջինս է ընկալվում՝ որպես քերականական միավոր, այնպես էլ լռությանը խոսքում կարող է հավակնել նման կարգավիճակի:

Լռության՝ որպես արտալեզվական ֆենոմենի օգտին կարող է խոսել այն հանգամանքը, որ այնտեղ գործող նշանային համակարգերում նույնպես հնարավոր է հանդիպել նշութավորված լռության դեպքերի: Օրինակ՝ ճանապարհային երթևեկության կանոնների համաձայն՝ որոշ նշաններ դադարում են, այսպես ասած, ուժի մեջ չի նեղ, երբ փոխվում է խաչմերուկը. այսինքն, եթե խաչմերուկն անցնելուց հետո նույն նշանից կրկին տեղադրված չէ, ապա նախորդն արդեն համարվում է ուժը կորցրած [տե՛ս [www.police.am](http://www.police.am)]: Իհարկե, կարելի է այս դեպքը նաև մեկնաբանել՝ թե տվյալ պարագայում խաչմերուկը «աշխատում է» որպես որոշակի նշան: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ խաչմերուկը սկզբունքորեն ճանապարհային երթևեկության նշան չէ. և եթե համաձայն ենք, որ այն ժամանակավորապես որոշ իրադրություններում այդպես է ընկալվում, ապա, կարծում ենք, որ այդ հատկանիշը վերագրվում է դրան հենց լռության շնորհիվ,

ուստի վերջինս, կարելի է ասել, ստորոգման դեր է կատարում երթևեկության կանոնների «շարահյուսական» համակարգում:

Ընդունելով, որ լռությունը կարող է դրսևորվել նաև արտալեզվական աշխարհում՝ մենք, սակայն պատրաստվում ենք դիտարկել այն հաղորդակցային լեզվաբանության դիրքերից, թեև վերը բերված օրինակը սկզբունքորեն չի հակասում մեր որդեգրած մոտեցմանը, այն է՝ լռությունը պետք է դիտարկել ոչ թե խոսքի, այլ ասելիքի հետ հակադրության մեջ, և ոչ որպես վերջինիս բացակայություն, այլ՝ որպես *այլ կերպասելիք*:

Եթե հաղորդակցային է այն լռությունը, որի միջոցով հաղորդակցվողները տեղեկատվություն են փոխանցում, ապա անհրաժեշտ է որոշարկել, թե արդյոք լռությունը հաղորդակցային է նաև այն պարագայում, երբ հաղորդակցվողներից մեկը, չիմանալով կամ հստակ չիմանալով իրեն ուղղված հարցի պատասխանը, առնվազն մի պահ լռում է: Նման պարագայում լռողը սովորաբար միտում չունի իր այդ ակտով որևէ տեղեկատվություն հաղորդելու: Յետաբարքականն այն է, որ խոսակիցը, սակայն, հնարավոր է՝ մեկնաբանի տվյալ լռությունը: Այս հանգամանքը հուշում է, որ հաղորդակցային լինելու համար բավարար չէ, որ լռության ակտն իրականանա երկխոսության ընթացքում, քանի որ, ինչպես պարզվեց, անգամ այս պարագայում լռությունը կարող է լինել մեկնաբանելի, ինչպես ցանկացած այլ վարքագիծ (օրինակ՝ դեմքի նյարդային ջղաձգումը), սակայն ոչ հաղորդակցային:

Լռության հաղորդակցային լինելը ենթադրում է տվյալ ակտն իրականացնողի կամքի դրսևորում, հետևաբար այն պետք է լինի նրակողմից գիտակցված քայլ:

Լռության մեր սահմանումը որոշարկելու համար ևս մի հարցադրում կատարենք. խնդրո՞ւմ առարկայի հաղորդակցային լինելու համար արդյոք պարտադիր պայման է, որ շփվող կողմերն ընկալեն տվյալ լռությունը՝ որպես հաղորդակցային ակտ: Վերցնենք հայտնի մի օրինակ, երբ ԱՄՆ նախագահ Բ. Օբաման «ցեղասպանություն» եզրը չարտասանելու նպատակով գործածեց

«Meds Yeghern» [տե՛ս [www.whitehouse.gov](http://www.whitehouse.gov)] բառակապակցությունը: Ինչպես խոսքի վերլուծության շատ դեպքերում, այստեղ ևս գործունենք մի քանի շերտի հետ: Մակերեսային շերտում, իհարկե, խնդրին քիչ թե շատ ծանոթ մարդիկ ԱՄՆ նախագահի այս քայլը հնարավոր է ընկալեն որպես խուսափողական [տե՛ս Պասյան, 2010]: Խնդրին այլ դիտանկյունից նայող մարդիկ «ցեղասպանություն» եզրը չկիրառելը կարող է մեկնաբանեն հետևյալ կերպ. «Այդ բառի գործածումը չի բխում ԱՄՆ-ի շահերից»: Բերված օրինակից կարող ենք եզրակացնել, որ լռությունը հնարավոր է հաղորդակցության մի շերտում լինի հաղորդակցային, մյուսում՝ ոչ:

Ինչպես տեսնում ենք, մեր դիրքորոշումն այստեղ ևս գործում է. այսինքն՝ մակերեսային շերտում Բ. Օբամայի քայլը ոմանց կողմից ընկալվում է որպես խուսափողական վարքագծի դրսևորում, հետևաբար լռությունն այս պարագայում հաղորդակցային ակտ չի դիտարկվում: Սակայն, ինչպես նկատեցինք, այլ շերտերի վերլուծության դեպքում այն կարող է ընդունվել որպես հստակ քաղաքական ուղերձ:

Այստեղ, անշուշտ, կարելի է հակադարձել, որ անորոշ է մնում Բ. Օբամայի լռության ակտի իրական միտումը, այսինքն՝ այն, ինչ ԱՄՆ նախագահն իրականում դրանով ցանկացել է ասել: Ավելին, ոմանք կարող են ենթադրել, որ Բ. Օբաման ասել է այն, ինչ ցանկացել է, և նրա ասածը ոչ մի ենթատեքստել չունի:

Խիստ գիտական դիտանկյունից մենք, թերևս, չենք կարող ժխտել վերոնշյալ տեսակետը, սակայն անտրամաբանական կլինի եզրակացնել, որ այդ տրամաչափի քաղաքական գործիչը իր հետ աշխատող ամբողջ թիմով չի կանխատեսել առնվազն մի քանի հստակ մեկնաբանության հնարավորությունն համապատասխան լսարաններում: Չետևաբար, լռելիս նա ամենայն հավանականությամբ գիտակցել է, որ այդ ակտը որոշակի հաղորդակցային հատկանիշ, համենայնդեպս, ունի: Այսպիսով, հավատարիմ ենք մնում մեր դիրքորոշմանը, ըստ որի՝ լռության ակտի՝ հաղորդակցային հատկանիշ ունենալը կախված է այն կարևոր հանգամանքից, որ խոսակիցները պետք է ընկալեն այն

որպես հաղորդակցային միավոր: Այլ հարց է, որ միևնույն ակտը կարող է տարբեր կերպ ընկալվել, սակայն նման անորոշությունն ինչ գերծն է նաև խոսքը:

Հաջորդ հարցը, որ մեզ հուզում է, հետևյալն է. կարո՞ղ ենք արդյոք լռության ակտը վերլուծելիս հիմնվել բացառապես յուրաքանչյուր առանձին դեպքին առնչվող խոսքի ուսումնասիրության վրա՝ առանց հաշվի առնելու խոսակիցներին, ինչպես նաև սոցիալական, մշակութային, քաղաքական և այլ հանգամանքներ: Առաջին հայացքից նման վերլուծության հնարավորությունը կարող է անհնարին թվալ, սակայն, կարծում ենք, կարելի է գտնել այնպիսի օրինակներ, որոնց ուսումնասիրությունն այս դիտանկյունից արտառոց չի լինի: Քննենք երկու գրուցակիցների խոսքը.

A: Գործերդ ինչպե՞ս են:

B: Ոչ այնքան լավ: Ա՛յ եթե կարողանայիր գումարով օգնել ...

A: Ես քեզ համար փողի քսա՞կ եմ:

B: ...[լռություն]: [օրինակը մերն է]

Այս կարճ երկխոսությունում անգամ կարող ենք նկատել լռության մի քանի դրսևորում.

I) B-ի թերի նախադասությունը, որի բացակա հատվածը, թերևս, չափազանց պարզ լինելու կամ միգուցե այլ պատճառով չի արտաբերվում:

II) B-ի վերջին՝ բացարձակ լռությունը:

Այսպիսով, քանի որ մենք հաղորդակցման նվազագույն միավոր ենք համարում իլոկուտիվ ակտը, ապա վերոնշյալ օրինակում հաղորդակցվողները, ըստ էության, փոխանակվեցին մեկական ներակա իլոկուտիվ ակտով:

Ինչպես տեսանք, հնարավոր է դիտարկել այնպիսի օրինակ, որում լռության ակտի դրսևորումը կարելի է ուսումնասիրել՝ առանց դիմելու փաստական խորապատկերային տեղեկատվության,

այդ թվում՝ խոսակցության մեջ անմիջականորեն ներգրավվածներին վերաբերող: Սակայն «ցեղասպանություն» բառը մեկ այլ արտահայտությամբ փոխարինելով՝ չենք կարող նույն արդյունքն ակնկալել, քանի որ այստեղ անորոշ կմնամի բառը մյուսով փոխարինելու նպատակը: Այլ կերպասած՝ ներակա իլոկուտիվ ակտը չի հասկացվի: Ավելին, եթե անտեսվեն այն պատմական անցքերը և ներկայի աշխարհաբաղաբան համապատասխան իրադարձությունները, որոնց խորապատկերին և սովորաբար դիտարկվում է Բ. Օբամայի հայտնի ելույթը, ապա հնարավոր չէ նաև իմանալ, թե ինչ եզր է նրանից ակնկալվում: Յետևաբար, լռության ակտը կուսումնասիրենք առավել լայն համատեքստում, քանի որ մեզ համար ուղենշային ենք համարել դրա հաղորդակցային բնույթը, որի դրսևորումը բացորոշելու համար շատ դեպքերում պահանջվում է հաշվի առնել արտալեզվական միջարք հանգամանքներ:

Մեր առջև դրված նպատակն իրականացնելու համար նախ անհրաժեշտ է նշել, թե ինչ հիմնական բաղադրիչներից է բաղկացած հաղորդակցային գործընթացը, որը հակիրճ ներկայացնում ենք ստորև՝ ըստ «Հաղորդակցության տեսության հիմունքները» աշխատության՝ խմբագրված պրոֆեսոր Վ. Ա. Վասիլիկի կողմից [մանրամասն տե՛ս Основы теории коммуникации, 2006, 139-150]:

1. Ողերձի/տեղեկության աղբյուրը (հաղորդողը). որպես այդպիսին կարող են լինել անհատներ, մարդկանց խմբեր, հաստատություններ (պետական հիմնարկներ, կուսակցություններ և այլն): Անհրաժեշտ է տարբերակել ուղերձի աղբյուրը կամ այն հաղորդողին՝ պարզապես փոխանցողից: Օրինակ՝ հեռուստաընկերությունը, որին քաղաքական կուսակցությունը վճարել է, որպեսզի ցուցադրի իր քարոզարշավը, այս պարագայում փոխանցողի (կոմունիկատորի) դեր է ստանձնում:
2. Հաղորդակցային գործընթացի մյուս կարևոր բաղադրատարրերն են տեղեկության/ուղերձի կոդավորումը և ապակոդավորումը, որոնք կատարում են

համապատասխանաբար հասցեագրողն ու հասցեատերը: Այս երկու գործընթացների ապահովման համար անհրաժեշտ է, որ գործածվեն այնպիսի խորհրդանշաններ և նշաններ, որոնք կողմերից երկուսի համար էլ հասկանալի լինեն: Այստեղ հասցեատիրոջ կողմից ուղերձի վերծանումը լուրջ խնդիրներ կարող է ի հայտ բերել: Այսպես, հնարվոր է հասցեագրողին չհաջողվի իր ուղերձն այնպես կոդավորել, որ ստացողը վերծանի այն հասցեագրողի մտադրությանը հնարավորինս համահունչ: Դա կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով և հանգամանքներով, սակայն կարևորն այն է, որ մանիպուլյատիվ ուղերձի դեպքում հասցեատերը հնարավոր է տեղեկությունը վերծանի այնպես, որ բացահայտվի հասցեագրողի իրական (ներակա) նպատակը: Այս պարագայում, թերևս, չենք կարող պնդել, որ հաղորդակցումը ձախողվել է: Ավելի ստույգ կլիներ ասել, որ վերծանման շնորհիվ խափանվել է հասցեագրողի մանիպուլյացիան:

3. Մեկ այլ կարևոր բաղադրատարր է համարվում տեղեկությունը/ուղերձը, որը, որպես կանոն, կամ ասույթ, կամ տեքստ է: Ոչ խոսքային հաղորդակցության մեջ որպես ուղերձ կարող են գործել պատկերները, ֆիզիկական առարկաները և այլն: Ընդ որում, ըստ նույն աղբյուրի՝ դրանք կարելի է հասկանալ նաև որպես հաղորդակցության միջոցներ, որպես հաղորդման/ուղերձի կոդավորման եղանակներ, որոնց թվում են նաև բառերը, ձայնային ազդանշանները, ժեստերը և այլն:
4. Չաղորդակցային գործընթացի մյուս կարևոր բաղադրատարրը, այսպես ասած, այն «խողովակն» է, որով հասցեագրողից ուղերձը շարժվում է դեպի հասցեատերը: «խողովակները» կարող են լինել բնական (մարդու զգայարանները) և արհեստական (հեռախոսալար, ռադիոկապ և այլն):
5. Չաջորդն ուղերձի հասցեատերն է, որը կարող է լինել ինչպես առանձին մարդ, այնպես էլ մարդկանց որոշակի

խումբ, այսինքն՝ հաղորդակցության լսարան: Հասցեատերը վերծանում է ստացվող տեղեկությանը, և նրա այդ ունակությունն անմիջական ազդեցության ունի հաղորդակցության արդյունավետության վրա: Հաղորդակցման տեսությամբ զբաղվող մասնագետներն ուսումնասիրում են հասցեատիրոջ մոտ կանխադատությանների (prejudice), սովորությանների, կարծրատիպերի և համանման այլ առանձնահատկությունների վրա հաղորդակցության ընթացքում տեղի ունեցող ազդեցության աստիճանը, ըստ որի էլ որոշվում է, թե որքան արդյունավետ է եղել այն: Ազդեցության արդյունքում հասցեատիրոջ հայացքները և/կամ վարքը կարող է մնալ ընդհանուր առմամբ անփոփոխ, փոխվել մասնակիորեն կամ ամբողջովին: Նման ազդեցությաններից առավել անպաշտպան են համապատասխան ոլորտում քիչ տեղեկացվածները: Հետևաբար, հատկապես զանգվածային հաղորդակցության ժամանակ տեղեկատվական հոսքի վերահսկմամբ մանիպուլյատորները կարող են կարգաբերել զանգվածի գիտակցությանը իրենց ձեռնտու կերպով:

6. Արդյունավետ հաղորդակցության համար կարևոր բաղադրատարր է համարվում նաև հետադարձ կապը, որը սովորաբար առավել տեսանելի է միջանձնային անմիջական հաղորդակցության ժամանակ: Մինչդեռ, օրինակ՝ քաղաքական ընտրությունների ժամանակ, երբ թեկնածուներն ուստատեսությամբ հորդորում է իր լսարանին քվեարկել իր օգտին, անմիջական հետադարձ կապ չի նկատվում: Սակայն, ավելի ուշ միայն՝ հնարավոր է՝ անգամ ամիսներ անց, պարզ է դառնում, թե որքան արդյունավետ է եղել հաղորդակցությունը:

Այժմ փորձենք տարբերակել լռության ակտի հիմնական դրսևորմները՝ ըստ հաղորդակցության մասնակիցների: Առաջին հերթին դիտարկենք նշված երևույթը՝ հասցեագրողի հետ հարաբերության մեջ: Նախ նշենք, որ հասցեագրողը կարող է



ինչպես լռել, այնպես էլ լռեցնել հաղորդակցման գործընթացի մյուս մասնակցին կամ մասնակիցներին: Ընդ որում, նա կարող է դա անել՝ գործածելով ինչպես խոսքային միջոցներ (հանդիմանանք, հրաման և այլն), այնպես էլ ոչ խոսքային միջոցներ, ընդհուպ թե՛ հոգեբանական և թե՛ ֆիզիկական բռնություն դիմելը:

Լռելու պարագայում հասցեագրողը կարող է ընդհանրապես որևէ բառ չարտասանել, լռել կոնկերտ քանի մասին՝ խոսելով այլ բաներից, ինչպես նաև այնպես կառուցել խոսքը, որ հասկացվի մի բան, որը խոսքում բացորոշ չի արտահայտվում: Հասցեագրողի՝ լռության ֆենոմենի դրսևորման ընդհանուր ուրվագիծը տալուց հետո այժմ մանրամասն անդրադառնանք նշված կետերին:

Հասցեագրողը կարող է ահաբեկելով լռեցնել դիմացինին: Նա կարող է դա կատարել ֆիզիկապես (օրինակ՝ ծեծելով) և խոսքային միջոցով (օրինակ՝ սպառնալով): Հասցեագրողը կարող է լռեցնել նաև օրենքի ուժով: Օրինակ՝ Ազգային ժողովի նիստը վարողը՝ ըստ սահմանված կանոնակարգի, կարող է զրկել կարգազանց պատգամավորին «խոսափողից հանդես գալու իրավունքից» [www.parliament.am, 2002]: Իշխանությունները կարող են սահմանափակել լրատվամիջոցների հրապարակումները՝ երկրի «սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու և բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով» [www.a1plus.am, 2008]: Եվ վերջապես, հաղորդողը հնարավոր է պարզապես չեզոքացնի հաղորդակցվողին՝ սպանելով, բանտարկելով կամ այնպես հաշմելով, որ դիմացինը զրկվի հաղորդակցվելու ունակությունից:

Պետք է խոստովանել, սակայն, որ նշված դեպքերը հաղորդակցման տեսությանը կարող են առնչվել շատ հեռակա կարգով, քանի որ, ըստ էության, մենք գործ ունենք հաղորդողի կողմից հաղորդակցային գործընթացը տարբեր կերպ խափանելու օրինակների հետ: Մեր կարծիքով՝ վերոնշյալ տեսության շրջանակներում առավել հետաքրքրական են

հաղորդողի/հասցեագրողի լռելու ակտերը, որոնք կարելի է հետևյալ կերպ դասակարգել :

1. Հաղորդողը չի ապահովում հաղորդակցման ակնկալիքը: Այս ձևակերպմամբ՝ մենք խուսափում ենք ասելուց, որ նա չի խոսում կամ չի հաղորդակցվում, քանի որ որոշ դեպքերում հնարավոր է, որ հաղորդողը շարունակի խոսել կամ հաղորդակցվել, սակայն ոչ իր խոսքն ակնկալող համապատասխան խմբի հետ կամ/և ոչ համապատասխան թեմայի վերաբերյալ: Դակարող է տեղի ունենալ մի շարք ձևերով.
  - a. Ֆիզիկապես չմասնակցելով հաղորդակցային գործընթացին,
  - b. բացորոշ հրաժարվել հաղորդակցվելուց,
  - c. խոսել, սակայն ակնկալվող տեղեկությունը կամ ուղերձը չհայտնել: Այստեղ հնարավոր է նշել մասնավոր որոշ դեպքեր.
    - Հաղորդակցվելով հանդերձ խոսողը բացորոշ հրաժարվում է լսարանի կամ խոսակցի կողմից ակնկալվող տեղեկությունը հայտնելուց:
    - խուսափում է ակնկալվող տեղեկությունը հայտնելուց՝ փոխարենն այլ բան հայտնելով:
2. Ասում է մի բան, ակնարկում՝ մեկ այլ բան: Այստեղ հաղորդողն իր խոսքը կառուցում է այնպես, որ հաղորդակիցն ընկալում է ուղերձն առանց դրա բացորոշ տրված լինելու: Հաղորդակցային նպատակին հասնելու համար հաղորդողը կարող է կիրառել զանազան միջոցներ, այդ թվում, փաստարկման, մասնավորապես ներակայման բոլոր համապատասխան հնարավորությունները [տե՛ս Բրուսյան, 2002, 12-23]:
3. Ասելիքը փոխանցվում է արտալեզվական և հարալեզվական միջոցներով: Այստեղ պետք է երկու տարբերակ դիտարկել.
  - Առաջին՝ ասելիքը կարող է փոխանցվել նշված միջոցներով հաղորդակցվողից անկախ: Օրինակ՝ գրույցի վերաբերյալ բացասական վերաբերմունքի մասին կարող է մատնել

հաղորդողի դեմքի արտահայտությունը, որը նրա մոտ դրսևորվել է անգիտակցաբար: Թեև այս երևույթների մասին հաճախ է խոսվում և Լեզվաբանական գրականության մեջ. սույն աշխատանքում մենք դրան մանրամասն չենք անդրադառնա, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, մեզ հետաքրքրում է հաղորդակցությունը հիմնականում որպես կամային դրսևորում:

- Երկրորդ՝ հաղորդողը միտումնավոր դիմում է արտալեզվական և/կամ հարալեզվական միջոցների ասելիքը հասցեատերին հասցնելու համար: Քանի որ մենք հակադրում ենք Լռությունը ոչ թե ձայնին, այլ ասելիքին, հետևաբար մեզ առավելապես հետաքրքրում են այն դեպքերը, երբ հաղորդողը նշված միջոցներով փոխանցում է ասելիքը որպես ակնարկ: Հակառակ պարագայում, եթե արտալեզվական կամ հարալեզվական միջոցը բացորոշ ուղերձ է պարունակում, ապա այն մեր ուսումնասիրության ծիրից դուրս ենք թողնում: Այդպիսին կարելի է համարել, օրինակ՝ երթևեկության նշանը, որը, ըստ էության, միանգամայն հասկանալի է վարորդների և/կամ հետիոտների համար: Այդ նշանները և դրանց ընկալումը կանոնակարգող օրենքները ծառայում են պարզապես որպես հաղորդակցային և Լեզվի որոշակի տեսակ: Համանման մեկ այլ, թերևս ավելի վառ օրինակ է համրերի կողմից կիրառվող ժեստերի և գուն, որը մենք նույնպես Լռության դրսևորում չենք դիտարկում, քանի որ հակադրությունն այս պարագայում ոչ թե ասելիքի, այլ պարզապես հնչյունական և Լեզվի հետ է:

4. Բացորոշ Լռելը՝ որպես հանրանշանակ մշակութային ակտ: Օրինակ՝ գոհերի հիշատակը հոտնկայս մեկ րոպե Լռությամբ հարգելը սոցիալ - մշակութային որոշակի

նշան է, որը, որպես կանոն, ընկալելի է տվյալ հասարակության շրջանում: Իհարկե, առաջին հայացքից այս օրինակը կարծես հակասում է մեր սկզբունքին, այն է՝ ասելիքի հետլուծության հակադրությանը, սակայն, եթե այն համեմատենք վերը նշված դեպքերի հետ, ապա կարող ենք նկատել, որ այս պարագայում, ի հակադրությունն ասելիքի, լուծությունն ընտրվել է որպես ուղերձի փոխանցման առավել ազդու միջոց: Մինչդեռ վերը բերված օրինակներում (երթևեկության նշանները, խուլ ու համրերի լեզուն) ասելիքը բնական լեզվով փոխանցելը գործնականում անհնարին է: (Իհարկե, անհնարին է ոչ այն առումով, որ դրանցով արտահայտվածը հնարավոր չէ փոխանցել խոսքով, այլ այն, որ այստեղ ասելիքը փոխանցողը ընտրության առաջ կանգնած չէ, այսինքն՝ գործածել բնական լեզու, թե մեկ այլ նշանային համակարգ:) Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ մեր քննարկման համատեքստում հնարավոր է հանդիպել նաև լուծության ոչ մանիպուլյատիվ կիրարկման դեպքերի: Ի դեպ, նման հանրանշանակ լուծության սոցիալ-մշակութային դրսևորումները կարող են կասկածի տակ առնել այն դրույթը, որ «լուծության առանձնահատկությունը լուկուտիվ ակտի բացակայության մեջ է» [Меликян, 2000], քանի որ այս պարագայում լռելը, որպես լուկուտիվ ակտ, գրեթե հավասար է ինքն իրեն, այսինքն՝ «ես լուծում եմ»-ին, որն էլ իր հերթին, որպես իլուկուտիվ ակտ, կարող է նշանակել, օրինակ՝ «ես հարգում եմ զոհվածների հիշատակը»: Իհարկե, մենք հասկանում ենք, որ «լուկուտիվ» եզրը Ջ. Օստինն ի սկզբանե գործածել է նկարագրելու համար խոսելու բուն ակտը [Остин, 1986, 84], սակայն, եթե փորձենք փոքր-ինչ ընդլայնել դրա իմաստային դաշտը՝ դիտարկելով այն հաղորդակցման տեսության շրջանակներում, ապա կարող ենք ասել, որ լուկուտիվ ակտը վերաբերում է ուղերձի փոխանցման ցանկացած բացորոշ միջոցին, այդ թվում՝ լուծությանը, քանի որ դժվար է «ես

լ ռու մ ե մ»-ը հնարավորինս դիպուկ արտահայտել որևէ այլ կերպ, քան պարզապես լ ռ ե լ ո վ:

5. Վերը շարադրված տեսակետին մոտ է լ ռ ե լ ը՝ որպես կատարողական (պերֆորմատիվ) ակտ դիտարկելը, միայն թե այս դեպքում տվյալ ակտի հեղինակը ոչ թե լ ռ ու մ է, որպեսզի «ասի» մեկ այլ բան, այլ լ ռ ու մ է, քանի որ առաջին հերթին ցանկանում է ասել, որ հրաժարվում է խոսել ու ց, այսինքն՝ այս պարագայում ոչ միայն լ ո կ ու տ հ ի վ ակ տ ն է համապատասխանում լ ռ ե լ ու ն, այլև ի լ ո կ ու տ հ ի վ ը: Կրկին զուգահեռներ անցկացնելով Ջ. Օստինի համապատասխան եզրի հետ՝ ըստ որի՝ որոշակի ասույթների արտաբերումը կոնկրետ իրադրությունում հավասարազոր է կոնկրետ գործողություն կատարելուն [Остин, 1986, 27], մենք ցանկանում ենք առանձնացնել լ ռ ու թյ ա ն ակ տ հ այ ն ա փ ս ի դեպքեր, որոնց պարագայում ակտը նույնանում է սեփական բովանդակությանը՝ այն ուղերձին, որը կրում է: Նման օրինակ կարելի է համարել ի նշան բողոքի՝ սեփական բերանը կարելի է [տե՛ս Շոդիկյան, 2014]: Իհարկե, նման դեպքերում չի բացառվում տվյալ գործողության հնարավոր տարբեր մեկնաբանությունների առկայությունը՝ հատկապես հաշվի առնելով նման գործողություններում պերլոկուտիվ ու ժի խիստ ընդգծվածությունը, սակայն անհերքելի է, որ առնվազն հայ հանրության շրջանում նման քայլի դիմելն առաջին հերթին զուգորդվում է խոսել ու ց հրաժարվել ու հետ:

Այժմ անդրադառնանք հաղորդակցության, այսպես ասած, մյուս բևեռին՝ հասցեատիրոջը/հաղորդակցին:

1. Երբ հասցեատերը լ ու մ ու ն կ ն դ ր ու մ է: Սրանք կարող են լ ի ն ե լ այ ն իրադրությունները, որոնցում հաղորդակիցը, հետևելով սոցիալ-մշակութային համապատասխան նորմին, պարզապես լ ու մ ու ն կ ն դ ր ու մ է զրուցակցին: Լ ռ ու թյ ա ն այս դրսևորումը տեղեկատվական առումով վերլուծելի է այնքանով, որ կարելի է այն մեկնաբանել որպես հաղորդակցային նորմի/նորմերի մասին

իրագրեցված ությունը: Սակայն այսպես կարելի է մեկնաբանել մեզ շրջապատող աշխարհում գրեթե ցանկացած բան: Այդ պատճառով նման օրինակները հաղորդակցային առումով նշույթավորված չենք համարի:

2. Հասցեատերը չի արձագանքում համապատասխան ակնարկին/հարցին: Բնականաբար, այս իրավիճակում ոմանք կարող են պնդել, որ հասցեատերը վերածվում է հասցեագրողի: Սակայն խնդիրն էլ հենց դա է. հասցեատերը չի ապահովում դերափոխության ակնկալիքը, և համապատասխան իրադրությունում նման կեցվածքը հաղորդակցային առումով կարող է խիստ նշույթավորված լինել և տարբեր համատեքստերում տարբեր իմաստներ առկայացնել:
3. Հասցեատերը հրաժարվում է պատասխանել կամ արձագանքել խոսակցին: Սակամային քայլ է, քանի որ հասցեատերը բացորոշ ասում է կամ ժեստերով հասկացնում (օրինակ՝ գլուխը տարուբերելով), որ չի պատրաստվում արձագանքելու դիմացինին: Սա նույնպես կարելի է դասել կատարողական (պերֆորմատիվ) լռության շարքին, և այստեղ ևս դիմացինը հրաժարվում է փոխարկվել հասցեագրողի, թեև նման քայլը բացորոշ կատարելն իսկ նրա կարգավիճակը ինքնաբերաբար, թեկուզ և կարճ ժամանակով, վերափոխում է: Այսինքն՝ սկզբունքորեն միայն հասցեագրողը կարող է բացորոշ հրաժարվել հաղորդակցվելուց: Սակայն այս կետը մենք ներառել ենք հասցեատիրոջ լռության դրսևորումների դասակարգման մեջ, քանի որ այդ փոխարկումը կարճատև, տրանզիտային բնույթ է կրում. հասցեատերը մի պահ վերածվում է հասցեագրողի միայն ասելու համար, որ ինքը շարունակելու է մնալ որպես հասցեատեր կամ ընդհանրապես հրաժարվում է հաղորդակցվելուց: Վերջինս նույնպես կարող է կատարվել ժեստերի միջոցով, օրինակ՝ հասցեատերը ձեռքերով ցուցադրաբար փակում է ականջները:

4. Հաղորդակցային ակտիվ Ֆիզիկապես չմասնակցելը: Սակարող է երկկերպ դրսևորվել .

a. Որպես ոչ կամային, տարբեր հանգամանքներով պայմանավորված իրադրություն: Օրինակ՝ հեռախոսակապի խախտման պարագայում երբեմն, մի որոշ ժամանակ չգիտակցելով, որ իրեն չեն լսում, շարունակում է խոսել առանց հասցեատիրոջ անմիջական մասնակցության: Հաղորդակցման տեսանկյունից սաբնականաբար չնշույթավորված լռություն է:

b. Հասցեատերը պարզապես չի ներկայանում հաղորդակցությանը կամ ցուցադրաբար լքում է համապատասխան տեղը: Օրինակ՝ հեռուստաշոուների ընթացքում բազմաթիվ դեպքերի ականատես կարելի է լինել, երբ որևէ հարցի ժամանակ կողմերից մեկը որոշակի դժգոհության պատճառով լքում է տաղավարը: Բնականաբար, այստեղ մենք չենք քննարկում այն դեպքերը, երբ համանման իրավիճակում կողմերից մեկը հեռանում է հաղորդակցությանը չառնչվող պատճառով, օրինակ՝ առողջության հանկարծակի վատթարացման:

Նշենք, որ հասցեատերը նույնպես կարող է կատարել լռեցնելու գործառնություն: Սա առավել ակտիվ մասնակցություն է ենթադրում նրա կողմից, որի պարագայում, որպես կանոն, հասցեատերը կարող է ընկալվել արդեն որպես հասցեագրող: Սակայն կարելի է առանձնացնել դեպքեր, երբ հասցեագրողի և հասցեատիրոջ դերերը համապատասխան միջոցառման ձևաչափով արդեն բաշխված են, և հետևաբար հասցեատիրոջ լռեցնելու ակտը չի վերափոխում նրա կարգավիճակը: Օրինակ՝ ունկնդիրները, ի նշան բողոքի, ծափերով կամ դոփեղով փորձում են լռեցնել ելույթ ունեցողին:

Մենք փորձեցինք ուրվագծել հաղորդակցային ակտում լռության դրսևորման ընդհանուր դեպքերը՝ որոշարկելով դրանք ըստ հասցեագրողի և հասցեատիրոջ: Արդյունքում՝ պարզվեց, որ անգամ հաղորդակցային ակտում լռության դրսևորման որոշ դեպքեր կարող են նշույթավորված չլինել: Նկատեցինք, որ

հաղորդակցային լռության ակտ սկզբունքորեն կարող է իրականացվել միայն հասցեագրողի կողմից, բացառությամբ որոշ դեպքերի, երբ, օրինակ, համապատասխան միջոցառման ձևաչափով պայմանավորված, հասցեագրողի և հասցեատիրոջ դերերը բաշխված են:



## **ԳԼՈՒԽ 2. ԼՈՒՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ Լ ԵԶՎԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**

### **2.1. Խոսույթի սահմանմանն առնչվող որոշ տեսական մոտեցումներ**

Հաղորդակցությանը բազմաշերտ և բազմակերպ գործընթաց է, և խոսքը [թե՛ գրավոր, թե՛ բանավոր] դրա ծավալման միակ միջոցը չէ: Այս հանգամանքն իր արտացոլումն է գտել նաև խոսույթի [ոչ միայն քաղաքական] վերաբերյալ մասնագետների տարակարծություններում, որոնցում ևս նկատելի է երկու ընդհանուր բաժանում: Այսպես, ոմանք «խոսույթ» ասելիս նկատի ունեն միայն լեզվի գործածությունը, մյուսներն այն չեն սահմանափակում խոսքային միջոցներով և խոսույթը դիտարկում են առավել լայն համատեքստում: Օրինակ՝ «ռասայական խորականության խոսույթը քաղաքագիտության կամ պատմության մեջ կարող է ընդհանրապես ուշադրություն չդարձնել լեզվին» [A. Weiyun He, 2003, 429]:

Ծագած լինելով \$րանսերեն discours բառից, որը նշանակում է «խոսք» [Арутюнова, 1990, 136], «խոսույթը» կիրառվել է տարբեր գիտակարգերում ու միջգիտակարգերում, որի ներկայացուցիչները երբեմն իրարից բավականին տարբերվող իմաստներով են գործածել այն (տե՛ս Чернявская 2012, 30-37):

Ինչպես հայտնի է, խոսույթի տեսության և վերլուծության զարգացման ուղղությամբ աշխատել են դպրոցներ, որոնցից, այս առումով հատկապես, աչքի են ընկել \$րանսիականը (Մ. Ֆուկո, Լ. Ալտյոնսերոմ, Ժ.Ժ. Լական և այլք), որում խոսույթի վերլուծությանը հիմնականում առնչակցվում էր քաղաքական-գաղափարական, պատմական և հասարակական-մշակութային հիմնահարցերի հետ: Ավստրոգերմանական դպրոցը (Ռ. Մասս, Յոն. Լինկ, Յոն. Հաբերմաս և այլք) փորձել է գրավոր տեքստի վերլուծության ավանդական մեթոդները և սկզբունքները կիրառել խոսույթի նկատմամբ՝ վերջինիս հայեցակարգը զարգացնելով առավելապես գրականագիտության ծիրում [տե՛ս Чернявская, 2006, 2012.]: Առանձնացնում են նաև խոսույթի ուսումնասիրման անգլո-ամերիկյան դպրոցի մոտեցումը (Լ. Օստին, Ջ. Սերլ, Պ. Գրայս և այլք), որը սկզբնավորվել է 1960-

ականներին «հումանիտար գիտությունների մեջ լեզվաբանական շրջադարձից հետո» [Cambridge Dictionary of Sociology, 2006, 145]: Այս դարոցի ներկայացուցիչներից շատերի համար խոսույթն զուգորդվում է կապակցված խոսքի հետ (connected speech), ընդ որում՝ խոսույթը նույնանում է երկխոսությանը [Чернявская, 2006, 69-70]:

Յասկանալի է, որ խոսույթի տեսության տարբեր ուղղություններով զարգանալը կարող էր հանգեցնել դրա տարբեր սահմանումների ի հայտ գալուն, մի իրավիճակ, որն առկա է ներկայում, ու թեև մեր թեման հիմնականում առնչվում է «լռություն» ֆենոմենի լեզվամշակութային ուսումնասիրությանը, առնվազն աշխատանքային մի սահմանում առանձնացնելու խնդրից խուսափել չենք կարող, քանի որ խոսույթն ընդհանրապես, իսկ քաղաքական խոսույթը մասնավորապես ծառայելու են որպես մի տիրույթ, որի համատեքստում պետք է դիտարկվի խնդրո առարկան:

Աշխատանքային երկու սահմանում է առանձնացնում Վ. Ե. Չերնյավսկայան [Чернявская, 2006, 75-76]: Ըստ առաջինի՝ խոսույթը կոնկրետ հաղորդակցային իրադարձություն է, որը դրսևորվում է գրավոր տեքստերում և բանավոր խոսքում: Այն իրացվում է որոշակի, իմացաբանորեն և տիպաբանորեն պայմանավորված հաղորդակցային տիրույթում: Այս պարագայում փորձ է արվում խոսույթի վերլուծությանը պարզել արտալեզվական խորապատկերի (\$ոնի), այսինքն՝ հասարակական ինստիտուտների, մշակութային և գաղափարախոսական այլ գործոնների ազդեցության աստիճանը և բնույթը լեզվական այս կամ այն օրինաչափությունների ձևավորման վրա: Ըստ վերը նշված մոտեցման՝ խոսույթը հաղորդակցային և մտավոր գործընթաց է, որը հանգեցնում է որոշակի ձևական կառույցի՝ տեքստի ձևավորմանը [նույն տեղում]: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ խոսույթի վերլուծությունը որոշակի ռետրոսպեկցիա՝ հետադարձ հայացք է ենթադրում, քանի որ ուսումնասիրվող նյութը ձևավորվել է հենց խոսույթի՝ որպես խոսքային որոշակի գործընթացի արդյունքում, հետևաբար, այն կոնկրետ խոսողական

իրադարձությունն է, այլ ոչ թե վերացական միավոր, այդ իսկ պատճառով ունի շատ գործնական նշանակություն ոչ միայն մի շարք գիտակարգերի ու միջգիտակարգերի համար, այլև հասարակական արակտիկայի մի շարք ոլորտներում:

Երկրորդ սահմանման համաձայն՝ ««խոսույթ» ասելով հասկացվում է թեմատիկ առումով հարաբերակցվող տեքստերի միագումար. խոսույթում միավորված տեքստերն այս կամ այն կերպ ուղղված են մեկ ընդհանուր թեմայի: Խոսույթի բովանդակությունը (թեման) բացորոշվում է ոչ թե մեկ առանձին տեքստով, այլ միջտեքստուալությամբ, բազմաթիվ առանձին տեքստերի համալիր փոխկապակցությամբ» [Чернявская, 2006, 76]:

Ի մի բերելով այս երկու մոտեցումները՝ հեղինակը նշում է, որ դրանք ոչ թե միմյանց բացառում, այլ ընդհակառակը փոխընդհանուր են, քանի որ դրանք պարզապես կարևորում են խոսույթի տարբեր կողմերը: Այսպես՝ առաջինում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ հաղորդակցային կոնկրետ իրադարձությունը կապված է հաղորդումը սերելու և ընկալելու որոշակի գործաբանական և մտային պայմանների,, ինչպես նաև տեքստեր՝տեքստերի տեսակներ ստեղծելու (текстопорождение) որոշակի կաղապարների հետ: Երկրորդում ուշադրության կենտրոնում է ոչ թե մեկ խոսույթային իրադարձություն, այլ դրանց համալիր ամբողջությունը՝միմյանց փոխկապակցված [տե՛ս Чернявская, 2006, 77]:

Քաղաքական խոսույթին առնչվող իր մենագրության [Шейгал, 2004] մեջ, անդրադառնալով տեքստի և խոսույթի տարբերակման խնդրին, Ե. Ի. Շեյգալն առանձնացնում է չորս երկատում.

1. Խոսույթը վերաբերում է լեզվահասարակական, իսկ տեքստը՝ լեզվաբանական ոլորտին [Шейгал, 2004, 10]: Այսինքն՝տեքստն ունի ներկայացուցչական բնույթ. այն հաղորդակցային իրադարձության խոսքային արձանագրությունն է: Խոսույթն ինքնին իրադարձություն է՝ տեքստի և համատեքստի հանրագումարը: Վերջինս այս դեպքում պետք է ընկալել

բավական լայն իմաստով. արտալեզվական հանգամանքներ, հարալեզվական միջոցներ և այլն: Այն պահից, երբ քննարկում ենք տեքստը՝ հաշվի առնելով, օրինակ՝ այն արտաբերողի հագուստը, շարժումները, միմիկան, ձայնը, ունկնդիրներին, պատասխանները, խորապատկերային երաժշտությունը և համանման այլ սոցիալ-մշակութային և գործաբանական հանգամանքները, կամա թե ակամա հայտնվում ենք խոսույթի ուսումնասիրման դաշտում:

2. Խոսույթը և տեքստը հակադրվում են՝ որպես գործընթաց և արդյունք [Шейран, 2004, 11]: Այս կետն աղերսվում է նախորդի հետ այն առումով, որ, լինելով ինքնին հաղորդակցային իրադարձություն, խոսույթն ամրագրվում է տեքստի միջոցով, դրանով իսկ հնարավոր դարձնելով իր հետադարձ վերլուծությունը: Յարկեկը, որ այս դեպքում «տեքստ» ասելով նկատի է առնվում նաև ժամանակակից տեխնոլոգիաներով ամրագրված խոսքը (և ոչ միայն)՝ սկսած ձայնագրումից մինչև տեսագրում, և անգամ հատուկ փոխարկիչ ծրագրերով կենդանի խոսքի տպագիր թվայնացումը:
3. Ե. Ի. Շեյգալն առանձնացնում է նաև երրորդ երկատումը՝ ակտուալ-վիրտուալ: Խոսույթը դիտարկվում է որպես իրական խոսքային իրադարձություն, իսկ տեքստը վերացարկված մտային կառույց [նույն տեղում]: Պետք է նշել, սակայն, որ այս մոտեցումը դժվար է միանշանակ ընդունել՝ կապված մասնագիտական գրականության մեջ թե՛ «տեքստ» և թե՛ «խոսույթ» եզրերի տարմբնումների հետ: Այսպես՝ «տեքստը կարող է սահմանվել որպես լեզվի *ակտուալ* [շեղատառը՝ Ա. Ա.] կիրառություն՝ ի տարբերություն նախադասության, որը լեզվաբանական վերլուծության վերացական միավոր է [Widdowson, 2011, 4]: Նույն հեղինակի կարծիքով՝ տեքստի վերլուծությունից անցում ենք կատարում խոսույթի վերլուծությանը այն ժամանակ, երբ առաջինը դիտարկում ենք՝ հաշվի առնելով դրա հաղորդակցային նպատակները: «Տեքստերն այս դիտանկյունից իմաստ (meaning) չունեն, այլ կիրառվում են

խոսույթների միջոցով իմաստ փոխանցելու համար» [Widdowson, 2011, 6]: Այս սահմանումը, ընդհանուր առմամբ, չի հակասում Շեյգալի առաջարկած երրորդ երկատմանը: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ, համադրելով Ուիդոուսոնի մոտեցումները նախադասության, տեքստի և խոսույթի վերաբերյալ, որոշակի հակասություն է նշմարվում. եթե տեքստը տարբերվում է նախադասությունից հաղորդակցային նպատակի առկայությամբ, իսկ խոսույթն էլ իր հերթին հենց այդ նպատակների համալիրն է, ապա ստացվում է, որ առանց խոսույթի տեքստը վերածվում է նախասության (կամ նախադասությունների), և հետևաբար խոսույթը և տեքստը նույնացվում են: Առաջնորդվելով վերոնշյալ մոտեցմամբ՝ կարող ենք բերել հետևյալ օրինակը. «Չանգը հնչեց»-ը նախադասություն է, երբ այն դիտարկվում է որոշակի համատեքստից դուրս՝ որպես պարզապես ստորոգում պարունակող բառակապակցություն, որի իմաստը մեզ հայտնի է այնքանով, որ գիտենք այն հնարավոր իրադրությունը (կամ իրադրությունները), որի (կամ որոնց) դեպքում տվյալ ասույթը կունենար արտալեզվական որոշակի վերաբերյալ: Տեքստ-խոսույթ դառնալու համար վերոնշյալ նախադասության պարագայում կկարևորվի ոչ միայն կոնկրետ իրադրությունը, որում այն պետք է առկայացվի, այլ և թե՛ հասցեագրողը և՛ թե՛ հասցեատերը, քանի որ դրանցից ցանկացածի փոփոխությունը կարող է իմաստային փոփոխության հանգեցնել: Այսպես՝ ուսուցչի կողմից դասի ավարտին դաասելը, ամենայն հավանականությամբ, կնշանակի «դասն ավարտված է», մինչդեռ նույն իրադրությունում՝ աշակերտի կողմից իր դասընկերոջը, որը թերևս չի լսել զանգի ձայնը, նույն նախադասությունն ասելը կարող է զուտ տեղեկատվական բնույթ կրել: Իսկ իրադրության փոփոխության պարագայում, ենթադրենք՝ դասասկզբին, նույն

ուսուցչի՝ նույն աշակերտներին «զանգը հնչել է» ասելը կնշանակի, որ դասը սկսված է:

4. Եվ, վերջապես, չորրորդ երկատումը՝ բանավոր-գրավոր. «խոսույթը կաավում է հնչող, բանավոր խոսքի հետ, իսկ տեքստը՝ գրավոր» [Шейгал 2004, 11-12]: Շեյգալը, հիշատակելով Վ. Վ. Բոգդանովին [Богданов, 1993], նշում է, որ վերջինիս մոտեցմամբ՝ հաղթահարվում է վերոնշյալ երկատման սահմանափակությունը, այսինքն՝ խոսույթը ներառում է խոսքին և տեքստին հատուկ բոլոր չափանիշները [տե՛ս նույն տեղում]:

Մենք համակարծիք ենք այն տեսակետին, ըստ որի՝ խոսույթը կարող է լինել նաև գրավոր, որի դեպքում, իհարկե, արտալեզվական և հարալեզվական բազմաթիվ գործոններ կպակասեն և, հետևաբար, վերլուծելիս չեն օժանդակի ուսումնասիրությանը, սակայն գրավոր հաղորդակցության դեպքում նույնպես կարելի է գտնել արտալեզվական գործոններ, ինչպիսին է օրինակ՝ հաղորդակցային միջոցի ընտրությունը, այսինքն՝ հաղորդակցությունը նամակագրակա՞ն է, բջջային հաղորդագրություն տեսքով, թե՞ այլ կերպ: Հաղորդակցության գրավոր լինելն իսկ կարող է տեղեկատվական լինել: Այսպես, եթե հաղորդակցվողների համար կենդանի, դեմ առ դեմ հաղորդակցությունը, առողջ դատողության տրամաբանությունն իցելնելով, պետք է որ առավել նպատակահարմար լիներ, իսկ նրանք, կամ առնվազն կողմերից մեկը, այդուհանդերձ նախընտրել է շփվել գրավոր, ապա հաղորդակցության այս կերպի ընտրությունը լրացուցիչ մեկնաբանման կարիք կարող է ունենա: Եվ ինչպես 1960-ականներին կանադացի հայտնի մեդիատեսաբան Ջ. Մ. ՄքԼուհենն է ասել իր հեղինակած գրքի վերնագրում՝ [հաղորդակցության] միջոցն ինքնին ուղերձ է (‘‘The Medium is the Message’’) [McLuhan, Fiore, 2001]:

Քննարկելով խոսույթի առանձնահատկությունները՝ Շեյգալը վիճարկում է Ս. Խ. Վինոգրադովի այն միտքը, որ խոսույթն ավարտուն հաղորդակցային իրադարձություն է [Шейгал, 2004, 12]: Եթե այս տեսակետը հաշվի առնելով՝ համեմատենք, օրինակ՝

գրական ստեղծագործությունը խոսույթի հետ, ապա կարող ենք ասել, որ երկը, հասնելով ավարտին, ձեռք է բերում հարաբերական ազատություն հեղինակից և շարունակում է գոյել՝ որպես մի տեսակ ինքնաբավ համակարգ, որը սկզբունքորեն զերծ է արտաքին ազդեցությունից, այն իմաստով, որ կառուցվածքային փոփոխություններ տեղի չեն ունենում տվյալ ստեղծագործությունում: Միևնույն ժամանակ ամենևին չի ժխտվում, որ վերջինս կարող է կառուցվածքային փոփոխություններ առաջացնել իրենից դուրս գտնվող որևէ երևույթում կամ համակարգում, ինչպես օրինակ՝ հասարակական կյանքում: Մինչդեռ խոսույթի պարագայում կողմերի միջև հաղորդակցության շարունակականությունը կարծես մեկընդմիջ տ բաց է դարձնում տվյալ խոսույթը փոխակերպումների առջև:

Վերոնշյալ չորս երկատումներից զատ՝ որոշ տեսաբաններ առանձնացնում են ևս մի քանիսը, ինչպես օրինակ՝ երկխոսություն-մենախոսություն, գործառույթային-կառուցվածքային և այլն [տե՛ս Գալստյան, 2009, 76-79], թեև պետք է նշել, որ այս պարագայում ևս միակարծություն չկա: Ինչպես արդարացիորեն նկատում է Մ. Լ. Մակարովը, երկխոսություն-մենախոսություն հակադրումը բավականին պայմանական է, քանի որ «մենախոսությունն ինքնին երկխոսական է. այն միջտուղղված է հասցեատիրոջը՝ իրական կամ ենթադրյալ» [Макаров, 2003, 58]:

## **2.2 Քաղաքական խոսույթը՝ որպես լեզվաքաղաքագիտություն և սոցիալական առարկա**

Ելնելով այն հանգամանքից, որ լեզվագործաբանական ուղղվածություն ունեցող գրականության մեջ ներկայում առկա են «քաղաքական խոսույթ» հասկացության տարբեր սահմանումներ, հարկ է նախորոշ պարզաբանումներ տալ այդ խնդրի առնչությամբ: Եզրն ինքնին ձևավորվել է լեզվաքաղաքագիտության ծիրում, ինչը սերտորեն առնչվում է մի շարք միջգիտակարգերի հետ, մասնավորապես՝ հաղորդկցային և ճանաչողական լեզվաբանությունների, ինչպես նաև լեզվագործաբանության: Մարդաբանական հայեցակարգի արդի փուլում

լեզվաքաղաքագիտության ի հայտ գալն օրինաչափ է, քանի որ տեսաբանների ուշադրության կենտրոնում հայտնվեցին հաղորդակցման գործընթացի մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝ Լեզվական անհատի արտացոլումը Լեզվում [տե՛ս Маслова, 2008, 203]:

Չայտնի է, որ քաղաքականության ունում իրադարձության ունեները զարգանում են հիմնականում իշխանության համար պայքարի շուրջ. գաղտնիք չէ, որ այդ պայքարում, հատկապես ժողովրդավարական կամ առնվազն այդ ուղին որդեգրած երկրների քաղաքական կյանքում մեծ տեղ է գրավում Լեզուն: «Լեզուն [...] ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլև քաղաքական գենք. այն [որպես այդպիսին] ձևավորվում և հղկվում է քաղաքական նպատակներ իրագործելու համար» [Heywood, 2004, 2]: Ուշագրավ է, որ որքան քիչ է երկիրը բռնատիրական, այնքան ավելի մեծ է Լեզվի դերակատարությունը տվյալ երկրի քաղաքական կյանքի կարգաբերման գործընթացում, թեև բռնատիրական համակարգում ևս չպետք է թերագնահատել Լեզվի գործունը, հատկապես իշխանության Լեզվի տիրության պահպանման գործում:

Քաղաքական իշխանության համար պայքարում Լեզվի կիրարկումը սերտորեն առնչվում է «մանիպուլյացիա» երևույթի հետ, քանի որ քաղաքական գործիչները, որպես կանոն, ջանք չեն խնայում, որ Լեզվի ներազդող բնույթը թաքուցյալ (ոչ բացորոշ) Լինի հասարակության առնվազն մեծ մասի համար՝ հասարակության հոգեբանական, հասարակական-մշակութային պաշտպանական համակարգերն ավելի դյուրին կազմաքանդելու և, հետևաբար, ներազդման ավելի բարձր արդյունավետությունն ապահովելու համար: Այս մասին հանգամանալից անդրադարձ է կատարել Ս. Կարա-Մուրզան իր ծավալուն մենագրության մեջ [տե՛ս Кара-Мурза, 2012]:

Թեև քաղաքական հաղորդակցման սերմերը նկատելի են դեռևս Պլատոնի աշխատության ունենրում, սակայն եզրն ինքնին շրջանառվել է 1940-ականների վերջերին և 1950-ականների սկզբին, երբ այս թեման շոշափող հիմնարար աշխատություններ են լույս



տեսել: Քաղաքական հաղորդակցության՝ որպես ինքնուրույն ուղղության մեկնարկը պայմանավորված էր XX դարի երկրորդ կեսին քաղաքական գործընթացների ժողովրդայնացմամբ, ինչպես նաև նոր հաղորդակցային համամակարգերի ու տեխնոլոգիաների երևան գալով: Քաղաքական հաղորդակցման ընդհանուր տեսության հիմնարկեքն աղերսվում է ամերիկյան երկու դպրոցների ներկայացուցիչների հետ. 1) սոցիալական համակարգերի վերլուծության, այսպես կոչված՝ կիբեռնետիկական ուղղության ներկայացուցիչներ (Կ. Դոյչ և այլք), և 2) քաղաքականության ուսումնասիրման կառուցվածքային-գործառնական մոտեցման հետևորդներ (Գ. Ալմոնդ և այլք) [Основаы теории коммуникации, 2006, 514]:

Լեզվաքաղաքագիտության ուսումնասիրման առարկան քաղաքական խոսույթն է, որը, ըստ Վ. Ա. Մասլովայի՝ խոսույթի հատուկ տարատեսակ է՝ ուղղված քաղաքական իշխանության նվաճմանը, պահպանմանը և իրականացմանը [Маслова, 2008, 204]: Քաղաքական խոսույթի նպատակը հասցեատիրոջը համոզելն է, նրան որոշակի գործողության մղելը, որով և կարելի է չափել քաղաքական խոսույթի արդյունավետությունը [տե՛ս Демьянков, 2002, 38]: Այս մոտեցման արդարացիությունը կարելի է հեշտորեն ստուգել՝ անգամ թռուցիկ հայացք նետելով բազմաթիվ քաղաքական գործիչների նախընտրական քարոզարշավների վրա, որոնց ընթացքում թեկնածուները և նրանց հետ աշխատող թիմը, գործածելով թե՛ լեզվական և թե՛ արտալեզվական միջոցներ, փորձում են համոզել իրենց լսարանին, քվեարկել հոգուտիրենց թեկնածուի: Իհարկե, համոզելու գործառույթը բացառապես քաղաքական խոսույթին հատուկ մի երևույթ է, սակայն դրանում այն առավել ապես ընդգծված դերակատարություն ունի:

Ե. Ի. Շեյգալը նշում է քաղաքական խոսույթի մի շարք համակարգայնացնող առանձնահատկություններ. օրինակ՝

- Քաղաքական խոսույթը գերատեսչական (ինստիտուցիոնալ) է, քանի որ հաղորդակցումը կատարվում է հասարակական ինստիտուտներում:

- Գնահատողականությունն ու ներազդումը գերակշռում է տեղեկատվությանը:
- Քաղաքական լեզվի շատ նշաններ չունեն իրական հարաբերակից (դենոտատ):
- Քաղաքական խոսույթն իռացիոնալ է, այսինքն՝ ևսարանի վրա արդյունավետ ներազդելու նպատակով թիրախ է ընտրվում վերջինիս առավել ապես ենթագիտակցությունը, քան գիտակցությունը [մանրամասն տե՛ս Шейгал, 2004, 42-69]:

Քաղաքական խոսույթի հիմնական մասնակիցները քաղաքական հաստատությունների/կառույցների ներկայացուցիչներն են: Այդպիսին կարող են դառնալ նաև քաղաքացիական այն անձինք, որոնց շահերն ուղիղ կամ անուղղակի կերպով բխվում կամ համընկնում են վերոնշյալների քաղաքական ուղեգծի կամ գաղափարախոսության հետ:

Լեզվաբանական և լեզվագործաբանական գրականության մեջ քաղաքական խոսույթի վերաբերյալ սովորաբար երկու ընդհանուր մոտեցում են առանձնացնում՝ նեղ և լայն: «Լայն իմաստով այն ընդգրկում է հաղորդակցության այնպիսի ձևեր, որոնցում քաղաքական ոլորտին է վերաբերում առնվազն [խոսույթի] բաղադրիչներից մեկը՝ սուբյեկտը, հասցեատերը կամ հաղորդման բովանդակությունը: Իսկ նեղ իմաստով՝ քաղաքական խոսույթը խոսույթի տեսակ է, որի նպատակն է նվաճել, պահպանել և իրականացնել քաղաքական իշխանությունը» [Маслова, 2008, 219]: Քաղաքական խոսույթին լայն իմաստով են մոտենում Ա. Բարանովը [Баранов, 1991], Ն. Գերասիմենկոն [Герасименко, 1998], Ե. Շեյգալը [Шейгал, 2004] և այլք:

Քաղաքական խոսույթի վերլուծության նեղ դիտանկյունն է որդեգրել Տ. Ա. Վան Դեյքը: Նա այն աստիճան է խտորոշում քաղաքական խոսույթի շրջանակները, որ դրանցում չի ընդգրկում անգամ տարբեր սոցիալական խմբերի այնպիսի բողոքի ակցիաներ, որոնք առնչվում են քաղաքական որոշում կայացնելուն [տե՛ս Van Dijk, 2002, 20]: Յետաբարքական է, որ հոլանդացի լեզվաբանը

քաղաքական խոսույթին նաև խիստ ինստիտուցիոնալ բնույթ է վերագրում, այսինքն՝ «քաղաքական գործչի ոչ պաշտոնական գրույցն իր ընկերների հետ քաղաքական խոսույթ չէ» [Նույն տեղում]: Պետք է նշել, սակայն, որ տեսաբանը չի բացառում, որ «այլ մշակույթներ կարող են ունենալ իրենց բնորոշ քաղաքական իրադարձության տեսակներ, քաղաքական գործողություններ, մասնակիցներ և այլն» [Van Dijk, 2006, 733]:

Այսպիսով, եթե ուղենիշային համարենք այս երկու ընդհանուր մոտեցումները, ապա մեր թեմայի ծավալման համար պետք է որդեգրենք քաղաքական խոսույթի լայն ըմբռնումը, որը ներառում է նաև արտալեզվական գործոնները, որոնք ազդում են տեքստերի՝ որպես քաղաքական խոսույթի արդյունքի առաջացման և ընկալման վրա [տե՛ս Маслова, 2008, 219]:

### **2.3. Լռությունը՝ որպես բազմաշերտ հաղորդակցային նշան քաղաքական խոսույթում**

Քաղաքական խոսույթում «լռություն» ֆենոմենին անդրադառնալիս անհրաժեշտ է տարրորոշել դրա երկու հնարավոր ընդհանուր դրսևորում. առաջին՝ հաղորդակցային որոշակի իրադրությունում դիտարկելի առանձին միավոր, որը լեզվական և արտալեզվական նշանների հետ հարացուցային և շարակարգային հարաբերությամբ առկայացված ուղերձ (մեսիջ) է պարունակում, և երկրորդ՝ տեքստային տիրույթում լեզվական միջոցներով որևէ բանի մասին լռելու, բանավոր կամ գրավոր խոսքով որոշակի նախադրույթ (պրոպագանդիստ) ամբողջությամբ կամ մասնակի կաղապարելուց խուսափելու դրսևորում:

Առաջինի պարագայում, լռությունը հաճախ ուսումնասիրվում է ոչ բառային հաղորդակցության շրջանակներում՝ ներառելով ժեստերը, հարալեզվական միջոցները և այլն: Երբեմն վերլուծության են ենթարկվում այն իմաստները, որոնք փոխանցվում են գրավոր տեքստի ձևավորմամբ, օրինակ՝ հաշվի են առնվում լրատվական նյութի վերնագրի չափսը, հոդվածում ներառված լուսանկարի կամ պատկերի փոխարարությունը տեքստի հետ, վերջինի գրաված էջը

համապատասխան պարբերականում, թավատառի և որոշակի արտահայտության կարևորությունն ընդգծող այլ միջոցների կիրարկումը և այլն [տե՛ս Schramm, 1974, 19-10]: Սակայն սույն աշխատանքում ոչ խոսքային միջոցներին մենք կանդադառնանք մեծամասամբ այն պարագայում, երբ որոշակի պայմաններից, նպատակներից դրդված սուբյեկտը նախընտրել է ուղերձի փոխանցման այդ տարբերակը, քանի որ ժեստերը, ինչպես նաև հարալեզվական մյուս միջոցների կիրարկումը երբեմն անգիտակցական բնույթ են կրում: Իհարկե, վերջինները նույնպես ուսումնասիրության հետաքրքիր առարկա են դառնում առանձին գիտակարգերի և միջգիտակարգերի համար, սակայն, լինելով առավել ապստամբաբարձային դրսևորումներ, մենք դրանց հատուկ չենք անդադառնա առավել ապստամբաբարձային հաղորդակցային ուղղվածություն ունեցող մեր աշխատանքում, քանի որ այս համատեքստում առանցքային ենք համարում այն մոտեցումը, ըստ որի՝ «նշանը վերածվում է ազդանշանի, երբ հաղորդողն այն կիրարկում է գիտակցաբար՝ նպատակ ունենալով հաղորդակցին փոխանցել որոշակի տեղեկատվություն» [Основы теории коммуникации, 2006, 301]:

Այդուհանդերձ մենք չենք կարող ժխտել, որ շատ դեպքերում ոչ խոսքային նշանը հնարավոր է ակնդրի կամ ունկնդրի կողմից ընկալվի որպես որոշակի ուղերձ պարունակող միավոր, սակայն միևնույն ժամանակ զուրկ լինի հաղորդակցային դիտավորությունից: Տեղին կլինի հիշել մեր անձնական փորձառությունից մի օրինակ, երբ ուսումնառությունը Չայաստանում շարունակելու նպատակով երևան նոր տեղափոխված իրանահայ աղջիկը վիրավորվել էր իր տեղացի համակուրսեցի տղաներից՝ ձեռքսեղմումով իրեն չողջունելու համար, ինչը նա շտապել էր մեկնաբանել որպես արհամարհանք կամ անտեսում: Ըստ երևույթին, այդ պահին նա եղել է մշակութային նոր միջավայրին հարմարվելու երեք փուլերից երկրորդում, որը հաճախ անվանում են «մշակութային ցնցում» [տե՛ս Брутян, 2014, 24], երբ «մեղրամսի» փուլն անցած մարդը դեռևս չի մշակել կամ յուրացրել նոր

միջավայրին հարմարվելու համար անհրաժեշտ վարքագծային ռազմավարությունները:

Նման երևույթները հազվադեպ չեն նաև քաղաքական կյանքում, հատկապես, երբ անակնկալ կոտրվում է որոշակի մշակույթում մեկ այլ ազգի կամ պետության ներկայացուցչի առնչությամբ ձևավորված կարծրատիպը, ինչպես որ դա պատահեց 1984 թ. ԽՍՀՄ ղեկավար Մ. Ս. Գորբաչովի՝ Անգլիա կատարած այցի ժամանակ, երբ արևմտյան մշակույթում խորհրդային ղեկավարների խիստ կեցվածքի մասին պատկերացումներն առերեսվեցին ժպտադեմ առաջնորդին: Եվ ինչպես պատահում է հասարակական կյանքի այլ դրվագներում, մշակութային ցնցում առաջացրած անսովոր պահվածքը տեղի տվեց զանազան մեկնաբանությունների [տե՛ս Тер-Минасова, 2008, 238-239]: Արևմտյան և հայկական միջավայրում, այսպես կոչված, ժպիտի մշակույթի վերաբերյալ հետաքրքիր գուգահեռներ է անցկացնում պրոֆ. Լ. Գ. Բրուտյանը՝ ասելով, որ Արևմուտքում, հատկապես անգլիախոս երկրներում ժպիտը դիմացինի նկատմամբ բարեկամական տրամադրվածությունն ենթադրող նշան է, մինչդեռ «հայ տղամարդուն հասցեագրված անծանոթ աղջկա կամ կնոջ ժպիտը հնարավոր է հանգեցնի միանգամայն անցանկալի հետևանքների» [տե՛ս Брутян, 2015, 42-43]:

Իհարկե, մենք չենք նույնացնում ժեստերը և հաղորդակցման ոչ խոսքային միջոցները լռության հետ, այլ պարզապես կարծում ենք, որ դրանք հաճախ ուղեկցվում են լռությամբ, և հետևաբար դրանց միասին կիրարկմամբ որոշակի ուղերձ փոխանցելն է, որ հետաքրքիր է դիտարկել խնդրի ուսումնասիրման այս տեսանկյունից:

Խոսելով խոսք-լռություն հակադրության մասին՝ Դ. Կուրզոնը պնդում է, որ «հնարավոր չէ խոսել և լռել միևնույն ժամանակ» [Kurzon, 1998, 11]: Ըստ նրա՝ չխոսել (non-speech) ասելով առնվազն երկու բան կարող ենք հասկանալ՝ հաղորդակցության բացակայություն և ոչ խոսքային հաղորդակցություն: Տեսաբանի դիտարկմամբ՝ թեև մեկ անձի պարագայում լռության ակտը չի

կարող գուգակցվել խոսքին, սակայն կարող է գոյակցել ոչ խոսքային միջոցներին, իսկ վերջիններն էլ հնարավոր է կիրարկել խոսքային միջոցների հետ միաժամանակ [տե՛ս նույն տեղում]: Դ. Կուրզոնի վերոբերյալ խոսքից կարելի է հետևություն անել, որ առնվազն այս պարագայում լռությունն ընկալվում է որպես որոշակի հաղորդակցային դադար:

Մեր կարծիքով՝ քաղաքական խոսույթում, ընդհանուր առմամբ, կարելի է տարբերակել լռության երկու դրսևորում, առաջինը, որը պայմանականորեն կանվանենք «խոսույթային», այն դեպքերն են, երբ որևէ թեմայի շուրջ ակնկալվող խոսույթը չի առկայացվում կամ դադարեցվում է: Ի դեպ, վերջինի պարագայում նկատի են առնվում նաև այն դեպքերը, երբ օրինակ՝ որոշակի թեմայի շուրջ քննարկումը, տարբեր հանգամանքներից ելնելով, երկարաժամկետ կասեցվում է: Լռելու պատճառները կարող են լինել բազմազան, անգամ հոգեբանական, երբ անհատը սեփական կարծիքը հայտնելիս հաշվի է առնում հասարակության մեջ գերիշխող վերաբերմունքը որոշակի հարցի վերաբերյալ և, տեսնելով, որ հայտնվում է փոքրամասնության մեջ, նախընտրում է լռել՝ խուսափելով մեկուսացումից: Այս խնդիրը բացահայտել է գերմանացի տեսաբան Է. Նոուել-Նոյմանը և մանրամասն անդրադարձել դրան իր հայտնի «Լռության պարույրի» մասին գրքում [տե՛ս Ноэль-Нойман, 1996]: Տոտալիտար համակարգում, բռնաճշումների, վախի մթնոլորտի ձևավորման և ագրեսիվ քարոզչամեթոդային տեսական կիրարկմամբ համանման երևույթի ծայրահեղ դրսևորում է նկարագրված Ջ. Օրվելի հայտնի «1984» քաղաքական դրամայում, երբ «հնարավորություն էր ստեղծվել ոչ միայն լրիվ հնազանդություն պարտադրելու պետության կամքին, այլ և կարծիքի միասնությունն՝ բոլոր թեմաների շուրջ» [Օրվել, 2012, 218]:

Քաղաքական խոսույթում լռության երկրորդ ընդհանուր դրսևորումը, կարծում ենք, կարելի է անվանել «ասուլիսային լռություն»՝ նկատի ունենալով այն դեպքերը, երբ որոշակի ակնկալվող նախադրույթ ամբողջությամբ կամ մասամբ լեզվական կաղապար չի ստանում:

Խոսույթային լռությունը, որը ենթադրում է հաճախ լեզվաբանական և նշանագիտական համալիր ուսումնասիրություններ, ներկայում թվում է բավականին արդիական թեմա՝ հաշվի առնելով քաղաքական կյանքում բողոքի կատարողական ակտերի բազմազանությունը: Եվ թե, ըստ Ջ. Լ. Օսթինի՝ որոշ ասույթների արտաբերումը ինքնին ենթադրում են որոշակի գործողությունների կատարում [տե՛ս Остин, 1986, 27], ապա կարելի է ասել նաև, որ որոշ գործողություններ կատարվում են հիմնականում որոշակի ուղերձներ փոխանցելու նպատակով:

Քաղաքական կատարողական ակցիաները երբեմն ուղեկցվում են խոսքային միջոցներով, որոնք հաճախ դրսևորվում են պաստառների վրայի գրությունների տեսքով: Այն պարագայում, երբ ոչ խոսքային հաղորդակցության միջոցը նախընտրած ակտիվիստը հանդես է գալիս գուտ կատարողական ակտով, հաշվի է առնվում թերևս այն հանգամանքը, որ դրա իմաստը չափազանց ակնհայտ է, և համապատասխան ուղերձը փոխանցելու համար խոսքային օժանդակության կարիք չկա:

Նման իրադրությունում ասելիքի առկայացմանը կարող են նպաստել ակցիայի իրականացման վայրը, ժամանակը, ինչպես նաև ակտն իրականացնողի հեղինակությունը տվյալ հասարակությունում, որոնք՝ որպես հաղորդակցային իրադրության բաղադրիչներ, շարակարգային հարաբերության մեջ մտնելով միմյանց հետ, կառկայացնեն համապատասխան ուղերձը:

Համանման ակտերի վառ օրինակ կարելի է համարել ռուս արվեստագետ Պ. Ա. Պավլենսկու ակցիաները, որոնց համար վերջինս արժանացել է չեխ թատերագիր, այլախոհ քաղաքական գործիչ Վացլավ Հավելի անունը կրող «ստեղծագործական տարակարծության համար» մրցանակին [տե՛ս Human Rights Foundation, 2016]:

2012 թ. Պետերբուրգում Կազանյան տաճարի դիմաց կազմակերպած ակցիայի ժամանակ Պ. Ա. Պավլենսկին ներկայացել էր կարված բերանովի պաշտպանությունը Pussy Riot Ֆեմինիստական ընդդիմադիր ռոք խմբի, որոնց առնչությամբ դատական գործն այդ

պահին ընթացքի մեջ էր [տե՛ս ART Хроника, 2012]: Հետագայում և ևրագրողի այն հարցին, թե որն էր «Կար» (Шов) ակցիայի նպատակը, Պ. Ա. Պավլենսկին պատասխանել էր, որ «ցանկանում էր ցույց տալ Ռուսաստանում ժամանակակից նկարչի վիճակը. խոսքի ազատության սահմանափակումը» [նույն տեղում]:

Նշենք նաև, որ «լռություն» խորհրդանշող իր կատարողական ակտը նկարիչը ևրացրել էր նաև խոսքային միջոցով՝ ձեռքին պահելով մի պաստառ, որի վրայի գրությունը որոշ առումով մեկնաբանություն էր Pussy Riot խմբի Մոսկվայի Քրիստոս Փրկիչ տաճարում իրականացրած այն ակցիայի, որի համար վերջինի անդամների նկատմամբ դատական գործ էր հարուցվել [տե՛ս BBC NEWS, 2013]:

Պ. Ա. Պավլենսկու ակտը «լռության» ուսումնասիրման նշանագիտական դիտանկյունից հետաքրքիր շերտեր կարող է բացորոշել: Մասնավորապես, այս պարագայում գործ ունենք, այսպես ասած, ներդրյալ կամ բարդ նշանի հետ, որի վերաբերյալը ևռությունն է՝ իշխանական ապարտի կողմից պարտադրված: Այդ ևռությունն էլ իր հերթին որոշակի նշան է այն ներուճակ ասելիքի՝ խոսույթի համար, որը ևեզվական կադապարչի ստացել: Ավելի խորը դիտարկմամբ՝ չվերբալ իզացված խոսքի վերաբերյալն էլ արտալեզվական որոշակի իրողությունն է: Մեր կարծիքով նման մոտեցման ևեզվափիլիսոփայական հետաքրքիր ձևակերպում է տվել Է. Ռ. Աթայանը, ըստ որի՝ «որքան էլ բարդ լինեն ևեզվական նշանները, այն, ինչ նրանք պատմում են, իբրև մտային ատրիբուտ միշտ վերաբերում է այն սուբստանցին, որի մասին պատմում են» [Աթայան, 1981, 207]:

Նշանի բարդությունն այս դեպքում պայմանավորված է ոչ միայն դրա եռաշերտ լինելու հանգամանքով, այլև այն տարաբնույթ հարաբերություններով, որոնցով ներդրյալ նշանները փոխկապակցված են ինչպես միմյանց, այնպես էլ իրենց արտալեզվական հենքային վերաբերյալին: Թ. Ա. Շեբյոկը նշանի վեց կերպ (aspect) է առանձնացրել՝ ազդանշան, պատկերանշան, հայտանշան (symptom), ցուցանշան (index), խորհրդանշան և անուն՝



հավելելով, որ դրանք, ըստ էության, ոչ թե վեց առանձին նշաններ են, այլ ընդամենը այն հնարավոր կերպերը (ասպեկտները), որոնցից նաև մի քանիսը կարող են միաժամանակ դրսևորվել առանձին նշանում [տե՛ս Sebeok, 2001, 42-63]:

Թերևս դա է պատճառը, որ դեռևս 1970 թ. հրապարակած իր հոդվածում Ռ. Յակոբսոնը խոսում է նշանների այնպիսի միջակա տարբերակների մասին, ինչպիսին են խոհրդանշան-պատկերանշանները, պատկերանշան-խոհրդանշանները և այլն [տե՛ս Якобсон, 1985, 322]:

Բնականաբար, նշանի տարբեր կերպերի բացորոշման համար վճռական դերակատարություն ունի իրադրային և լեզվական համատեքստը, այդ պատճառով, դրանցից կախված, միևնույն նշանում տարբեր դեպքերում կարող է գերակշռել մի կերպը, մյուսում՝ մեկ ուրիշը: Այսպես, եթե՝ «ով է կոտրել բաժակը» հարցին, երեխան լռում է, ապա այդ պարագայում «լռելը» կարելի է դիտարկել՝ որպես առավել ապես հայտանշան, որը արտահայտում է տվյալ անձի, առարկայի կամ երևույթի ներքին վիճակները [տե՛ս Bühler, 2011, 35]: Մինչդեռ, երբ երեխան ծնողից թույլ տվող ուն ինդրելիս ի պատասխան ստանում է լռություն, ապա վերջինը կարող է մեկնաբանվել որպես համապատասխան գործողությունը չկատարելու, հնարավոր է նաև կատարելու հրահանգ: Յետևաբար, այս պարագայում կարելի է համարել, որ տվյալ նշանը օժտված է առավել ապես ազդանշանին բնորոշ հատկանիշներով:

4. Բյուլլերը դիտարկում է խոհրդանշանը, հայտանշանը և ազդանշանը հաղորդակցային գործընթացի առանցքային բաղադրիչների հետ հարաբերության մեջ՝ առաջինն առնչակցելով իրերի իրադրության, երկրորդը՝ հասցեագրողի, իսկ վերջինը՝ հասցեատիրոջ հետ [տե՛ս Bühler, 2011, 3-5]: Յետևաբար, որոշակի իրադրությունում հաղորդակցային բաղադրիչներից մեկի բացակայությունը կարող է նպաստել նշանի ներուժակ կերպերից մեկի առկայացմանը: Օրինակ, եթե ինչ-որ մեկը սենյակում մենակ է և վախենում է կարիճից ու, հանկարծ տեսնելով վերջինին, բղավում է՝ կարիճ, ապա կարելի է պնդել, որ այստեղ գործ

ուև ենք առավելապես հայտանշանի հետ, քանի որ այն սկզբունքորեն գուրկ է հաղորդակցային դիտավորությունից և պարզապես ներկայացնում է հաղորդողի որոշակի հոգեվիճակը:

Նախքան Պ. Ա. Պավլենսկու կատարողական ակտի նշանային շերտերի վերլուծությանն անցնելը՝ հարկ է միակատառում անել մեր կարծիքով՝ ակտիվիստի ձեռքի պատառի գրությունը («Pussy Riot խմբի ելույթը Յիսուս Քրիստոսի հայտնի ակցիայի [Մատթեոս 21, 12-13] վերախաղարկումն (переигрывание) էր»), որպես մեկ ամբողջություն, ինքնին նշան է, քանի որ այն ոչ թե մեկնաբանում է ակցիայի նպատակը կամ հայտնում, թե ինչ է պահանջում Պ. Ա. Պավլենսկին, այլ այն խոսույթի նշանն է, որի բացակայությունն է իր հերթին խորհրդանշում նրա կարած բերանը: Բացի այդ, քաղաքական ակտիվիստը, ըստ երևույթին, գիտակցել է, որ դժվար կլիներ փոխանցել համապատասխան ուղերձը՝ ընդամենը կարած բերանով տաճարի դիմացը կանգնելով: Թերևս այդ է պատճառը, որ նա դիմել է լեզվական միջոցի օժանդակությամբ, որն էլ ակնդրի կամ հասցեատիրոջ համար ծառայել է որպես որոշակի «կամրջակ»՝ կատարողական նշանի ներդրյալ շերտերը հաղթահարելու և ուղերձը վերծանելու համար: Կարելի է եզրակացնել, որ տվյալ գրությունը մյուս նշանի նկատմամբ կատարել է բնալու դեր: Այս մոտեցումը, թերևս, կարելի է արդյունավետ կիրարկել հաղորդակցային տիրույթում ուսումնասիրություններ կատարելիս՝ Կ. Բյուլերի համակարգին զուգահեռաբար: Այսինքն՝ անհրաժեշտ է գտնել այն արտակա մեկնողական (interpretative) նշանը, որը որոշակի իրադրությունում այլ նշանների նկատմամբ ունեցած համապատասխան հարաբերության շնորհիվ հնարավորություն կտա բացորոշել անհրաժեշտ ներակա ուղերձը:

Այսպիսով, կարծում ենք, որ Պ. Ա. Պավլենսկու կատարողական նշանի վերին շերտը առավելապես խորհրդանշան-ազդանշան է. մի կողմից այն խորհրդանշում է իր վերաբերյալ ինչն էլ լինի, մյուս կողմից, հասցեատիրոջ հարաբերությամբ կատարում է ազդանշանի դեր, քանի որ վերջինի հիմնական գործառնությունը «հասցեատիրոջ մոտ որոշակի ռեակցիա խթանելն է» [Sebeok, 2001, 44]:

Եթե Պ. Ա. Պավլ Ենսկոն բողոքի ակցիաները [տե՛ս YELLOW DOG, 2015] դիտարկենք որպես որոշակի քաղաքական ուղերձ պարունակող կատարողական ակտեր, ապա կարող ենք պնդել, որ բացի խորհրդանշան-ազդանշան լինելուց՝ դրանցում կա նաև հայտանշանի տարր, քանի որ նրանց գերակշիռ մասում խոսքային միջոցների բացակայությունը վկայում է տվյալ հասարակության ունում խոսքի ու ժողովարդարության հասնելու վերաբերյալ թերահավատության մասին:

Երկրորդ՝ միջանկյալ նշանը, որը ներկայացնում է հասարակության մեջ համապատասխան խնդրի շուրջ խոսույթի բացակայությունը, առավելապես հայտանշան է, քանի որ նախ՝ արտահայտում է, Պ. Ա. Պավլ Ենսկոն խոսքով՝ իր երկրում տիրող գրաքննությանը [տե՛ս ART Хроника, 2012] և բացի այդ՝ այն միտված է որևէ ուղերձ փոխանցելու որոշակի հասցեատիրոջ:

Մեր առանձնացրած շերտերից վերջինը, որը, ինչպես վերը նշեցինք, խորհրդանշական ձևով արտահայտվել է Պ. Ա. Պավլ Ենսկոն ցուցապատառի վրա, լիարժեք խոսքային նշան է, քանի որ, օժտված լինելով խոսույթին հատուկ բոլոր անհրաժեշտ քաղաքիչ ներով, ունի և՛ հասցեագրող, և՛ հասցեատեր, ինչպես նաև վերաբերում է որոշակի իրողության, հետևաբար միաժամանակ ներկայացնում է բյուրեղյան համակարգի լեզվական նշանի երեք հարաբերությունները՝ տվյալ համատեքստում վերոնշյալ մեկնողական գործառույթի հավելմամբ:

Այսպիսիով, կարելի է եզրակացնել, որ լռության խորհրդանշան-կատարողական ակտերը քաղաքական խոսույթում բազմաշերտ են, որոնք բացորոշելու համար վերը կիրառված մեթոդը կարող է օգտաշատ լինել համապատասխան ոլորտում լեզվաբանական և նշանագիտական ուսումնասիրության ներկայացրածների համար:

Մեր կարծիքով, լռությունը կարելի է դիտարկել նաև ասույթի լոկուտիվ (այս պարագայում նկատի է առնվում ասելիքի նշանային ցանկացած նյութականացում, այդ թվում՝ ոչ խոսքային միջոցներով), իլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակների

բեկմամբ: Այս առումով տարրորոշել ենք լռության դրսևորման երեք հնարավոր կադապար. այսինքն՝ լոկուտիվ մակարդակում լռությունը հաղորդակցային որոշակի դադար է, այսպես ասած՝ նյութականապես (ոչ միայն լեզվական առումով) չկադապարված ուղերձ, որը, հետևաբար, ունի վերաբերյալ և կարող է հասցեատիրոջը մղել որոշակի գործողության:

Երկրորդ դեպքում, ասելիքը կարող է լոկուտիվ մակարդակում լինել նյութականացված, ինչպես լեզվական միջոցներով (օրինակ՝ «չեմ ասի», «ուրիշին հարցրու» և այլն), այնպես էլ ոչ խոսքային ակտի միջոցով (օրինակ՝ բերանը կարելի է մինչդեռ իլոկուտիվ մակարդակում կնշանակի հենց «լռություն»՝ պերլոկուտիվում որոշակի քայլ(եր)ի մղելով հասցեատիրոջը:

Երրորդ տարբերակում. լոկուտիվ մակարդակը կարող է լրացված լինել ինչպես խոսքային միջոցներով (օրինակ՝ «լռիր», «ձայնդ կտրիր» և այլն), այնպես էլ որոշակի գործողությամբ (օրինակ՝ ծեծի, կտտանքների ենթարկելու միջոցով), որը իլոկուտիվ մակարդակում կապրունակի լռելու որոշակի հրահանգ, հրաման կամ ցուցում, որն էլ իր հերթին պերլոկուտիվ մակարդակում հնարավոր է հանգեցնի հասցեատիրոջ լռության:

Լեզվագործաբանական կադապարի այս վերլուծական մեթոդի կիրարկմամբ, կարծում ենք, հնարավոր է լրացնել վերը շարադրված նշանագիտական մոտեցումը և առավել ընդգրկուն ուսումնասիրություն կատարել ոչ միայն լռության առանձին ակտերի, այլ և քաղաքական ամբողջական գործընթացների:

#### **2.4. Ֆիզիկական բռնությունը՝ որպես ոչ խոսքային հաղորդակցություն միջոց քաղաքական խոսույթում**

Ներկայումս ոչ խոսքային միջոցներով հաղորդակցվելու մասին բազմաթիվ անդրադարձներ կան լեզվաբանական համապատասխան միջգիտակարգերին և հարակից գիտակարգերին վերաբերող գրականությունում: Լեզվաբանները խոսում են ոչ միայն հարալեզվական միջոցների և մարմնի լեզվի, այլ և հագուստի և մազերի սանրվածքի մասին [տե՛ս Davis, 1974, 102]:

Տեսաբաններից ոմանք այդ միջոցներով փոխանցվող ուղերձներն անվանում են «ոչ խոսքային տեքստեր» [Kapa-Myrza, 2012, 24]: Գ.Գ. Պոչեպցովը, որը համանման տեքստեր է համարում նույնիսկ հանքափորների գործադուլները, պնդում է, որ դրանք «առավել ազդեցիկ են, քան ՉԼՄ-ներում հրապարակված հոդվածները» [Почепцов, 2008, 263]:

Այս համատեքստում «ֆիզիկական բռնությունը» թերևս նույնպես կարելի է դիտարկել քաղաքական խոսույթում որպես որոշակի ուղերձ պարունակող հաղորդակցային ակտ, քանի որ, ինչպես նշում է Գ. Յուլը, շատ մարդիկ նախընտրում են իրենց ասելիքը փոխանցել առանց դրան լեզվական կաղապար տալու, և, երբ դանրանց հաջողվում է, կարելի է ասել, որ հաղորդվել է ավելի, քան ասվել է [Yule, 2011, 62]:

Ե. Շեյգալը, քննարկելով քաղաքական և այլ խոսույթների շփման եզրերը, նշում է, որ «պետությունն օժտված է լեզվափոխ բռնության մենաշնորհով: Սահմանադրությունները, օրենսգրքերը, օրենքները, հրամանագրերը, կառավարության որոշումները և այլն իշխանության իրականացման միջոցներ են և այս հիմքով պետք է դասվեն քաղաքական խոսույթի ոլորտին» [Шейгал, 2004, 24]: Ուշագրավ է, սակայն, որ հեղինակն այս դեպքում խոսում է ոչ թե բռնության՝ որպես քաղաքական խոսույթի ծավալման միջոցի, այլ պարզապես դրանառավելապես թեմա լինելու մասին: Այսինքն՝ վերոնշյալ մեջբերումից հետևում է, որ ոչ թե բռնությունն է քաղաքական խոսույթ, այլ այն լեզվափոխանցելու վերաբերյալ տեքստերն ու քննարկումները:

«Քաղաքական խոսույթ» և «բռնություն» երևույթների փոխհարաբերությունը պարզելու համար անհրաժեշտ է խոսել քաղաքական խոսույթի հիմնական գործառնությունների մասին, որոնք, ըստ Վ. Ա. Մասլովայի, երեքն են՝ իշխանության իրականացում, համոզում և մանիպուլյացիա (ձեռնածություն) [Маслова, 2008, 220]:

Նշվածներից ամենաակնառուն թերևս բռնության և իշխանության իրականացման գործառնությունի միջև առկա աղերսներն են, քանի որ դրանք կարելի է նկատել անգամ իշխանության

բացահայտ, իրավաչափ բռնության դեպքում: Օրինակ՝ հասարակական կարգը խախտող, չարտոնված հանրահավաքը ցրելու նպատակով կիրառվող հատուկ միջոցների (մահակ, ռետինե փամփուշտներ, արցունքաբեր գազ, ջրնետ մեքենա և այլն) ընտրությունը կարող է վկայել մարդու իրավունքները, ազատությունները հարգելու, անգամ սեփական ժողովրդին սիրելու մասին: Վերջինս ակնարկվել է նաև հայաստանյան քաղաքական դաշտում [Ստեփանյան, 2011], երբ զուգահեռներ էին անցկացվում 2008 և 1996 թթ. նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձությունների միջև: Վերոնշյալ հոդվածում ընդդիմությունը պնդում է, որ 1996-ին՝ իրենց կառավարման ընթացքում, իշխանությունը ցուցարարների վրա չի կրակել, մինչդեռ 2008-ի մարտի 1-ին այդ տարվա նախագահի ընտրությունների արդյունքներից դժգոհ ցուցարարների և իրավապահ մարմինների միջև բախումների հետևանքով առնվազն 10 մարդ է զոհվել, 100-ից ավելի են՝ վիրավորվել:

Իհարկե, կարելի է կասկածել, որ հրազեն կիրառել-չկիրառելը կարող է բացարձակապես այլ հանգամանքներով պայմանավորված լինել, և ընդդիմադիր գործիչներն էլ պարզապես ցանկանում էին ի նպաստ իրենց ներկայացնել դեպքերի զարգացումը, սակայն կարևորն այն է, որ այդուհանդերձ, բռնության վերոնշյալ դեպքերը նման մեկնաբանությունների հնարավորություն են տալիս, և եթե «խոսույթը բնութագրում է հաղորդակցային գործընթացը, որը հանգեցնում է որոշակի կառուցվածքի՝ տեքստի ձևավորմանը» [Чернявская, 2006, 69], ապա կարծում ենք՝ բռնությունն էլ կարող է դիտարկվել որպես քաղաքական խոսույթի բաղադրիչ հանդիսացող, որոշակի կառուցվածք ունեցող իրադարձություն, որի նկատմամբ կարելի է կիրարկել խոսույթի վերլուծության համապատասխան միջոցները:

Անդրադառնանք «համոզել» հասկացությանը. թվում է՝ բռնությունն առավելապես գործ ունի հարկադրելու, քան համոզելու հետ: Դա ակնառու է հատկապես, երբ խոսքը բռնարարն է իրականացնողի և դրա ազդեցության անմիջական կրողի մասին է: Սակայն լինում են դեպքեր, երբ բռնարարը պարունակում է

ուղերձ նաև այլոց համար: Հրապարակային մահապատիժը կամ անդամահատումը հավանաբար կարելի է դասել նման օրինակների շարքին: Այստեղ, իհարկե, համոզելու և հարկադրելու միջև սահմանն այնքան էլ հստակ չէ, սակայն, կարծում ենք, որ հարկադրում են մեկին մի բան անելու կամ չանելու, երբ տվյալ անձը հակառակ ցանկությունն ունի: Միևնույն ժամանակ, հասկանալի է, որ վերոնշյալ հրապարակային պատժամիջոցների ներկագտնվողների մեջ եղած կլինեն օրինապատմարդիկ, որոնք չեն էլ ցանկացել հանցանք գործել, և նրանց պարագայում այդ տեսարանը կվկայեր իրենց համոզմունքների իրավացիությունը:

Փորձենք բռնություն համոզելու գործառնություններ կայացնել հայաստանյան քաղաքական դաշտում վերջերս գրանցված միջադեպով. 2013 թվականի սեպտեմբերի 5-ի ուշ երեկոյան Երևանի մամուլի ակումբի ծրագրերի համակարգող Հայկակ Արշամյանին և «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի խորհրդի անդամ Սուրեն Սաղաթելյանին անձանոթ հաղթանդամ տղամարդիկ ծեծի էին ենթարկել [Րովհաննիսյան, 2013]: Պետք է նկատել, որ այս պարագայում բռնությանն ընդգծված քաղաքական երանգ է հաղորդել այն հանգամանքը, որ երկու ակտիվիստները վերադառնալիս են եղել Հայաստանի հանրապետական կուսակցության գրասենյակի դիմաց Մաքսային միությունը Հայաստանի անդամակցության դեմ բողոքի ցույցից: Իհարկե, այս դեպքում ակտիվիստների նկատմամբ կիրառված բռնությունն իրավաչափ չէր, սակայն սույն աշխատառնում դա չէ քննարկման նյութ: Այն, որ այդ արարքն ահաբեկելու ուղերձ էր կրում, կասկածի տեղիք չի տալիս, քանի որ հանցագործների անմիջական նպատակն ակտիվիստներին ծեծելն է եղել. նրանց չեն թալանել և նույնիսկ խոսքերով չեն սպառնացել, այլ պարզապես հռետորական մի հարց են ուղղել «Ախաբ՞ր եք», որի պատասխանը, ամենայն հավանականությամբ, նրանց չի հետաքրքրել, քանի որ, բազմիցս բացասական պատասխան լսելով անգամ, որը, ի դեպ, համապատասխանել է ճշմարտությանը, ծեծը չի դադարել:

Անշուշտ, եթե տվյալ բռնարարքը դիտենք որպես տուժածներին ուղերձ, ապա պետք է ասենք, որ փորձել են ոչ թե համոզել, այլ հարկադրել զերծ մնալ բռնարարքի բուն հեղինակների շահերը վնասող գործողություններից: Սակայն պետք է հաշվի առնել, որ վերոնշյալ բռնարարքն ուղերձ է պարունակում նաև համապատասխան բողոքի ակցիայի մյուս մասնակիցների համար, որոնց մոտ ուղերձի առնվազն երեք ընկալում կարելի է ենթադրել. 1) ոմանք կահաբեկվեն՝ կարծելով, որ ակցիային մասնակցելու պատճառով իրենց նկատմամբ նույնպես հնարավոր են համանման բռնաճնշումներ, 2) մյուսները գուցե հանգեն այն համոզման, որ իրենց ակցիաներն անօգուտ են անպատժելիության մթնոլորտում՝ հաշվի առնելով հանցագործների ցայսօր հայտնաբերված չլինելու փաստը, 3) ոմանք էլ, հակառակը, հնարավոր է համոզվեն իրենց գործողությունների արդարացիության մեջ, այսինքն՝ կարող են ենթադրել, որ խոսքային դաշտում իրենց հաղթանակով է պայմանավորված հակառակ կողմի՝ ֆիզիկական բռնության դիմելը: Յետևաբար, եթե առաջին խմբի դեպքում, այդուհանդերձ, գործ ունենք, թեկուզ անուղղակի, սակայն, հարկադրանքի հետ, ապա մյուս երկու խմբերի դեպքում նշված բռնարարքը կատարում է առավել ապես համոզելու գործառույթ:

Քաղաքական խոսույթի երրորդ հիմնական գործառույթը՝ մանիպուլյացիան, պետք է որ առավել դժվար լինի գտնել ֆիզիկական բռնության մեջ՝ հաշվի առնելով վերջինիս՝ մեկին ինչ-որ բան հասկացնելու բացահայտ բնույթը: Մինչդեռ «մանիպուլյացիան իրենից ներկայացնում է թաքցված ներազդում, որը մանիպուլյացիայի ենթարկվողը չպետք է նկատի» [Kapa-Mypza, 2012, 16]:

Վերոնշյալ բռնարարքում բացորոշված ուղերձները, այդուհանդերձ, մանիպուլյատիվ անվանելը ճիշտ չէ, քանի որ դրանք միտումնավոր «թաքցված» չէին վերջինիս հավանական հասցեատիրոջից՝ մի հանգամանք, որը պետք է առկա լինի մանիպուլյատիվ գործողության մեջ, այսինքն՝ մարդը պետք է



փոխի իր կարծիքը, դիրքորոշումը և այլն՝ առանց գիտակցելու, որ ենթարկվում է մանիպուլյացիայի [տե՛ս Kapa-Myp3a, 2012, 19]:

Անդրադառնանք մեկ այլ դեպքի. 2012 թ. մայիսի 8-ի առավոտյան երիտասարդ մարդկանց մի խումբ պայթեցրել էր Երևանի Փարպեցի փողոցի DIY ակումբը [տե՛ս armenianow.com, 2012], որից հետո զանգվածային լրատվամիջոցներում սկսեց շրջանառվել այն վարկածը, որ բռնարարքն իրականացվել էր սեռական փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողականության պատճառով: Սակայն որոշ ժամանակ անց լրատվամիջոցներում հայտնվեցին հրապարակումներ, որոնցում ասվում էր, թե ակումբի պայթեցումը քաղաքական պատվեր էր՝ հասարակական որոշակի զանգվածների ուշադրությունը շեղելու այլ հարցերից: Մասնավորապես, «Ա1+»-ի «Պոստսկրիպտում» հաղորդաշարի 2013 թ. հոկտեմբերի 1-ի թողարկման ժամանակ «Համագործակցություն և հանուն ժողովրդավարության» կազմակերպության նախագահ Ստեփան Դանիելյանը նշել է, որ բռնարարքը միտված է եղել պառակտումներ մտցնելու հասարակության այն հատվածում, որտեղ համախմբում կար որոշակի խնդիր լուծելու նպատակով: Մենք չենք փորձում վիճարկել բանախոսի տեսակետի ճշմարտացիությունը, այլ պարզապես ցանկանում ենք ցույց տալ, որ բռնությանն առնչվող համանման սցենար ևս հնարավոր է, հատկապես, եթե հաշվի առնենք Ս. Կարա-Մուրզայի այն պնդումը, որ հասարակական գիտակցության մանիպուլյացիան վերածվել է տեխնոլոգիայի, որը կիրառվում է հատուկ մասնագետների կողմից [տե՛ս Kapa-Myp3a, 2012, 17]: Եվ եթե, ըստ նրա՝ «մանիպուլյացիան բռնությունն չէ [...]» [Kapa-Myp3a, 2012, 19], ապա, համաձայնելով հեղինակի հետ, միաժամանակ կարելի է պնդել, որ, բռնությունը կարող է մանիպուլյատիվ լինել:

Այսպիսով, հնարավոր է եզրակացնել, որ թե՛ իրավաչափ և թե՛ անիրավաչափ բռնությունը հաճախ որոշակի քաղաքական ուղերձ է պարունակում, որը կարելի է բացորոշել՝ հաշվի առնելով քաղաքական խոսույթի հիմնական գործառույթները: Այս տիրույթում խնդրի լուծաբանումը հետագայում կարող է հիմք դառնալ առավել հանգամանալից անդրադարձների, որոնք տեսական

և գործնական լուծումներ կառաջադրեն հասարակական կյանքի կանոնակարգման հնարավորինս արդյունավետ կադաստրներ մշակելու և դրանք կյանքի կոչելու համար:

## **2.5 Գենդերային և էգզակամ արտակամիջոցների գենդերային տարբերությունները քաղաքական խոսույթում**

Գենդերային հիմնախնդիրները խոր արմատներ ունեն, իսկ քաղաքականության մեջ իշխանության համար պայքարում դրանք երբեմն առավել ընդգծված դրսևորումներ են ստանում: Թեև ազգային-մշակութային ամանձնահատկություններից էլ նելով՝ որոշ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում սեռական խտրականության առնչվող ներընտանեկան խնդիրները մեծամասամբ չեն բարձրաձայնվում, սակայն հասարակական և քաղաքական կյանքի զարգացումների զուգահեռ համանման երևույթներն իրենց արտացոլում են գտնում նաև այնպիսի բնագավառներում, որոնք անմիջական ուսումնասիրությունների համար առավել մատչելի են և հետևաբար պարարտհող են այս հիմնախնդիրները գիտության տեսանկյունից լուսաբանելու համար:

Գենդերային խնդիրներն առկա են ոչ միայն արևելյան՝ առավել ապես ավանդական երկրներում, այլ և ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող միջարքարևմտյան պետություններում, որտեղ թվում է, թե մարդու իրավունքների ոլորտում ձեռքբերված շոշափելի նվաճումները պետք է որ գրեթե վերացրած լինեին համանման խնդիրները: Թեև այստեղ իրավիճակն ընդհանուր ամամբ զգալիորեն փոխվել է վերջին հարյուրամյակի ընթացքում, սակայն այնպիսի առաջատար երկրում, ինչպիսին Միացյալ Թագավորությունն է, գենդերային միջարք խնդիրներ դեռևս չեն ստացել իրենց վերջնական լուծումը [տե՛ս Leach, et al., 2006, 399]: Բրիտանիայի քաղաքական կյանքում կանանց ներգրավվածությանը վերաբերող վիճակագրական ուսումնասիրությունները վկայում են, որ հասարակական կյանքի այս ոլորտում կին-տղամարդ հարաբերակցությունը խիստ անհավասար է, և միակցուցանիշը, որով կանայք գերակշռում են, քվեարկողների թվաքանակն է, ինչը,

թերևս պայմանավորված է նաև ընդհանուր բնակչության նույնի դասակարգման սեռի ներկայացուցիչների թվային գերակշռությանը [տե՛ս Leach, et al., 2006, 403]: 2016 թ. դրությամբ՝ Հայաստանի Հանրապետության բնակչության նույնի կանանց թիվը, թեև քիչ, սակայն նույնպես գերազանցում է տղամարդկանցը՝ 52%-ը 48%-ի հարաբերությամբ [Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016, 26]: Խորհրդարանում կանանց ներգրավվածության առումով, Միացյալ Թագավորության ցուցանիշը, ի տարբերություն Հայաստանի, թեև բարձր է (համապատասխանաբար՝ 29%-71% և 11%-89%), սակայն թվաքանակով տղամարդիկ դեռևս զգալիորեն գերակշռում են [The Global Gender Gap, 2016, 56]:

Տրամաբանական է, որ գենդերային այս անհամասնություններն իրենց շոշափելի ազդեցությունները պետք է ունենան նաև լեզվական տիրույթում, քանի որ հասարակական կյանքում ընդհանրապես, իսկ քաղաքականությունում մասնավորապես լեզուն ունի վճռական դերակատարություն իշխանության նվաճման, պահպանման և գործադրման առումով: Ի դեպ, որքան երկիրը ժողովրդավարական է, այնքան լեզվական ներազդման մեխանիզմներն ավելի և ավելի զարգացած և մշակված, քանի որ դրանք կարևոր միջոց են դառնում որոշակի խնդրի շուրջ հասարակական կարծիքի ձևավորման գործում [տե՛ս Маслова, 2008, 204]:

Այն որ կանանց և տղամարդկանց լեզվական վարքագիծը գենդերային առումով նշույթավորված է, ներկայումս կարծես թե այլևս կասկած չի հարուցում, ինչը պայմանավորված է այս ոլորտում կատարված բազմաթիվ հետազոտություններին արդյունքում ձեռքբերված փաստական հարուստ նյութով, որոնց համաձայն՝ լեզվի կիրառման գենդերային տարբերությունները կարող են դրսևորվել հնչյունային, ձևաբանային, բառային և այլ մակարդակներում, ինչպես նաև պայմանավորված լինել ոճական և որոշակի լեզվական միավորների գործածման հաճախականության առանձնահատկություններով [տե՛ս Holmes, 2008, 157-164]:

Բնական է, որ այս նկարագրական դիտարկումները պետք է խթանեին վերլուծաբանների հետաքրքրությունը՝ որոնելու նաև այն գործոնները, որոնցով հիմնականում պայմանավորված են համապատասխան լեզվական միջոցների ընտրության գենդերային տարբերությունները: Մարդակենտրոն հարացույցի փուլարկմամբ պայմանավորված՝ «20-րդ դարի 70-ական թթ. կեսերին սկիզբ են առնում լեզու-գենդեր հարաբերությունների ուսումնասիրման ոլորտում նպատակադրված հեազոտություններ» [Брутян, 2008, 9]: Ձեռքբերված տվյալները, սակայն, միանշանակ չեն մեկնաբանվում տեսաբանների կողմից: Այսպես, ոմանց կարծիքով՝ հասարակական կյանքում ունեցած մեծամասամբ ոչ այնքան բարձր դիրքը կնոջը ստիպում է այդ բացը լրացնել՝ գործածելով առավել ասպետ բարձր ոճի բառեր [տե՛ս Holmes, 2008, 164]: Յամանման գործոնների շարքում նշվում են կնոջ՝ հասարակական արժեքները պահողի դերակատարությունը, համեմատաբար ստորադաս հասարակական խմբերից առավել քաղաքավարի լեզվական վարքագծի ակնկալումը, խոսակցական կամ ցածր ոճի լեզվական միավորների գործածումը՝ որպես առնականության (machoness) դրևսորում և այլն [տե՛ս Holmes, 2008, 164-168]:

Միևնույն հիմնախնդրին առնչվող այլ ընտրանքային մեկնաբանություններ ևս եղան: Յետաքրքիր արդյունքներ տվեցին գենդերային ուղղվածություն ոչ խոսքային միջոցների ուսումնասիրությունները, ըստորոնց՝ «ուրիշների զգացմունքներն ընկալելու և սեփականն արտահայտելու առումով կանայք, ի տարբերություն տղամարդկանց, առավել դիպուկ են» [Основы теории коммуникации, 2006, 313]: Այս հանգամանքը, ի դեպ, կարող է ազդեցիկ գործոն լինել քաղաքական խոսույթի միջոցով հասարակության շրջանում որևէ հարցի շուրջ որոշակի կարծիք ձևավորելու գործում, հատկապես այն պարագայում, երբ տվյալ ընտրագանգվածում կանայք թվային գերակշռություն ունենան: Յաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «կանայք ավելի զգայուն են համատեքստային գործոնների նկատմամբ» [Holmes, 2008, 170], քաղաքական գործիչները հնարավոր է իրենց ելույթներում առավել հաճախ դիմեն զգայական ներազդման միջոցների

կիրարկմանը, քանի որ վերջինը «պակաս կարևոր դերակատարություն է ունի մարդկանց հոգեբանական տրամադրվածություն և դրամիջոցով նաև նրանց կողմնորոշումների և գործողությունների վրաներագդելու գործում» [Брутян, 2007, 38]:

Հասկանալի է, որ կանանց և տղամարդկանց միջև կենսաբանական տարբերություններն իրենց զգալի ազդեցություն են ունենային հասարակական կյանքում նրանց դերաբաշխման մեջ, քանի որ գենդերային տարբերությունները, առավելագույնի հասարակությունում, դրսևորվում են երեխաների ծնվելուց ի վեր՝ ծնողների միջոցով, որոնք մանկական հագուստի ընտրություն հարցում իսկ առաջնորդվում են հասարակության մեջ ընդունված միջարթ կարծրատիպերով, ինչպես օրինակ՝ նախապատվություն տալ իսկ վարդագույնին՝ աղջիկների, իսկ կապույտին՝ տղաների համար: Եվ ինչպես արդարացիորեն նշում են Պ. Էբերթը և Ս. Մքքոնել -Գինեթը, «երեխաները գենդերը ստանում են ամեն տեղից: [...] Այն արմատացած է հասարակական կյանքի յուրաքանչյուր ասպարեզում՝ մեր հաստատություններում, հանրային վայրերում, արվեստում, հագուստում, շարժուն ձևում» [Echert and McConnel-Ginet, 2003, 33]:

Լեզու-գենդեր հարաբերությունը վերաբերող առաջին ծավալուն անդրադարձը, թերևս, Ռոբին Լակոֆին է [Lakoff, 1973], որը, չնայած հակասական արձագանքների, հենքային նշանակություն ունեցավ ֆեմինիստական, կամ այլ կերպից տնի՝ գենդերային լեզվաբանություն ձևավորման համար: Պատահական է, որ շուրջ երեք տասնամյակ անց աշխատություն վերահրատարակությունը [Lakoff, 2004] լույս տեսավ՝ համալրված դրակարևորություն ու դերակատարություն անդրադարձող ավելի քան երկու տասնյակ հոդվածներով, որոնք հեղինակել էին տարբեր անվանի լեզվաբաններ:

Իր ուսումնասիրություններում Ռ. Լակոֆը նշում է միջարթ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են կանանց խոսույթին: Այսպես, որոշ բացականչական արտահայտություններ, որակելով

որպես «ավելի ու ժեղ» և «ավելի թույլ», նավերագրում է համապատասխանաբար՝ տղամարդկանց և կանանց՝ չանտեսելով նաև հնչերանգի, ինչպես նաև արտասանական ու ժգնության դերը և եզրվական համապատասխան միջոցների տարբերակման հարցում [տե՛ս Lakoff, 1973, 50]:

Ինչ վերաբերում է շարահյուսությանը, ըստ Ռ. Լակոֆի, թեև չկան այնպիսի կանոններ, որոնք բացառապես կանայք են գործածում, սակայն, ի տարբերություն տղամարդկանց, գրուցելիս նրանք առավել հաճախ են կիրառում տրոհված հարցեր [տե՛ս Lakoff, 1973, 53]: Այդուհանդերձ, հետազոտողները մնասիրությունները ցույց տվեցին, որ այս տեսակի հարցերի տարբեր գործառնությունը չայն կիրառությունները տարբեր հաճախականություն ունենալով տղամարդկանց և կանանց շրջանում: Օրինակ, ըստ համանման հետազոտությանը կիրառելի արդյունքների, որպես անորոշության արտահայտություն՝ արական սեռի ներկայացուցիչները գրեթե կրկնակի շատ են գործածում տրոհված հարցեր, մինչդեռ կանայք դիմում են շարահյուսական այս միջոցին քաղաքավարության կամ հուզաբարտահայտչականության նկատառումներից ելնելով [տե՛ս Holmes, 2008, 302-303]:

Այստիպես ներն առերևույթ հակասում են Ռ. Լակոֆի այն մտեցմանը, թե կանանց կողմից գործածվող և եզրվական որոշ միջոցներ ցույց են տալիս, որ իգական սեռի ներկայացուցիչները սովորաբար անվստահ են խոսակցության թեմայի առնչությամբ: Սակայն և եզրվաքանի նրբին դիտարկմամբ՝ հասարակությունը կանանց մշտապես սահմանափակում է և եզրվական որոշ միջոցների կիրառման շրջանակում, որը խախտողը ծաղրվում կամ քննադատվում է՝ որպես ոչ կանացի վարքագիծ դրսևորող [տե՛ս Lakoff, 1973, 47]: Այստեղից մի հետաքրքիր կանխավարկած կարելի է առաջ քաշել. հնարավոր է, որ կանանց կողմից տրոհված հարցերի գործածումը, ընդհանուր առմամբ, անվստահության նշան դիտարկվի հենց այն պատճառով, որ տղամարդիկ իրենք կիրառում են այն մասնավորապես այդ դեպքերում, ինչն էլ կարող է ազդեցիկ գործունի լինել հետազոտական որևէ աշխատանքում, եթե վերոնշյալ

Երևույթը գնահատողների գերակշիռ մասը տղամարդիկ էին: Չե տևաբար, կարծում ենք, որ ամեն դեպքում այս հանգամանքը հաշվի առնելը կարող է առավել անաչառ դարձնել տվյալ հետազոտության արդյունքները:

Չե տաքրքիր բացահայտումներ են արվել կանանց և տղամարդկանց խոսելու հաճախականության վերաբերյալ: Կանխակալ այն կարծիքը, թե առաջիններն ավելի շատ են խոսում, արտացոլված են տարբեր ժողովուրդների մոտասացվածքներում. “A woman’s tongue wags like a lamb’s tail” («Կինը շարժում է լեզուն, ինչպես գառնիր պաչը»), “Où femme y a, silence n’y a” («Որտեղ կակին, այնտեղ չկալռոն») [Coates, 2013, 9]:

Սակայն գենդերային լեզվաբանության հիմնախնդիրներով զբաղվող Դ. Թանընն իր հայտնի աշխատության ներքին մեկում, համադրելով մի շարք հետազոտության ներքին տվյալներ, հանգել է այն եզրակացության, որ հրապարակային ելույթներում տղամարդիկ, ի տարբերություն կանանց, ավելի շատ են խոսում, մինչդեռ վերջիններն ավելի ակտիվ են մասնավոր զրույցներում [տե՛ս Tannen, 2001, 76-77]:

Չաշվի առնելով վերոբերյալ կարծիքը, ինչպես նաև այն լրացնող պնդումը, թե «որտեղ խոսքը հնարավոր է բարձրացնի հեղինակությանը, այնտեղ տղամարդիկ ավելի շատ են տիրապետում խոսել աժամանակին» [Holmes, 2008, 305], մենք հետաքրքրական համարեցինք քննել «լռեցնելու» երևույթը քաղաքական խոսույթում՝ ըստ գենդերային տարբերակվածության: Պետք է նշել, որ այս թեման, թերևս, խորհրդանշական կարելի է համարել գենդերային լեզվաբանության համար, քանի որ 20-րդ դարի առաջին կեսում կանանց իրավունքների համար մղված պայքարում ձեռք բերված կարևորագույն հաղթանակներից մեկը քվեարկելու իրավունքն էր, որը Մեծ Բրիտանիայում ապահովվեց 1920-ականներին [տե՛ս Leach, et al., 2006, 399]:

Մեր առավել ասես լեզվագործաբանական ուղղվածություն և նեցող աշխատանքի սույն ենթազվ խում կփորձենք պարզել, թե Չայաստանի Չանրապետության Ազգային ժողովում որոշակի

թեմայի շուրջ ծավալված քննարկումների ժամանակ կին և տղամարդ պատգամավորները որքան հաճախ են կիրառել իրենց գործընկերներին և ռեցենսներ և էզզվական արտակամիջոցները: Վերջինների մասին խոսելիս՝ հիմնականում նկատի ենք ունեցել հորդորական հրամայական նախադասություները, թեև համանման բովանդակությամբ և տեսակի կառույցների և սմասամբ կանդիդատանք:

Վերոբերյալ երևույթը խորհրդարանական քննարկումների համատեքստում քննարկելը պայմանավորված է նախայն հանգամանքով, որ Ազգային ժողովում ելույթները վաղօրոք գրված, կամ առնվազն բանավոր նախապատրաստված են և ինուում, ինչը հնարավորություներ է տալիս խոսել և էզզվական ներազդման որոշակի միջոցների նպատակադրված ընտրությամբ մասին: Եվ երկրորդ՝ այդ ելույթները, երբեմն նույնիսկ դրանց առնչությամբ հնչող հանպատաստի ռեպլիկները, գրանցվում են, ներկայիս տեխնոլոգիական միջոցների զարգացվածությամբ պարագայում անգամ տեսագրվում և տեղադրվում են համացանցում, որոնց ազատ հասանելիություները հնարավորություներ է տալիս հետազոտողին առավել մանրակրկիտ և բազմակողմ հետազոտություներ կատարել:

Ուսումնասիրությամբ համար ընտրել ենք այնպիսի խնդիր, որը հասարակական արձագանքի առումով համեմատաբար առավել զգայուն է, և այդ է պատճառը, որ խորհրդարանական քննարկումների ժամանակ մեծ թվով պատգամավորների հանդես եկան ելույթներով, որոնցից շատերը էմոցիոնալ խիստ երանգավորված էին:

Քննարկվող օրինագիծը, որը հետագայում՝ 2016 թ. վերջին օրերնքի ու ժստացավ ձևակերպված է հետևյալ կերպ. «Չայաստանի Չանրապետությամբ պաշտպանությամբ ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությամբ պատճառված վնասների հատուցման մասին» [parliament.am, 2016]: Չատուկ համակարգի ներդրման արդյունքում տվյալ օրերնքի 11-րդ հոդվածի առաջին մասում նշված ֆիզիկական անձիք յուրաքանչյուր հաշվետու



Ժամանակաշրջանի համար պետք է կատարեն 1000 դրամ գումարի չափով դրոշմանային վճար [տե՛ս նույն տեղում], որի շուրջն էլ հիմնականում ծավալվում էին այն քննարկումները, որոնց ընթացքում հնչած էլ ույթներն էլ կազմել են մեր ուսումնասիրության բուն նյութը:

Յետագոտություները կատարվել է երեք օրերի (15.11.2016, 16.11.2016, 13.12.2016) կտրվածքով: Դրանց ընտրություները պայմանավորված է այն հանգամանքով, որ օրինագծի քննարկումն արդեն մտել էր առավել թե՛ քննարկման փուլը, կրքերն ավելի բորբոքված էին, և հետևաբար միմյանց լռեցնելու փորձերն էլ՝ հաճախաբար: Ուսումնասիրվել է ընդհանուր թվով 38 պատգամավորի 45 էլ ույթ: Կանայք բավականին ակտիվ մասնակցություներ են ունեցել քննարկմանը. 13 կին պատգամավորներից էլ ույթով հանդես են եկել 9-ը, որոնցից 5-ը՝ երկու, իսկ 1-ը երեք անգամ: Տոկոսային հարաբերությամբ՝ կանայք գրեթե 2.5 անգամ գերազանցել են տղամարդկանց, որոնց մասնակցություները կազմել է մոտավորապես 24%, մինչդեռ իգական սեռի ներկայացուցիչներինը՝ 69%-ից ավելի է եղել:

Լռեցնելու լեզվական արտակամիջոցների կիրառման առումով կին պատգամավորները տոկոսային հարաբերությամբ, թեև քիչ, սակայն նույնպես գերազանցել են տղամարդկանց, համապատասխանաբար 66% և 62%: Վերոնշյալ միջոցներն ընտրելիս հաշվի ենք առել հրամայական նախադասություները, այդ թվում՝ հորդորները և խնդրանքները, ինչպես նաև այն դեպքերը, երբ պատգամավորն իր համակարծիություներն է հայտնել նախորդել ույթ ունեցողի հրաման-հորդորին՝ ամբողջությամբ կամ մասամբ մեջբերելով այն: Օրինակ՝ Մ. Մելքումյանը, անդրառնալով գործընկերոջ էլ ույթին, ասում է. «Ես համաձայն եմ Մարգարիտ Եսայանի հետ, որ հայրենասիրության դասեր չտանք» [parliament.am, 13.12.2016]:

Լեզվագործաբանական տեսանկյունից լռեցնելու լեզվական արտակամիջոց ենք համարել նաև պատմողական այնպիսի նախադասություները, որոնց բովանդակային պլանը

հնարավորություն է տալ իս հասցեատիրոջ կամ հասցեատերերի ներկայություն պայմանում դրանք դիտարկել որպես բացահայտ հորդոր կամ հրաման: Այսպես, Կ. Նահապետյանն ասում է. «Չի կարելի ուղղակի այստեղ անհիմն, դատարկ մեղադրանքներ հնչեցնել» [parliament.am, 13.12.2016]:

Այն գործոնները, որոնց ազդեցությունը լռեցնելու արտակամիջոցների ընտրության վրակազմել է մեր ուսումնասիրության առանցքը, ընտրողաբար առանձնացրել ենք՝ ելնելով այն կանխավարկածից, որ կանայք հասարակական կյանքում ունեցած որոշակի դիրքի և դերակատարության պատճառով հնարավոր է ավելի հաճախ դիմեն լեզվական ներազդման արտակամիջոցներին իրենց գործընկերների խոսքը սահմանափակելու նպատակով՝ դրանով իսկ փորձելով նվազեցնել հասարակության շրջանում կանանց կարծիքի նկատմամբ թերահավատվերաբերմունքը, քանի որ լռեցնել կարողանալը ենթադրում է որոշակի հեղինակություն կամ առնվազն առավել բարձր դիրք:

Մեր կարծիքով՝ հրամայական նախադասությունների և բարոյախրատական խոսքի հաճախակի կիրառումը կանանց կողմից հնարավոր է պայմանավորված լինի հասարակության ուսումնարմատավորված այն մտայնության, թե «կանանց տեղը տունն է», որն իրարտահայտությունն է գտել նաև անգլերեն համապատասխան ասացվածքում՝ “A woman’s place is in the home”, թեև ներկայում այն «համարվում է կանխադատ, հնաճ և վիարվորական» [Titelman, 2000, 372]: Տրամաբանորեն այս հանգամանքի հետե կապված երեխաների դաստիարակելու բեռը մեծապես կանանց ուսերին թողնելու միտումը, որն էլ իր հերթին արտացոլվում է Չայաստանում մանկավարժության մեջ ընդհանրապես, իսկ դպրոցական մանկավարժության մեջ մասնավորապես կանանց ներգրավվածության գերակշռություն, թեև աշխատանքի այս անհավասար բաշխման մեջ, կարծում ենք, ազդեցիկ գործոն է նաև մասնավորապես Չայաստանում ուսուցչի աշխատավարձի համեմատաբար ցածր լինելը, ինչը պակաս գրավիչ է դարձնում այս մասնագիտությունը տղամարդկանց համար: Ըստ

«Հանրակրթությանը Հայաստանում» առցանց տեղեկատուի՝ 2015-2016 թթ. ուսումնական տարում Հայաստանի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում իգական սեռի ուսուցիչները կազմել են այս մասնագիտությանը աշխատողների մոտ 85%-ը [տե՛ս stat.armedu.am]:

Սույն ուսումնասիրությունում հաշվի ենք առել պատգամավորների՝ որոշակի խմբակցությունում ընգրկված լինելը (եւ ույթ ունեցած պատգամավորների թվում կային նաև անկուսակցական պատգամավորներ, որոնք ընդգրկված էին որևէ խմբակցությունում, ինչպես նաև մեկ անկախ խորհրդարանական), պատգամավորական փորձը, մանկավարժական կրթությանը կամ դասավանդման փորձը, երեխաներ ունանալու հանգամանքը և տարիքը: Հավելվածում ներկայացված հինգերորդ և վեցերորդ աղյուսակներում նշել ենք նաև երեք օրերի ընթացքում եւ ույթների քանակը և լռեցնելու արտակամիջոցների կիրարկման հաճախականությունը:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, թեև եւ ույթ ունեցած տղամարդ պատգամավորների կեսից ավելին (58%) գործածել է լռեցնելու արտակամիջոցներ, կին խորհրդարանականների ցուցանիշը համեմատական կարգով նկատելիորեն բարձր է (77%): Ընդ որում, գենդերային երկու խմբերում էլ երկուսն էլ պատգամավոր առավել հաճախ են դիմել վերոնշյալ մեթոդին, սակայն, այս դեպքում ու ույթ սկսելուց քաղցանցել են արական սեռի իրենց գործընկերներին՝ գրեթե երեք անգամ ավելի հաճախ գործածելով լռեցնելու արտակամիջոցները, որոնցում հաճախ կիրառվել են «հերիք է», «չի կարելի», «ամոթ է» և «չպետք է» հանդիմանական արտահայտությունները:

Թերևս վերջին հանգամանքը մեզ հուշեց, որ վերոնշյալ միջոցների հաճախակի կիրառությունը հնարավոր է պայմանավորված լինի մանկավարժական կրթությանը կամ դասավանդման փորձով, որի ընթացքում դասավանդողը, դաստիարակելու նկատառումներից ելնելով, պետք է որ հաճախակի

կիրառելի նշված արտահայտությունները: Հետաքրքրական է, որ այս ցուցանիշով ելույթ ունացած կին պատգամավորները համեմատական ցուցանիշով զիջում են տղամարդկանց, համապատասխանաբար՝ 42% և 58% հարաբերությամբ:

Ուսումնասիրությունում տարիքի գործոնը ներառելիս՝ հաշվի ենք առել այն հանգամանքը, որ տարիքով մեծերին, որպես կանոն, երիտասարդները որոշակի պատկանանքով և ակնածանքով են վերաբերվում, հետևաբար առաջինները հեղինակությամբ ավելի բարձր են զգում կրտսեր սերնդի ներկայացուցչների առաջ, և չի բացառվում, որ հրաման, հորդոր, հանդիմանանք պարունակող ասույթները գերակշռեն նրանց խոսքում, երբ վերջինիս հասցեատերերը, կամ նրանցից շատերը համեմատաբար երիտասարդ լինեն:

Մեր ուսումնասիրության տվյալների համաձայն՝ լռեցնելու միջոցներ գործած 17 տղամարդ պատգամավորներից 9-ը 50-ից բարձր տարիքի են: Հարաբերականորեն այստեղ կանայք գրեթե 20%-ով գերազանցել են տղամարդկանց. իրենց գործընկերներին լռեցնելու կամ նրանց խոսքը սահմանափակելու բովանդակությամբ ասույթներ կիրառած 7 կանանցից 5-ը 50-ն անց են:

Տոկոսային հարաբերությամբ գենդերային տարբերություն և չկապատգամավորական փորձի առումով. երկու խմբում էլ գրեթե 70%-ը նախկինում եղել է խորհրդարանական: Երեխա(ներ) ունենալու հանգամանքով նույնպես գրեթե հավասար իրավիճակ է. համեմատվող խմբերում մեկական պատգամավոր չունի երեխա:

Թեև իշխող կուսակցության խմբակցությունում ընդգրկվածության առումով լռեցնելու արտակամիջոցներ գործած կին պատգամավորները զգալիորեն գերազանցում են տղամարդկանց (համապատասխանաբար՝ 57%-ը 51%-ի հարաբերությամբ), սակայն պետք է հաշվի առնել, որ դեռևս 2016 թ. Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) և Հայ Յեղափոխական Դաշնակցություն և կուսակցության (ՀՅԴ) միջև կնքվել է քաղաքական համագործակցության համաձայնագիր

[president.am, 2016], ինչ ը հու շ ու մ է , որ ԶՅԴ-ն ամենայն հավանականութեամբ կստատարեր իշխանութեան ներկայացրած օրինագիծը, իսկ այս դեպքում վերոբերյալ տոկոսային հարաբերութեանը գրեթէ հավասարվում է՝ հանրապետական խմբակցութեանը ներկայացնող համապատասխան պատգամավորների շարքը դառնակցական գործընկերների համալրմամբ:

Նշված գործոններին կարելի է հավելել ևս մեկը, որը սակայն չենք ընդգրկել ներկայացված աղյուսակներում, քանի որ վերաբերում է ընդամենը երկու պատգամավորի՝ Զեղինե Նաղդալյանին և Էդուարդ Շարմազանովին, որոնք երկուսն էլ ԶԶ Ազգային ժողովի նախագահի տեղակալներն էին այդ պահի դրութեամբ և իրենց գենդերային խմբերում, համապատասխանաբար, բարձր հաճախականութեամբ են կիրառել գործընկերներին լռեցնելու արտակալ եզրական միջոցները:

Զետազոտութեան արդյունքներից կարելի է եզրակացնել, որ, թեև համեմատված գործոններն ամենայն հավանականութեամբ որոշակիորեն ազդել են լռեցնելու միջոցների կիրառման հաճախականութեան վրա, սակայն դրանք հիմնականում ընդհանուր ազդեցութեան բնույթի էին և գենդերային առումով չնշույթավորված: Թերևս իրավացի են այն տեսաբանները, որոնք գենդերային հիմնախնդիրների առանցքը համարում են «տղամարդու գերիշխանութեամբ հասարակութեանում կնոջ զբաղեցրած ստորադաս դիրքը» [Holmes, 2008, 309], ինչն առաջին հայացքից հակասում է հետազոտութեանից ստացված այն արդյունքին, որ կին պատգամավորներն առավել հաճախ են դիմում գործընկերներին լռեցնելու արտակալ միջոցներով լռեցնելու կամ նրանց խոսքը սահմանափակելու մեթոդին: Սակայն, մեր կարծիքով՝ այս հանգամանքը, ընդհակառակը, մեկանգամ ևս վկայում է, որ կանայք այդ կերպ փորձում են հաղթահարել հասարակութեանում վաղուց ձևավորված համապատասխան կարծրատիպը:

Այս երևութի գիտակցմամբ կարելի է հետագայում ծավալուն և անդրադարձով խնդիրն առավել հանգամանորեն ուսումնասիրել՝

բազմակողմանիորեն հետազոտելով հասարակական այն  
գործոնները, որոնք վճռորոշ ազդեցություն ունենում են  
և/կամ են միջոցների կիրառման հաճախականության վրա  
գեղեցիկ համապատասխան խմբերում:

### **ԳԼՈՒԽ 3. ԼՈՒԵԼՈՒ ԻՄԱՏՏԱՇԱՐԱՅՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԼԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**

#### **3.1 Ստորոգական բաղադրիչների վերլուծությանը՝ որպես ծածկասույթների իմաստաբանական բացորոշման միջոց քաղաքական խոսույթում**

Ինչպես արդարացիորեն նշում է Յու. Ս. Ստեպանովը, «իր իրական գոյության մեջ լեզուն հավասարապես ծավալվում է երեք չափումներում [իմաստաբանական, շարահյուսական և գործաբանական]» [Степанов, 2010, 3]: Դիտարկելով լեզույնը որպես հաղորդակցային երևույթ՝ մենք նույնպես կփորձենք տեսնել, թե ինչպես կարող է այն դրսևորվել նշանի ծավալման՝ Չ. Ու. Մորիսի որոշարկած երեք տիրույթներում [տե՛ս Morris, 2001, 50]:

Սակայն խնդիրն ունի իր ուրույն բարդությունը, քանի որ սույն գլխում մենք լեզույնը չենք դիտարկում որպես հաղորդակցային նշան: Այն պարզապես մի երևույթ է, որի պարագայում որոշակի նախադրույթ հաղորդակցային գործընթացում հնչյունային կաղապար չի ստանում, սակայն հաղորդվում կամ թաքցվում է խոսքային այլ միավորների միջոցով, իսկ լեզվականորեն չկաղապարված այդ նախադրույթն էլ, որպես աշխատանքային եզր, առաջարկում ենք անվանել «ծածկասույթ»:

Մենք, իհարկե, չենք հավակնում աստեղախոսության շրջանակներում հնարավորինս սպառիչ դասակարգում տալ այն բոլոր իմաստաշարահյուսական և լեզվագործաբանական միջոցներին, որոնց կիրարկմամբ քաղաքական գործիչները լեզում կամ լեզույն են մատնում որոշակի ասելիք, այլ կփորձենք ցույց տալ մեր նախանշած երևույթի դրսևորման մի քանի ակնառու օրինակ: Բացի այդ, մեր առաջադրած դիտանկյունից վերլուծության կենթարկենք միևնույն քաղաքական գործիչի հեղինակած և միմյանց հետ փոխկապակցված մի քանի տեքստ՝ երեք տարբեր շեշտադրումներով, այսինքն՝ որևէ տիրույթում խնդիրն ուսումնասիրելիս անհրաժեշտության դեպքում հաշվի կառնենք

նաև տվյալ երևույթի աղերսները և եզրական նշանի դրսևորման մյուս հարթությունների հետարդյունավետության նպատակով:

Երբեմն, թվարկելով և ռելու համապատասխան մի քանի միջոց, մենք այդուհանդերձ չենք մանրամասնել ուսումնասիրվող տեքստում դրանց մասնավոր դրսևորումները կամ չափազանց ակնհայտ, կամ էլ նախապես այլ և եզրաբանների աշխատանքներում հանգամանորեն ներկայացված և ինելու պատճառով:

Հաղորդակցային նվազագույն միավորի խնդրին անդրադառնալիս՝ մեզ համար ուղենշային ենք համարել Ջ. Ռ. Սերլի մոտեցումը, ըստ որի՝ նախադասության առկայացումը համապատասխան խոսքային իրադրությունում իլոկուտիվ ակտն է, իսկ վերջինս էլ պետք է դիտարկել որպես և եզրական հաղորդակցման նվազագույն միավոր [տե՛ս Сербь, 1986, 152]: Այս դրույթով ենք առաջնորդվել քաղաքական խոսույթում «լռություն» ֆենոմենն ուսումնասիրելիս:

Բանն այն է, որ քաղաքական գործիչները (և ոչ միայն) երբեմն խուսափում են արտաբերել ոչ թե մի ամբողջ ասույթ, այլ՝ որոշակի բառ կամ բառակապակցություն: Եվ քանի որ, հետևելով Ա. Յավորսկուն [տե՛ս Jaworski, 1993, 73], «լռություն» ասելով մենք հիմնականում նկատի ունենք ասելիքի բացակայությունը, հետևաբար որևէ բառ չասելը առաջին հայացքից թվում է՝ պետք է որ դուրս մնար մեր ուսումնասիրման շրջանակներից, քանի որ ասելիքը, ըստ էության, առկայացվում է ստորոգական կառույցի, այն է՝ նախադասության միջոցով:

Սակայն, տեղին է հիշել Լ. Վիտգենշտայնի հայտնի խոսքը. «Աշխարհը ոչ թե իրերի, այլ փաստերի ամբողջությունն է» [Wittgenstein, 2002, 5]: Մենք հետաքրքիր աղերսներ ենք նկատում տրամաբանական-փիլիսոփայական տրակտատի հեղինակի պնդման և Է. Ռ. Աթայանի՝ ստորոգմանն առնչվող համակողմանի անդրադարձի միջև [Աթայան, 1981, 192-236]: Վերջինս, մասնավորապես, կարծիք է հայտնում, որ «և եզրում եղած ամեն բան, ակնհայտ կամ թաքուն, ուղիղ կամ անուղղակի ձևով «ասվում է» ամեն բանի մասին, ուստի առնվազն *ինքնին* (ներքնորեն) ստորոգական է» [Աթայան, 1981, 212]:



Ստացվում է, որ յուրաքանչյուր բառ կամ բառակապակցություններունակորեն ստորոգական որոշակի միավորների ներխուսցում է:

Սա իր հերթին հիշեցնում է իմաստի բաղադրիչային վերլուծությունը, որի ընթացքում նույն իմաստային դաշտում ընդգրկված բառերը միմյանց հակադրելով՝ դուրս են բերվում դրանց հասկացության (կոնցեպտուալ) իմաստային կորիզը կազմող ընդհանուր և տարբերակիչ հատկանիշների փնջերը [տե՛ս Абрамян, Акопян, 2010, 75]: Մոտեցումը հիմնականում նույնն է, միայն թե այս պարագայում այդ հատկանիշները դիտարկվում են ստորոգական կառույցներում: Ավելին, պետք է նշել, որ համապատասխան բառային միավորի իմաստային բաղադրիչները ներկայացնելիս ավանդաբար կիրարկվող գումարում և հանում (+/-) նշանները ստորոգման յուրօրինակ դրսևորումներ են, որոնք ենթադրում են տվյալ հատկանիշի վերագրումը և բացառումը:

Ըստ Է. Ռ. Աթայանի՝ ստորոգական մտահղացումների (դիտավորությունների) բացահայտման գործընթացը յուրօրինակ վերծանման բանալի է՝ բացորոշելու խորքայինը՝ այն ինչ թաքնված է ասվածի տակ [տե՛ս Աթայան, 1981, 213]: Յետևաբար, իմաստի բաղադրիչային վերլուծության օրինակով կարող ենք հաղորդակցային լեզվաբանության շրջանակներում գրեթե միևնույն երևույթը, նպատակահարմարություննից ելնելով, անվանել ասույթի ստորոգական բաղադրիչների վերլուծություն, իսկ այն ներակա ասույթները, որոնք ենթակա են բացորոշման, կարելի է կոչել ծածկասույթներ:

Բառերը, հատկապես նրանք, որոնք նաև արտահայտում են որոշակի հասկացություն և, կամ, ինչպես արդարացիորեն նշում է Յու. Ս. Ստեպանովը, ձգտում են դառնալ հասկացություն [տե՛ս Степанов, 1975, 13], իրենց իմաստային դաշտում կարող են պարունակել մի քանի ներունակ ստորոգական շերտեր, որոնցից մեկը համապատասխան իրադրությունում առկայացվում է, Է. Ռ. Աթայանի խոսքով՝ «պայքարում «արևի տակ»՝ մակերեսին, տեղ նվաճելու համար» [Աթայան, 1981, 213]:

Այս «պայքարը» առավել հետաքրքրական է, երբ այն դիտարկվում է հաղորդակցային իրադրության լայն համատեքստում: Մեր կարծիքով՝ վերջինի գրեթե բոլոր քաղաքիչները, սկսած ասույթի առանձին միավորներից մինչև հաղորդակցային իրադրության թեմատիկ խորապատկերը, կարելի է դիտարկել Ֆ. դը. Սոսյուրի առաջարկած հարացուցային (իր խոսքով՝ գուգորդային) և շարակարգային առանցքներով: Յետաքրքրական է, որ շվեյցարացի լեզվաբանը այս հարաբերությունները ներկայացնելիս օրինակ է բերել նաև արտալեզվական իրողությունները (սյան շարակարգային հարաբերությունը՝ շինության մյուս մասերի, և գուգորդային հարաբերությունը՝ տվյալ տարածության մեջ ոչ առկա մյուս տեսակի [հոնիական, կորնթական և այլն] սյուների հետ) [տե՛ս Ֆ. դը Սոսյուր, 2008, 189-190]՝ սկզբունքորեն հնարավոր դարձնելով դրա կիրարկումը ճանաչողական առավել լայն համատեքստում:

Վերադառնալով քաղաքական խոսույթին՝ վերցնենք հայտնի մի օրինակ՝ Բ. Օբամայի՝ 2009 թ. ապրիլ քսանչորսյան ելույթը, որում նա, առաջին անգամ որպես ԱՄՆ նախագահ, կիրառում է անգլերեն տառադարձմամբ հայերեն «Meds Yeghern» բառակապակցությունը [Obama, 2009]: 2008-ին Բ. Օբաման, երբ դեռ սենատոր էր, իր ելույթներից մեկում խոստացել էր ճանաչել Յայնց ցեղասպանությունը [տե՛ս anca.org, 2008]: Սակարևոր է նշել՝ ոչ թե քաղաքական, այլ գուտ լեզվագործաբանական ուսումնասիրության նկատառումներից ելնելով, քանի որ, ինչպես հետագայում պարզվեց, ապրիլ քսանչորսյան հիշատակի օրվա կապակցությամբ իր բոլոր ելույթներում՝ արդեն որպես ԱՄՆ նախագահ, նա «genocide» բառի փոխարեն սկսեց գործածել «Meds Yeghern» արտահայտությունը: Նշված բոլոր ելույթները ներկայում հասանելի են Սպիտակ տան պաշտոնական կայքում ([www.whitehouse.gov](http://www.whitehouse.gov)):

Թեև «ցեղասպանություն» և «եղեռն» բառերը առնվազն Ա. Մ. Սուքիասյանի հեղինակած բառարանում տրված են որպես հոմանիշներ [տե՛ս Սուքիասյան, 2009], այդուհանդերձ, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Ա. Մասլովան, «հոմանշությունը

թվացյալ երևույթ է, քանի որ յուրաքանչյուր այլ ընտրանքային բառույթի հետևում կանգնած է անհատական հասկացութային կառուցվածք» [Маслова, 2008, 108]: Համեմատելով մի շարք հայերեն հեղինակավոր բառարանների (Ս. Մալխասեանց 1944, Է. Բ. Աղայան 1976 և այլք) համապատասխան բառահոդվածները՝ պարզ է դառնում, որ այս երկու բառային միավորները պատկանում են միևնույն բառիմաստային խմբին, քանի որ դրանք բավարարում են դրահամարանհրաժեշտ երկու պայման [տե՛ս Абрамян, Акопян, 2010, 74]. Այս դրանցում առկա է ընդհանուր իմաստային հատկանիշ՝ արտահայտված «կոտորած» գերբառույթով (архилексема), և երկրորդ՝ ունեն միևնույն խոսքամասային պատկանելիությունը՝ գոյական:

Բառային մակարդակով՝ այս գույգի հակադրմամբ պարզվում է, որ «ցեղասպանություն»-ը ունի հետևյալ տարբերակիչ հատկանիշը՝ «ոչ նչացում՝ ռասսայական, ազգայնական կամ կրոնական շարժառիթներով»: Տրամաբանական առումով՝ այս երկու միավորները գտնվում են ներառման հարաբերության մեջ, այսինքն՝ «եղեռն» բառի իմաստային ծավալն ավելի լայն է, քան «ցեղասպանություն» հասկացությանը:

Իմաստի բաղադրիչային վերլուծության մեջ, սակայն, խոսվում է նաև, այսպես կոչված թաքուցյալ և ներուկային իմակների (семь) մասին: «Դրանք այն իմակներն են, որոնք ներառված չեն որևէ առարկայի պարտադիր տարբերակիչ հատկանիշների մեջ, որոնցով այդ առարկան տարբերվում է իր նմաններից, սակայն համապատասխան լեզվակիր հանրությանը հայտնի կամ տվյալ առարկային վերագրվող հատկանիշների շարքում են» [Арнольд, 1991: 55]:

Առաջնորդվելով այս մոտեցմամբ՝ կարող ենք ասել, որ բառային միավորի հիմքում կարող է գտնվել մեկ կամ մի քանի ստորոգական կառույց, որոնք դեռևս ընդգրկված չեն բառարաններում, տվյալ բառի սահմանման տեսքով, սակայն հաճախ նկատի են առնվում համապատասխան հանրության կողմից որոշակի համատեքստերում կիրարկվելիս: Նման միավոր կարելի է համարել հենց «եղեռն» բառը, որը, մեր ուսումնասիրության

շրջանակներում գործածված ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններից (Մալխասեանց 1944, Աղայան 1976, Սուքիասյան 2009) և ոչ մեկում սահմանված չէ որպես «ցեղասպանություն», մինչդեռ հայ հասարակության շրջանում հայտնի է նաև այդ իմաստով, ինչի մասին կարող է վկայել, օրինակ՝ «Չայկական սովետական հանրագիտարանի» յոթերորդ հատորի «Մեծ եղեռն» հոդվածը, որտեղ, որպես հոմանիշ, գործածվում է «Չայերի գեղոցիդ» բառակապակցությունը:

Մեր կարծիքով՝ Բ. Օբամայի՝ հայերի հիշատակի օրվա առիթով հրապարակված ելույթներում ծածկասույթ կարելի է համարել հետևյալ նախադրույթը (պրոպոզիցիան)՝ «1915 թ. Օսմանյան կայսրությունը հայերին ցեղասպանության է ենթարկել»: Մենք միտումնավոր ենք գործածում «նախադրույթ» եզրը, քանի որ նկատի ունենք ոչ թե հենց վերոնշյալ նախադասությունը, այլ այն իմաստային անփոփոխակը, որը, սկզբունքորեն, կարող է նաև կերպ ձևակերպված լինել, եթե նրանում լիարժեքորեն պահպանվի վերոնշյալ բովանդակությունը:

Նկատի ունենալով վերը շարադրվածը՝ փորձենք ԱՄՆ նախագահի ելույթներից որևէ մեկը դիտարկել որպես ամբողջական հաղորդակցային իրադրություն: Եթե մեկ նախադասությամբ բնութագրենք տվյալ իրադրության առանցքը, ապա կարող ենք ասել, որ Բ. Օբաման 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացրած էթնիկ զտումը որակում է «եղեռն»: Ինչպես վերը նշեցինք, «եղեռն» հասկացությունը մենք դիտարկում ենք որպես ներուկակորեն ստորոգական որոշակի կառույցներ կրող միավոր, որոնցից մեկը առկայացվում է տվյալ խոսքում:

Ընդունելով այն փաստը, որ «եղեռն» հասկացության ինտենսիվում (իմաստի պարտադիր բաղադրիչում) բացակայում է «ցեղասպանություն» իմաստը, (սակայն վերջինը հարաբերակցվում է «եղեռն» բառին, երբ մասնավորապես հայերը կիրառում են այն 1915 թ. պատմական հայտնի անցքերին անդրադառնալիս), կարող ենք ասել, որ Բ. Օբամայի կողմից այդ

հայերեն բառի հիշատակումը պետք է որ բավարարեր բազմաթիվ հայերի ակնկալիքը՝ լսելու (կամ կարդալու) ԱՄՆ նախագահի շուրթերից ողբերգական դեպքերի համարժեք որակումը: Այդուհանդերձ, լրատվամիջոցներում բազմիցս հնչեցին մեղադրանքներ այն մասին, որ գերտերության ղեկավարը հավատարիմ չեղավ նախընտրական քարոզարշավի ժամանակ իր տված խոստմանը և Օսմանյան կայսրության իրականացրած ջարդերը չորակեց «ցեղասպանություն»:

Այն որ «Meds Yeghern» ասելով Բ. Օբաման նկատի չի ունեցել «ցեղասպանություն», վկայում է նաև հետագայում 2015 թ. ապրիլի 24-ին Սպիտակ տան մամուլի խոսնակ Ջ. Ըրնեսթի՝ ճեպագրույցի ժամանակ իրեն ուղղված հարցի պատասխանը: Լրագրողը հարցնում է. «[ԱՄՆ նախագահը] գործածում է «Meds Yeghern» բառը. նա գործածում է մի բառ, որը չի նշանակում ցեղասպանություն»: Ջ. Ըրնեսթը պատասխանում է. «Բայց նա [Բ. Օբաման] նշում է, որ կարևոր է ճանաչել պատմական այդ սարսափելի իրադարձության ընթացքում 1.5 մլն. հայերին սպանելու փաստը» [Press Briefing by Press Secretary Josh Earnest, 2015]: Այսինքն՝ Սպիտակ տան մամուլի խոսնակը չի հերքում, որ Բ. Օբաման «Meds Yeghern»-ը գործածել է այլ իմաստով:

Այս ամենից հետո հարց է առաջնում, թե ինչու ԱՄՆ նախագահի ապրիլ քսանչորսյան ելույթներում «Meds Yeghern» արտահայտությամբ չի առկայացվում «ցեղասպանություն» իմաստը, որը առնվազն հայ հասարակության շրջանում հանրանշանակ է: Լեզվագործաբանական դիտանկյունից խնդրի բանալին պետք է նախ փնտրել թերևս անմիջական համատեքստում: Չաճախ երբ ինչ-որ մեկը որոշակի հանրության շրջանում փորձում է շրջանառել նոր եզր կամ հասկացություն, որպես կանոն, սահմանում է այն կամ առնվազն ինչ-որ կերպ փորձում հասկանալի դարձնել հաղորդակցի համար: Այլ կերպ ասած՝ արդյունավետ հաղորդակցության համար անհրաժեշտ է հետևել Գ. Փ. Գրայսի առաջարկած «հստակության» կանխադրույթին (պոստուլատին) [տե՛ս Грайс, 1985, 223]:

Անգլերեն համատեքստում «Meds Yeghern» բառակապակցությունը հազիվ թե հնարավոր լինի նոմինալ սահմանում անվանել, քանի որ հատկապես հայերեն չիմացողի համար այն ընդամենը հատուկ անուն է, իսկ «վերջիններս ունեն նպատակ, սակայն զուրկ են նշանակությունից» [Языковая номинация, Общие вопросы, 1977, 190]: Նախ պետք է նշել, որ ապրիլ քսանչորսյան իր առաջին ելույթում ԱՄՆ նախագահ Բ. Օբաման «Meds Yeghern»-ը գործածում է որպես նախադասության թեմա, այսինքն՝ մի հայտնի բան, ասելով՝ «Մեծ եղեռնը պետք է շարունակի ապրել մեր հիշողություններում այնպես, ինչպես այն ապրում է հայերի սրտերում» [Obama, 2009]: Հետևաբար, նա, ով հայերեն չիմանալով՝ կփորձի հասկանալ տվյալ արտահայտությունը, ամենայն հավանականությամբ տեքստում կփնտրի, այսպես կոչված, հանգուցային բառեր, որոնք կօգնեն պարզել, թե որն է համապատասխան բառակապակցության արտաբերական վերաբերելին: Այդպիսի բառակապակցություններից կարելի է առանձնացնել հետևյալները՝ «20-րդ դարի մեծագույն դաժանություններից մեկը», «1915 թ. սարսափելի իրադարձությունները» և այլն [տե՛ս նույն տեղում]:

Թեև նշված ուղերձում հայտնի իրադարձությունները առերևույթ ցեղասպանությունն չեն որակվում, մեզ, սակայն, հետաքրքրում է այն հանգամանքը, թե ինչու, այդուհանդերձ, հայերի շրջանում իրենց հայրենակիցների կողմից արտասանվող «եղեռն» բառույթը չի առաջացնում միևնույն վրդովմունքը, այն է թե՛ հաղորդողը փորձում է խուսափել ցեղասպանություն բառից: Հենց այս հանգամանքով պայմանավորված ենք փորձել խնդիրը դիտարկել վերտեքստային մակարդակում:

Փաստորեն, եթե հաղորդակցային այս իրադրությունում հարացուցային մակարդակով հնարավոր լիներ փորձառական ձևով փոխել հաղորդողին, օրինակ՝ այնպիսի մեկով, որը շարունակ բարձրաձայնում է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու անհրաժեշտությունը, հնարավոր է, որ հաղորդակցության մյուս բևեռում «եղեռն» բառն ընկալվեր որպես «ցեղասպանություն», այսինքն՝ տեղի ունենար նշված հասկացության ստորոգական

շերտերի հերթագայ ության փոփոխություններում դրա աստիճանակարգային սանդղակում:

Այս պարագայում առաջ է գալիս նաև մակրո- և միկրո-իրադարձությունների հարց, քանի որ հարացուցային առանցքում առավել մեծ փոփոխությունները նույնպես կարող են ազդել բառի ստորոգական բաղադրիչների առկայացման վրա: Այսպես, եթե փոխվի Միացյալ Նահանգների քաղաքական դիրքորոշումը տվյալ հարցի առնչությամբ, և պետական մակարդակով ճանաչվի Հայոց ցեղասպանությունը, ապա ԱՄՆ նախագահների հետագա ելույթներում «Meds Yeghern»-ը, ամենայն հավանականությամբ, կդիտվի որպես «ցեղասպանություն» հասկացության հոմանիշ կառույց: Հետևաբար, այս պարագայում կարող ենք ասել, որ ԱՄՆ քաղաքականությունը նույնպես կազմում է հաղորդակցային իրադրության մաս և հանգեցնում որևէ ներուճակ ստորոգական բաղադրիչի փոխարեն մյուսի առկայացման:

Ասույթը սովորաբար որոշակի ներկայացման՝ ռեպրեզենտացիայի գործառույթ է իրականացնում [հմտտ. Աթայան, 1981, 192], այսինքն՝ պատկերում է արտալեզվական իրողության մի դրվագ: Բնականաբար, յուրաքանչյուր առանձին դեպքում հաղորդակցային այդ ամբողջ իրադրությունը ներկայացնելու ոչ հնարավորություն, ոչ էլ անհրաժեշտություն կա: Սակայն տվյալ դրվագը լեզվական ոլորտում, մեր կարծիքով, «օրգանապես» կտրված չէ իր արտալեզվական վերաբերելից: Ըստ երևույթին, այդ է պատճառը, որ համապատասխան իրադրությունում փոփոխությունները երբեմն ազդում են տվյալ արտալեզվական դրվագը ներկայացնող հասկացության կամ բառակապակցության ներուճակ ստորոգական բաղադրիչների առկայացման վրա:

Այս ամենը վկայում է այն մասին, որ վերոնշյալ պարագայում մենք գործունենք ոչ թե պարզապես տեքստի, այլ հենց «խոսույթ» երևույթի հետ, որը ներառում է այն բոլոր մակրո- և միկրո-իրադրությունները, որոնք միասին թեմատիկ ընդհանրություն են կազմում: Այս առումով թերևս տեղին կլինի

մեջ բերել Ն. Դ. Արուտյունովային, ըստ որի՝ «խոսույթը «կյանքի մեջ ընկղմված» խոսքն է» [Арутюнова, 1990, 137]:

Մեր կարծիքով, առավել մանրամասն ուսումնասիրությունը կարող է բացորոշել վերոնշյալ հաղորդակցային իրադրության այլ միավորներ ևս, որոնց հարացուցային փոփոխությունը էական ազդեցություն կունենա տվյալ խոսքի բովանդակային պլանում, սակայն, հաշվի առնելով սույն աշխատանքի թեմատիկ ուղղվածությունը, մենք մտադիր ենք այս խնդրին հանգամանորեն անդրադառնալ հետագա աշխատանքներում:

### **3.2. Լռելի ու շարահյուսական միջոցները Բ. Օբանայի ասորիլ քսանչորսյան ուղերձներում**

Յիմք ընդունելով լռությունը որպես լեզվականորեն ամբողջական կամ ոչ ամբողջական կադապրում ստացած միավոր դիտակրելու մեր որդեգրած մոտեցումը՝ այս ենթազվիտում կփորձենք տարրորոշել շարահյուսական այն միջոցները, որոնք հնարավոր է դիտարկել որպես լռության դրսևորումներ քաղաքական խոսույթում:

Պետք է նշել, որ սույն խնդիրը հաղթահարելու համար ստիպված ենք եղել առանձին դեպքերում անդրադառնալ ու ինչպես իմաստաբանությանը, այնպես էլ գործաբանությանը, քանի որ առաջինը մեզ հարկավոր է պատասխանելու համար այն հարցին, թե ինչ իմաստներ/նախադրույթներ (պրոպոզիցիաներ) են թաքցվում կամ հաղորդվում շարահյուսական համապատասխան միջոցների կիրարկմամբ, իսկ երկրորդին կդիմենք՝ պարզելու, թե արտալեզվական ինչ իրողություններ են նպաստում լեզվականորեն չկադապրված ասելիքի առկայացմանը կամ վերծանմանը:

Չնայած գերատեսչական (ինստիտուցիոնալ) լինելու հանգամանքին՝ քաղաքական խոսույթի շրջանակներում ստեղծված տեքստերը, ելույթները և բանավեճ-քննարկումները հաճախ բազմատարր լսարան կամ ընթերցողներ են ունենում, ինչը ստիպում է խոսքը հասցեագրողին տեքստ կազմել իս հաշվի առնել



տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող համընդհանուր արժեքները և նորմերը [տե՛ս Zarefsky, 2009, 118]:

Հայոց ցեղասպանությանն առնչվող ԱՄՆ նախագահների ուղերձների պարագայում խնդիրը կարծես ավելի բարդ է, քանի որ նրանք (կամ նրանց փոխարեն դա կատարող համապատասխան մասնագետները) ստիպված են կազմելու այնպիսի տեքստ, որի հիմնական հասցեատերերը իրար նկատմամբ գրեթե թշամաբար տրամադրված կողմեր են՝ հայերը և թուրքերը, և որոնցից յուրաքանչյուրը որոշակի ակնկալիք ունի տվյալ ուղերձներից: ԱՄՆ նախագահներն էլ իրենց հերթին, ձգտելով գոհացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ ընտրագանգվածին, ինչպես նաև չփչացնել հարաբերությունները Արևելքում ամենահզոր մահմեդական ռազմավարական գործընկերոջ՝ Թուրքիայի հետ, փորձում են շարադրել իրենց տեքստն այնպես, որ միաժամանակ երկու խնդիրն էլ լուծվի:

Թերևս այս հանգամանքը հաշվի առնելով է Ս. Տ. Չոլյանը ԱՄՆ նախագահների ապրիլ քսանչորսյան ելույթները դասել «խուսանավող» խոսույթի շարքին [տե՛ս Չոլյան, 2015, 7], քանի որ դրանցում կա ակնհայտ միտում՝ խուսանավելու «ցեղասպանություն» եզրը գործածելուց: Մեր կարծիքով, այս երևույթը կարելի է դասել լռության դրսևորումների շարքին, քանի որ ԱՄՆ ղեկավարները ոչ թե ձգտում են պարզապես չարտասանել «ցեղասպանություն» բառը, այլ հետևողականորեն խուսափում են պատմական համապատասխան իրողությունը «ցեղասպանություն» որակելուց: Նման պարագայում, Է. Ռ. Աթայանի խոսքով՝ «ստորոգող մարդը՝ արեդիկատորը, հանդես է գալիս որպես մի ուրույն դեմիոլոգ, որը «եղիցի» է ասում արդեն եղածի վերաբերյալ, և այդ *ասելը*՝ ասութակազմության այդ գործունեությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ ստորոգում» [Աթայան, 1981, 199]:

Այսպիսով, այն երևույթը, երբ նախադրույթի բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը լեզվական կադապտում չեն ստանում, կարող են քանվանել «կիսածածկասույթ», որը լռության

յուրօրինակ դրսևորում է, քանի որ հասցեագրողը, օգտվելով  
լեզվական տարբեր միջոցներից, խուսափում է մակերեսային  
մակարդակում ասել իքն ամբողջությամբ առկա այսպիսի անհատի  
նունը:

Շարահյուսական նման միջոցների բացորոշման նպատակով  
մենք անդրադարձել ենք ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի  
ապրիլ քսանչորսյան ելույթներին, քանի որ նախ, ինչպես  
իրավացիորեն նշում է Ս. Տ. Չոլյանը, «Օբամայի մոտ խուսանավոր  
դիսկուրսը հասնում է իր կատարյալ տեսքին» [Չոլյան, 2015, 41], և  
երկրորդ՝ սույն աշխատանքը կատարելու պահին նրա  
նախագահության շրջանը մոտենում է ավարտին, հետևաբար  
նախագահ Բ. Օբամայի՝ Յայոց ցեղասպանությանը վերաբերող  
խոսույթը կարելի է, ընդհանուր առմամբ, այսփուլում ավարտված  
համարել (իհարկե, մի վերապահմամբ, որ հետագայում նա կարող է  
վերընտրվել և սկզբունքորեն շարունակել այն), և post factum  
դիտարկել այն իր ամբողջության մեջ՝ որպես Յայոց  
ցեղասպանության խոսույթում մի ներմարմնավորյալ խոսույթ՝ իր  
միջտեքստուալ աղերսներով հանդերձ: Բացի այդ, ԱՄՆ նախագահը  
շարահյուսական որոշակի միջոցների կիրարկմամբ խուսափել է  
նաև ցեղասպանության ագենտին (գործողին/ներգործողին)  
հիշատակելուց: Վերոնշյալ գործնական նյութի ընտրությունը  
պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ, ինչպես  
արդարացիորեն նշել է Ս. Գասպարյանը, չնայած Յայոց  
ցեղասպանության վերաբերյալ առկա բազմաթիվ անդրադարձերի՝  
«այսօր հատուկ ուշադրություն և պետք է դարձվի լեզվաբանական  
փաստերի ուսումնասիրությանը, որոնք պատմական  
իրադարձություններն աղավաղելու և խեղաթյուրելու  
տեքստային մեխանիզմների առանցքային տարրերն են» [Gasparyan,  
2014, 37]:

Նախագահ Բ. Օբամայի ընդհանուր թվով ութ (2008-2016 թթ.)  
ուղերձների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ ԱՄՆ  
ղեկավարը, թեև գործածել է մի շարք անցողական բայեր՝ հայ  
ժողովրդի նկատմամբ 1915 թ. Օսմանյան կայսրության ծրագրած  
ցեղասպանության ժամանակ կատարվածը ներկայացնելու համար,  
սակայն հետևողականորեն խուսափել է ոճրագործությունների

պատասխանատու որևէ մեկին հիշատակելուց, որն իրականացրել է՝ համակցելով շարահյուսական երկու միջոց՝ ներգործական կառույցները կրավորական դարձնելը և գեղջումը: Նման երևույթները հաճախ կոչում են ագենտազուրկ կրավորականներ (agentless passives), որոնց կիրարկումը հաղորդակցային ակտում հնարավոր է տարբեր պատճառներ ունենա [տե՛ս Carter, McCarthy, 2010, 798]: Նշենք, որ Օբամայի ապրիլ քսանչորսյան ուղերձներում կրավորական կառույցներն ուսումնասիրելիս հաշվի ենք առել նաև բայական անդեմ ձևերով կազմվածները, որոնց պարագայում կիրառված գեղջման առանձին դեպքերն առավելապես ոճական կամ էգզիկ տնտեսման նշանակություն ունեն, այդ պատճառով մանրամասն չենք անդրադարձել դրանց:

Ուսումնասիրության արդյունքում կազմվել է չորս աղյուսակ, որոնք ներակայացված են համապատասխան բաժնում (տե՛ս Հավելվածը): Դրանցից առաջինում ընդգրկվել են ԱՄՆ Նախագահ Բ. Օբամայի ապրիլյան ուղերձներում գործածված կրավորական այն կառույցները, որոնք նա կիրարկել է 1915 թ. հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության ծրագրած ոճրագործությունները նկարագրելու համար:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ընդհանուր թվով 38 համապատասխան կրավորական կառույցներից միայն մեկի պարագայում է ագենտի դերը լրացված: Սակայն այս դեպքում «endure» բայը (թարգմանաբար՝ «տանել», «դիմանալ», «համբերել») ենթադրում է, որ իր ագենտն առնչվում կամ, որպես փորձառություն, առիթ է ունենում գործ ունենալու ինչ-որ տիպի կամ ցավոտ քանի հետ [տե՛ս Oxford Advanced Learner's Dictionary, 2010]:

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ մակերեսային կառույցի անուղղակի խնդրի պաշտոնը զբաղեցրած «those men» («այն տղամարդիկ»), «women» («կանայք»), «and children» («և երեխաները») ոչ թե իրականում ագենտ են, այլ էքսպերիենսեր (experiencer), այսինքն՝ նա/այն, որը ենթարկվել է որոշակի փորձության: Ի վերջո, նշված կառույցի շարահյուսական ենթական՝ «the suffering»-ը («տառապանք») արդարացնում է մեր

պնդումը, քանի որ «տղամարդիկ», «կանայք» և «երեխաները», բնականաբար, չեն նախաձեռնել տառապանքը կրելու ակտը:

Լեզվաբանական գրականության մեջ տարբեր մոտեցումներ են ուրվագծվում այսպես կոչված՝ թեմատիկ դերերի որոշարկման հարցում [տե՛ս Saeed, 2004, 158-161], սակայն, քանի որ սույն աշխատանքում խնդիր չենք դրել այդ մոտեցումները ներկայացնելու, ագենտի դերը պարզելիս կփորձենք հիմնականում առաջնորդվել Դ. Դաուլթի մոտեցմամբ, ըստ որի՝ ագենտի նախատիպ դերը ենթադրում է կամային (volitional), զգալու/ընկալելու (sentience/perception), իրադրության կամ դրամեկայլ մասնակցի մոտ փոփոխությունն առաջացնելու (cause) և դեպի մեկ այլ մասնակից շարժվելու (movement) հատկանիշների առկայությունը [տե՛ս Dowty, 1991, 572]: Մեր կարծիքով, վերոնշյալ դեպքում առավել ապես էքսպերիենսեր հանդիսացող գոյականներն ունեն ագենտի ընդամենը մեկ՝ զգալու հատկանիշը:

Այսպիսով, տեսնում ենք, որ Բ. Օբաման իր ապրիլյան ուղերձներում հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունները նկարագրելիս գործածել է այնպիսի կրավորական կառույցներ, որոնց որպես կանոն «by» նախդրով լրացվող անուղղակի խնդրի շարահյուսական դիրքը, սովորաբար նախատեսված տվյալ ասույթի ագենտի համար, զբաղեցված չէ: Քաղաքական համապատասխան իրադարձություններից անտեղյակ մեկը թերևս կարող է պնդել, թե արտառոց ոչինչ չկա, քանի որ անգլերենում ագենտով կրավորական կառուցները պակաս կիրառական են, քան առանց ագենտ տարբերակները [տե՛ս Лайонз, 1978, 401]: Վերջիններիս կարող է նախապատվություն տրվել՝ ելնելով մի շարք հանգամանքներից, այդ թվում՝ գործողության հեղինակի անհայտ լինելը, նրան/դրան հիշատակելու անկարևորությունը կամ պարզապես չափազանց ակնհայտ լինելը [տե՛ս Carter, McCarthy, 2010, 798]: Սակայն այս խնդիրներն առավել ապես գործաբանական են, որոնց կանդրադառնանք ավելի ուշ, այդ պատճառով մեր ուսումնասիրության ոսպնյակի տակ կառնենք հիմնականում շարահյուսական երևույթները: Երկրորդ աղյուսակի (աղյուսակ 2) միջոցով, որում ընդգրկել ենք ագենտով

կրավորական կառույցները, կփորձենք պարզել՝ արդյոք Բ. Օբամայի ուղերձներում ազենտով և առանց դրա կրավորական կառույցների ընտրությունը թեմատիկ տարբերություններ չի ենթադրում:

Երկու աղյուսակներում ներկայացված կրավորական կառույցների քանակական համեմատությունը, կարելի է ասել, արդարացնում է այն պնդումը, որ առանց ազենտ կրավորական կառույցներն առնվազն անգլերենում կիրառական առավել բարձր հաճախականություն ունեն՝ 38-ը 18-ի հարաբերակցությամբ: Սակայն առանձին դեպքերում այդ տարբերությունը մեծ չէ: Օրինակ՝ 2009 և 2011 թվականների ապրիլյան ուղերձներում այն կազմել է համապատասխանաբար՝ երեքը երկուսի և չորսը երեքի հարաբերություն:

Այդուհանդերձ, մեր կարծիքով, այս պարագայում նշյալ կառույցների կիրարկման թեմատիկ առանձնահատկություններն ավելի հետաքրքիր են: Այսպես, պարզվում է, որ ազենտով կրավորական կառույցներից և ոչ մեկը գործածված չէ հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության ոճրագործությունները նկարագրելու համար: Ավելին, դրանց գերակշիռ մասը գործածված է դրական համատեքստերում, մասնավորապես՝ հայ ժողովրդին գովերգելու կամ հայ և թուրք ժողովուրդների հաշտությանն ուղղված ջանքերը դրվատելու և խրախուսելու պարագայում:

Պարզելով, որ առանց ազենտ կրավորական կառույցները Բ. Օբամայի ապրիլ քսանչորսյան ուղերձներում կիրառված են առավել քան հայերի նկատմամբ ոճրագործությունները նկարագրելու համար, մեզ մոտ հարց ծագեց՝ արդյոք կան առանց ազենտ կրավորական կառույցներ, որոնք ԱՄՆ նախագահը կիրարկել է իր պաշտոնավարման ընթացքում հրապարակած ութ ուղերձներում, քանի որ դա ինչ-որ առումով կարող էր վկայել հաճախի կրավորական կառույցներ գործածելու՝ Բ. Օբամայի անհատական ոճի մասին:

Աղյուսակ 3-ում ներկայացված են առանց ազենտ կրավորական և կիսակրավորական կառույցներ, որոնք ԱՄՆ նախագահը կիրառել է

հայ տնի իրադարձություններին առնչվող այլ դեպքերի կամ երևույթների մասին խոսելիս: Աղյուսակում ներկայացված քանակական վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ գործածվել է չորս կառույց, որոնցից երեքի պարագայում ոչ թե նշված չէ կոնկրետ ագենտը, այլ գործնականում այն վերականգնելի չէ, քանի որ դրանք, ընդհանուր առմամբ, կոչ-հորդոր բնույթի նախադասություններ են: Ինչ վերաբերում է վերջինին, ապա պետք է նշել, որ այն ընդամենը կիսավորակ կառույց է՝ կազմված անգլերենի երկրորդ դերբայով (Participle II), որի պատճառով էլ վերջինս կարող է ընկալվել նաև որպես ածական կառույց [տե՛ս Carter, McCarthy, 2010, 794]:

Այսպիսով տեսնում ենք, որ նշված տեքստերում, առանց ագենտ կրավորական կառույցները, որոնք կիրառված են հայերի նկատմամբ իրականացված ոճրագործություններից զատ այլ դեպքեր կամ երևույթներ նկարագրելու համար խիստ հազվադեպ են՝ 38-ը չորսի հարաբերությամբ, հետևաբար դրանց կիրարկումը Բ. Օբամայի անհատական ոճին վերագրելը, ըստ մեզ, նույնպես արդարացված չէ:

Յետքերքական է, թե ինչպես է ԱՄՆ նախագահը լռելի ցեղասպանության կազմակերպիչների մասին նաև ներգործական կառույցներում, որտեղ խուսանավելը պետք է որ ավելի բարդ լիներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգլերենը, ի տարբերություն հայերենի, անալիտիկ լեզու է և հետևաբար անենթակա կառույցները նրանում հաճախադեպ չեն: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ վերոնշյալ կառույցներում գերտերության ղեկավարը խուսանավել է նաև կատարվածը ցեղասպանությունն որակելուց:

Մասնավորապես, ըստ աղյուսակ 4-ում (116-118 էջեր) ներկայացված տվյալների՝ Բ. Օբամայի ապրիլյան ութ ելույթներում գործածվել է հայերի նկատմամբ ոճրագործությունները նկարագրող կամ դրանց վերաբերող ներգործական սեռի ութ բայ: Ուշագրավ է, որ դրանցից միայն մեկն է անցողական («destroy»-«ավերել»), ինչը նշանակում է, որ

ցեղասպանությունը որպես ամբողջական իրադարձություն ներկայացնելու համար անհրաժեշտ շարահյուսական խնդրի և, հետևաբար, ագենտի կամ պացիենտի (ներգործվողի) դերերից առնվազն մեկը այդ բայերի պարագայում չեն կարող լրացված լինել:

Յոթ անանցողական բայերից երկուսը («perish», «die») կարելի է դիտարկել որպես հոմանիշներ, որոնք նշանակում են «մահանալ»: Եվս մեկը՝ «suffer»-ը («տառապել»), նույնպես ենթադրում է, որ ենթակայի պաշտոնը զբաղեցնողը պետք է լինի պացիենտը: Նշված բայերի գերակշիռ մասը՝ «occur», «take» «place», «happen», «began», տեքստում կիրառվել են հոմանիշաբար և նախևառաջ նշանակում են «պատահել», «տեղի ունենալ», ինչը ենթադրում է, որ նրանց շարահյուսական ենթակայի դիրքը պետք է լրացված լինի որևէ իրադարձություն նշանակող բառով: Այս պատճառով կարող ենք եզրակացնել, որ այս չորս բայերի պարագայում «ցեղասպանություն» բառը հնարավոր էր կիրարկել, որի փոխարեն, սակայն, ԱՄՆ նախագահը գործածել է բառապաշարային այլ կառույցներ:

Ներգործական սեռով դրված վերոնշյալ ութ բայերից միակ անցողականի («destroy») պարագայում ոճրագործության հեղինակներին չհիշատակելը պետք է որ ավելի դժվար լիներ, քանի որ անցողական բայերն առնվազն երկարժույթ են, այսինքն՝ թե՛ ենթակայի և թե՛ խնդրի դիրքերը, որպես կանոն, լրացված են լինում: Սակայն դրանք կիրարկված են որոշիչ երկրորդական կառույցներում, և երկրորդ՝ լրացնում են գլխավոր նախադասությունների խնդիրներին, որոնք արտահայտված են հոգնակի թվով դրված «those» («դրանք») դերանվամբ՝ առանց նախնական կամ հետագա որոշարկման, թե ում մասին է խոսքը:

Այսպիսով կարող ենք ենթադրել, որ սա շարահյուսական ևս մի միջոց է՝ խուսափելու ասելիքը բացորոշ արտահայտելուց: Պետք է նշել, որ Բ. Օբաման այս մեթոդից օգտվել է միայն առաջին երկու ուղերձներում, ինչից կարելի է ենթադրել, որ այն ոչ այնքան արդյունավետ է, քանի որ խուսանավելը՝ որպես լռության

մի դրսևորում, այս պարագայում առավել ակնհայտ է, քան ոչ անցողական բայերի կիրարկումը, որի մասին թերևս վկայում է նաև ուսումնասիրված ներգործական կառույցներում անցողական և անանցողական բայերի քանակական հարաբերությունը՝ 2-ը 19-ի դիմաց:

Բ. Օբամայի ապրիլ քսանչորսյան ուղերձներում ցեղասպանության պատասխանատուներին չհիշատակելու ևս մի միջոց ենք առանձնացրել՝ փոխանցումը (տրանսպրզիցիան): Բացառությամբ 2015 թ.-ի, ԱՄՆ նախագահը, հայերի նկատմամբ ոճրագործությունների մասին խոսելիս, գործածել է «in the final days of the Ottoman Empire» («Օսմանյան կայսրության վերջին օրերին») բառակապակցությունը: Այն, որ գերտերության ղեկավարները քաջատեղյակ են, թե ովքեր են եղել ցեղասպանության պատասխանատուները, կասկած չի հարուցում՝ հատկապես հաշվի առնելով Յայերի հիշատակի օրվա կապակցությամբ ԱՄՆ նախկին նախագահ ավագ Ջ. Բուշի 1990 թ. ելույթը (Bush, 1990), որում 1915-1923 թթ. հայերի նկատմամբ իրականացված ջարդերը նա վերագրում է հենց Օսմանյան կայսրությանը՝ կիրարկելով հետևյալ ձևակերպումը. «at the hands of the rulers of the Ottoman Empire» («Օսմանյան կայսրության ղեկավարների ձեռամբ»):

Յետևաբար, կարելի է ենթադրել, որ Բ. Օբաման «Օսմանյան կայսրություն»-ը միտումնավոր է տեղադրել ժամանակի պարագայի դեր կատարող բառակապակցության կաղապարում՝ դրանով առնվազն առերևույթ կամ այլ կերպասած՝ մակերեսային կառույցում «Ottoman Empire»-ին ազատելով ազենտի գործառույթից:

Մեր կարծիքով, սա ևս քերականական մի միջոց է՝ նրբորեն խուսափելու ակնկալվող ասելիքից, քանի որ նման փոխանցման պարագայում անգամ խոսքիմասային փոփոխություն տեղի չի ունենում: Այս երևույթին լեզվաբանության մեջ հանգամանորեն անդրադարձել Լ. Տենյերը՝ այն անվանելով փոխանցման գործառույթային տարատեսակ [տե՛ս Теньер, 1988, 416-417]:



Այն, որ այդ ամբողջ բառակապակցությունը կատարում է ժամանակի պարագայի դեր, կարելի է ստուգել փոխարինման մեթոդով: Պատկերավորության համար որպես օրինակ կարող ենք վերցնել Բ. Օբամայի 2009 թ. ապրիլ քսանչորսյան ուղերձից համապատասխան նախադասությունը և «in the final days of the Ottoman Empire» բառակապակցության փոխարեն գործածել «in 1915» ձևակերպումը. *Each year we pose to remember the 1.5 million Armenians who were subsequently massacred or marched to their death [in 1915].*

Հասկանալի է, որ շարահյուսական հարաբերություններ կան նաև այդ բառակապակցության ներսում: Այսպես, «the Ottoman Empire» և «in the final days» բառակապակցությունների միջև էլ հատկացուցչի և հատկացյալի կապ է դրսևորվում, սակայն մեր ուսումնասիրության շրջանակներում սառաջնային խնդիր չէ, թեև պետք է նկատել, որ 2015 թ.-ի այն միակ ուղերձում, որտեղ տեղ չէր գտել քննարկվող միավորը, «Օսմանյան կայսրություն» բառակապակցությունը կրկին կիրակվել է հատկացուցչի պաշտոնում, սակայն այս պարագայում հատկացյալը «հայ ժողովուրդ»-ն է («the Armenian people of the Ottoman Empire»), որն էլ տվյալ կրավորական կառույց պարունակող նախադասության ենթական է:

Այսպիսով, մի շարք ուղադրավերևոյթներ են ուրվագծվում «of the Ottoman Empire» բառակապակցության այս երկու դիրքային փոփոխությամբ: Նախ՝ հիմք ընդունելով բազմաստիճան հատուկավորման սկզբունքը [տե՛ս Գյուլլուանյան, 2015, 22-24], կարող ենք նկատել, որ առաջին աստիճանի հատուկավորմամբ՝ «Օսմանյան կայսրություն»-ը Հայոց ցեղասպանության հարյուրամյակին հրապարակված ուղերձում հայտնվում է, այսպես ասած, ենթակայի բաղադրիչում, ի տարբերություն մյուս ուղերձների, որտեղ միևնույն բառակապակցությունը ստորոգյալի բաղադրիչում է: Մինչդեռ երկրորդ հատուկավորմամբ՝ «of the Ottoman Empire» բառակապակցությունը շարունակում է կատարել հատկացուցչի գործառնությունը, թեև այս անգամ արդեն այլ հատկացյալի նկատմամբ:

Մեկ այլ ուշագրավ երևույթ է ասույթի թեմա-ռեմատիկ կառուցվածքում ուղերձի տեղադրումը: Հասկանալի է, որ քանակոր խոսքում շնորհիվ տրամաբանական շեշտի հիմնև նոր ասելիքի որոշարկումը ունկնդրի համար պետք է որ ավելի դյուրին լինի, սակայն առնվազն անգլերենում նախադասության շարահյուսական կառուցվածքի մի քանի այլընտրանքային ձևակերպումներով ևս հնարավոր է հասնել միևնույն ասույթի թեմա-ռեմատիկ կառուցվածքի փոփոխության [տե՛ս Лайонз, 1978, 356]:

Այդ միջոցներից կրավորական կառույցը թերևս ամենագործածականներից է, որի մասին վկայում է նաև մեր ուսումնասիրած ութ ուղերձներում համանման կառույցների կիրարկման բարձր հաճախականությունը: Այս առումով հետաքրքրական է, որ «of the Ottoman Empire» բառակապակցությունը նշված բոլոր տեքստերում կիրառված է կրավորական կառույցներում: Բացի 2015 թ.-ի ուղերձից, մյուս բոլոր դեպքերում «Օսմանյան կայսրության» հատկացուցիչն ընդգրկված է ժամանակի պարագայի գործառույթ կատարող բառակապակցությունում, որը նախադասության ոչ պարտադիր միավոր (adjunct) է: Մինչդեռ Ցեղասպանության հարյուրամյակին հրապարակված տեքստում, ինչպես վերև արդեն ասվել է, այն հայտնվել է ենթակայի գործառույթ կատարող բառակապակցությունում, որը նախադասության շարահյուսական կառուցվածքի պարտադիր բաղադրիչն է: Ինչպես նշում է Ա. Ա. Խուդյակովը, «խոսողը ունկնդրին ոչ միայն հաղորդում է փաստեր, այլև դրանք դասավորում է որոշակի աստիճանակարգմամբ՝ ըստ տեղեկատվական կարևորության՝ ընտրողաբար բաշխելով շեշտադրումները և, ըստ այդմ, կառավարելով ունկնդրի ուշադրությունը» [Худряков, 2005, 128]:

Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ հայերի զանգվածային ջարդերի կազմակերպման հեղինակ Օսմանյան կայսրությանը շարահյուսական տարբեր գործառույթներ կատարող բառակապակցություններում հիշատակելը Բ. Օբամայի կողմից ունի հաղորդակցային դիտավորություն, որը և

իմաստագործաբանական վերլուծության է ենթարկել U. S. Չոլյանը [տե՛ս Չոլյան, 2015, 76]:

Բացի այս, Յայոց ցեղասպանության հարյուրամյակին հրապարակված ուղերձը ոճագործության հեղինակներին հիշատակելու առումով աչքի է ընկնում ևս մի նախադասությամբ, որում ուղիղ խնդրի պաշտոնում գործածվել է նախորդ տեքստերում չհանդիպող «Ottoman leaders» (Օսմանյան առաջնորդներ/ղեկավարներ) բառակապակցությունը. *As the horrors of the 1915 unfolded US Ambassador Henry Morgenthau, Sr. sounded the alarm inside the US government and confronted Ottoman leaders.* Շարահյուսական առումով հետաքրքրական է վերջին բայի («confront») գուգորդումը Ottoman leaders բառակապակցության հետ: Բանն այն է, որ այս համատեքստում տվյալ բայը, ըստ բառարանային իմաստների, կարող է կիրարկված լինել «ընդդիմանալ» իմաստով, որին ամերիկյան Webster բառարանը (Merriam-Webster's Collegiate Dictionary 2004) որպես հոմանիշ առաջարկում է «oppose» («ընդդիմանալ»): Իհարկե, սա առավելապես իմաստաբանական խնդիր է և հետևաբար, այլ տիրույթում քննարկելի անարկա, սակայն ուշագրավ է այն փաստը, որ «confront» բայը հաճախ հանդիպում է «with» նախդրի հետևում «առերեսել մեկին մի բանով» իմաստը, ինչը շատ համահունչ կլիներ տվյալ տեքստի ընդհանուր բովանդակությանը և անորոշության մեջ չէր թողնի պատմական համապատասխան անցքերին անձանոթ կամ թերիրագեկված ընթերցողին, որը թերևս հասկանում է, որ Յ. Մորգենթաուն քննադատել է Օսմանյան Թուրքիայի ղեկավարներին, սակայն այն տրամաբանական հարցի պատասխանը, թե որոշակիորեն ինչի համար, մնում է առկախված:

Մեր կարծիքով, համանման երևույթները կարելի է դասել կիսածածկասույթների շարքին, քանի որ շնորհիվ իր իմաստաշարահյուսական կաղապարման դրանք գործում են միաժամանակ երկկերպ, այսինքն՝ մի կողմից մեղադրվում են Օսմանյան կայսրության ղեկավարները, մյուս կողմից՝ մեղադրանքի բովանդակությունը մատնվում է լռության:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ քաղաքական խոսույթում գործունե կերպով կիրառվում են շարահյուսական մի շարք միջոցներ՝ որոշակի ուղերձ չփոխանցելու կամ թերասելու համար: Մասնավորապես, ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի ապրիլյան ուղերձների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ գերտերության ղեկավարը ցեղասպանության մեղավորներին անմիջականորեն չհիշատակելու նպատակով նշված տեքստերում ակտիվորեն կիրառել է առաց ազենտի կրավորական կառույցներ, իսկ ներգործականում նույն նպատակին հասնելու համար նախապատվությունը տվել է անանցողական այնպիսի բայերի կիրարկմանը, որոնք ենթադրում են ենթակայի պաշտոնում կամ պացիենտին, կամ պարզապես ընդհանուր իրադարձությանը:

Ինչ վերաբերում է անցողական բայերին, ապա Բ. Օբաման, թեև դրանք գործածել է որպես անորոշ դերբայ (ինֆինիտիվ), սակայն ազենտի դերում ցեղասպանության կազմակերպողներին բացորոշ չներկայացնելու նպատակով, կիրարկել է «who» («ով/ովքեր») հարաբերական դերանունը՝ որպես դերանուն որոշիչ երկրորդական նախադասության համար՝ լրացնելու հոգնակիով դրված «those» ցուցական դերանուն հարաբերյալին:

Բացի այդ, ութ ուղերձներում գործառնության փոխանցման (տրանսպորտից) շնորհիվ Բ. Օբաման, պահպանելով «Օսմանյան կայսրության» խոսքիմասային պատկանելությանը, ըստ էության, տեղափոխել է ազենտի դերում ակնկալելի համապատասխան բառակապակցությունը այլ դիրքեր՝ փոխելով դրա գործառնությունը: Այս միջոցին շարկապված՝ տեղի է ունեցել նաև ասույթի թեմա-ռեմատիկ կառույցում ուղերձի բաշխման փոփոխություն, որը, մեր կարծիքով, նույնպես ունի հաղորդակցային դիտավորություն, քանի որ այդ կերպ տեքստի հեղինակը փորձում է բևեռել ունկնդրողի կամ ընթերցողի ուշադրությունը այն հատվածի վրա, որն իրեն է ձեռնտու:

Մենք նկատեցինք նաև, որ որոշակի ուղերձ քողարկելու նպատակով ամենայն հավանականությամբ հաշվի է առնվել նաև

բայի արժույթայնությունը, քանի որ մասնավոր դեպքում չի լրացվել բայի («confront») համապատասխան հատկանիշով ենթադրվող միավորը՝ լռության մատնելով տեքստի իմաստային ամբողջականության համար կարևոր բաղադրիչներից մեկը:

Մենք չենք բացառում, որ քաղաքական խոսույթում հնարավոր են շարահյուսական միջոցներով որևէ բանի մասին լռելու և այլ դրսևորումներ, սակայն մեր նպատակն է եղել ոչ թե նման երևույթների սպառիչ դասակարգում տալը, այլ շարահյուսական տիրույթում դրանց դրսևորման հնարավորությունը ցույց տալը:

### **3.3Բ. Օբանայի արհիլյան ուղերձներում լռության լեզվագործաբանական վերլուծություն**

Լեզվական նշանի ծավալման տիրույթներից՝ իմաստաբանական, շարահյուսական և գործաբանական, «լռություն» \$ենոմենի հետամենասերտառնչությունն ունի թերևս վերջինը, որի համար կան մի շարք պատճառներ: Նախևառաջ, լռության մեկնաբանումը խիստ կախված է համատեքստից, ընդ որում թե՛ լեզվական և թե՛ արտալեզվական, ինչը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ «համատեքստից դուրս լռությունը, ըստ էության, չունի նախատիպային որևէ իմաստ» [Jaworski, 1993, 160], ի տարբերություն բառերի, որոնք անկախ խոսքային իրադրությունից, որպես կանոն, ունեն որոշակի իմաստ՝ հաճախ ամրագրված բառարանում: Բացի այդ, առանձին դեպքերում, նույնիսկ պատմական որոշ անցքերի մասին իրազեկվածությունը կարող է էապես ազդել համապատասխան լռությունը մեկնաբանելու վրա:

Մեր կարծիքով, լեզվագործաբանության շրջանակներում ուսումնասիրված մի շարք երևույթներ, մասնավորապես կանխենթադրույթները և ներակայման հնարավորությունները բավականին աղերսներ ունեն «լռություն» \$ենոմենի հետ, քանի որ դրա «որոշ դրսևորումները քողարկվում են բազմաթիվ բառերի ներքո» [Jaworski, 1993, 8]:

Համանման երևույթները քաղաքական խոսույթում բավականին հաճախորդ են, քանի որ քաղաքական գործիչները «ձգտում են պահպանել իրենց կողմից կիրարկվող լեզվական» նշանների հասկացութային բովանդակության անորոշությունը» [Шейгал, 2004, 51]: Բացի այդ, հատկապես քարոզարշավների ժամանակ, նրանք հաճախ ձգտում են իրենց ելույթների միջոցով «սեփական խոսույթային աշխարհը պարտադրել հնարավորինս մեծ թվով ընտրողների» [Маслова, 2008, 256], կիրարկելով լեզվագործաբանական տարատեսակ միջոցներ:

Միևնույն երևույթը բազմակողմանիորեն ուսումնասիրելու նկատառումներից ելնելով՝ մենք կշարունակենք լռության դրսևորման հնարավորությունների ուսումնասիրումը Բ. Օբամայի ապրիլ քսանչորսյան ուղերձներում՝ այս անգամ ընտրելով խնդրի բացորոշման լեզվագործաբանական դիտանկյունը: Սույն թեմային առնչվող աշխատանքում Ս. Տ. Չոլյանը իմաստագործաբանական վերլուծության է ենթարկել ԱՄՆ նախագահների՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող ուղերձները՝ ծավալուն անդրադարձ կատարելով Բ. Օբամայի տեքստերին [տե՛ս Չոլյան, 2015, 40-87]:

Վերոնշյալ աշխատանքում կարելի է նկատել լեզվագործաբանական այնպիսի երևույթներ, որոնք, մեր կարծիքով, նաև լռության որոշակի ձևեր են: Այսպես, անդրադառնալով հայերի և թուրքերի միջև հարաբերությունների կարգավորմանը վերաբերող ասույթներից մեկին՝ Ս. Տ. Չոլյանը նշում է. «Հաշտեցման գործընթացը ենթադրում է, որ մինչ այդ առկա էր մեկ այլ վիճակ, ինչը, թեև որևէ տեքստային արտահայտում չի գտնում, այնուամենայնիվ, դառնում է համապատասխան արտահայտությունների կանխենթադրույթ» [Չոլյան, 2015, 45]: Ինչպես տեսնում ենք, մակերեսային մակարդակում անցանկալի ուղերձը բացորոշ շարադրելուց խուսափելու նպատակով տեքստի հեղինակը կարող է այն փոխադրել կանխենթադրույթի՝ դրանով իսկ լռության մատնելով համապատասխան ասելիքը:

Յեղիևակը իր ուսումնասիրության շրջանակներում նկատում է ևս մի հետաքրքիր երևույթ, որը թերևս կարելի է դասել լռության մասնակի դրսևորման շարքին: ««Meds Yeghern»-ը և դրա հետ կապված բառախումբը, չնայած իր քանակական գերակայությանը, կառուցվածքային առումով գտնվում է լուսանցքային դիրքում՝ գուտ որպես հիշատակման առարկա» [Չոլյան, 2015, 45-46]: Փաստորեն հնարավոր է տեքստային մակարդակում ասել ի՞նչը կադապարել այնպես, որ համապատասխան ուղերձը, չնայած մակերեսային մակարդակում իր բացորոշ տրվածությանը, հայտնվի ստվերում և հետևաբար հասցեատիրոջը փոխանցվելու պակաս հնարավորություններ ունենա միևնույն խոսքաշարում ծավալված այլ ուղերձների համեմատ:

Յամանման երևույթները Բ. Օբամայի ապրիլյան ուղերձներում բավականին շատ են, և, ինչպես արդեն նշեցինք, Ս. Տ. Չոլյանը հանգամանորեն անդրադարձել է դրանց, իսկ վերջիններից շատերը որպես լռության յուրօրինակ դրսևորումներ համարելը խնդրին ընդամենը այլ դիտանկյունից նայելու հարց է: Այդուհանդերձ, մեր ուսումնասիրության շրջանակներում նկատել ենք լեզվագործաբանական մի երևույթ, որին առանձնահատուկ անդրադարձ չի եղել վերոնշյալ աշխատության ունում, թեև այդ առումով բավականին օգտաշատ ակնարկ կարելի է համարել այն պնդումը, որ «քաղաքական դիսկուրսի համար կատարողական (performative) լինելը պարտադիր պայման է» [Չոլյան, 2015, 72]:

Յարցը կրկին վերաբերում է «ցեղասպանություն» բառի փոխարեն «Meds Yeghern»-ի գործածությանը, սակայն սույն ենթագլխում կցանկանայինք կենտրոնանալ այն հանգամանքի վրա, որ բովանդակային առումով 1915 թ. Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ կատարվածը բառացիորեն «ցեղասպանություն» որակելու կարիք չկա, քանի որ «Օբաման թվարկում է ցեղասպանության հանցակազմի կարևորագույն հատկանիշները [...] հիշատակում է նրանց, ովքեր աներկբա հաստատել են Յայոց ցեղասպանության փաստը» [Չոլյան, 2015, 77]: Ու թեև ԱՄՆ նախագահը իր պաշտոնավարման ընթացքում հրապարակած ութ ուղերձներում

«ցեղասպանություն» եզրի փոխարեն ամեն անգամ նախընտրել է գործածել «Meds Yeghern» բառակապակցությունը, վերջինիս անգլերեն համարժեքը, ինչպես նշում է Ս. Գասպարյանը, «genocide» բառն է [Gasparyan, 2010, 146], որի ապացույցը կարելի է գտնել մի շարք ժամանակակից ինչպես անգլերեն-հայերեն, այնպես էլ հայերեն բացատրական բառարաններում [տե՛ս Բարաթյան, 2002, Սուքիասյան, 2009]:

Յետևաբար տրամաբանական հարց է ծագում, թե ինչու էին հայերը (և ոչ միայն) շարունակ բարձրածայնում Բ. Օբամայի կողմից «ցեղասպանություն» եզրի գործածության անհրաժեշտության մասին: Յասկանալի է, իհարկե, որ վերոնշյալ բառը «միջազգային իրավունքի տիրույթում կարծես միակ ընդունված եզրն է» [Gasparyan, 2010, 148], իսկ Բ. Օբաման էլ՝ որպես նախագահի թեկնածու, խոստացել էր ճանաչել Յայոց ցեղասպանությունը ընտրություններում հաղթելուց հետո նույնպես [տե՛ս Օբամա, 2008, 118]:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ հայերի այդ ցանկությունն-պահանջը ունի նաև այլ պատճառ, որի արդյունավետ բացորոշումը կարելի է կատարել՝ գուգադրելով խոսողական ակտերի տեսությունը լռության մեր մոտեցման հետ:

Չի կարելի չհամաձայնել Ս. Տ. Չոլյանի հետայն հարցում, որ «Օբամայի բոլոր ապրիլյան հայտարարությունները հնարավոր է դիտարկել որպես մեկ միասնական տեքստ [...], որովհետև դրանք արտահայտում են նույն գաղափարները և նույնությամբ վերարտադրում են նկարագրվող իրադրությունները» [Չոլյան, 2015, 54]: Յետևաբար, այդ տեքստ-անփոփոխակը պետք է որ ունենա հիմնական ուղերձ, որը կարող ենք անվանել գերուղերձ (գերմեսիջ): Առավել խտորոշման նպատակով կարող ենք տարբերակել հասցեագրողի կամ փոխանցվող գերուղերձը հասցեատիրոջ կողմից ակնկալվող ուղերձից, որոնք, ըստ էության, կարող են և չհամընկնել, իսկ վերջինս հնարավոր է ընդհանրապես բացակայի, եթե օրինակ՝ հասցեատիրոջը համապատասխան տեքստը անակնկալ կերպով է մատուցվում, և նա չի



հասցնում առնվազն արտալեզվական գործունեությամբ մասնավորված որոշակի ուղերձի ակնկալիք ձևավորել: Օբամայի ելույթների պարագայում կարելի է թերևս պնդել, որ առկամի քանի ուղերձներից առնվազն մեկը համընկնում է հայերի գերակշիռ մասի կողմից ակնկալվող ուղերձի հետ, որը, որպես իմաստային անփոփոխակ, կարելի է շարադրել մոտավորապես այս կերպ՝ «1915 թ. հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության իրականացրածը ցեղասպանություն է»: Ստորագական այս ակտը, որով պատմական եղելությանը կարող էր իրավական գնահատական տրվել, սկզբունքորեն, առնվազն հայերի համար, բովանդակային առումով զուրկ է տեղեկատվական արժեքից, քանի որ նրանք դա ընկալում են որպես անվիճարկելի փաստ, որը չի հերքում անգամ ինքը՝ Բ. Օբաման: Վերջինս 2006 թ., երբ դեռևս Միացյալ Նահանգների սենատոր էր, նամակ էր հղել այն ժամանակ ԱՄՆ պետքարտուղար Բ. Ռայսին՝ նշելով, որ 1915 թ. Յայոց ցեղասպանությունը փաստաթղթերով հաստատված իրողություն է [տե՛ս Օբամա, 2006, 167]: Բացի այդ, ինչպես վերը նշեցինք, այն բազմաթիվ նկարագրական արտահայտությունները, որոնք Բ. Օբաման գործածել է իր տեքստերում՝ բնորոշելու հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունները, կարծում ենք՝ բավարար են պնդելու համար, որ ԱՄՆ նախագահը սկզբունքորեն ճանաչում է Յայոց ցեղասպանությունը:

Այդուհանդերձ, Բ. Օբամայի կողմից վերոնշյալ նախադրույթը բացորոշ հայտնելը անհրաժեշտ նախապայման էր ԱՄՆ ղեկավարի մակարդակով փաստը ճանաչելու համար, քանի որ նրա ուղերձների հայ հասցեատերերն ակնկալում էին այն գնահատականը, որը Բ. Օբաման ի պաշտոնե կտար պատմական այդ իրադարձությանը: Այդ ակնկալիքին Բ. Օբամայի քաջատեղյակ լինելու մասին է թերևս վկայում նրա գրեթե բոլոր նշված ելույթներում առկա հետևյալ ձևակերպումը՝ «Ես բազմիցս հայտնել եմ իմ տեսակետը 1915 թվականին կատարված ի վերաբերյալ»:

Յետևաբար, կարելի է եզրակացնել, որ Բ. Օբաման ոչ թե պարզապես լռել է պատմական որոշակի իրողության մասին, այլ

խուսափել է այն կատարողական ակտից, որով 1915 թ. Օսմանյան թուրքիայում կազմակերպված ոճրագործությանը ԱՄՆ նախագահի մակարդակով իրավական գնահատական կտրվեր: Իհարկե, դա չի նշանակում, որ այն կոլեկտիվը, որի իրավական հետևանքներ, քանի որ երկրի կառավարման ընդհանուր համակարգից զատ՝ «արտաքին հարաբերություններում նույնպես նրա [ԱՄՆ նախագահի] իշխանությունը խիստ սահմանափակ է» [Stevenson, 1994, 35]: Յետևաբար, այդ բովանդակության լեզվական բացորոշ կադապարումը չէր ենթադրի ինքնաբերաբար փոփոխություն՝ չ ԱՄՆ պաշտոնական քաղաքական ուղեգծում և ո՛չ էլ, առավել ևս, թուրքիային որևէ բան պարտադրելու առումով: Սակայն, անհերքելի է, որ ի դեմս Բ. Օբամայի՝ դա այլևս չէր լինի ընդամենը սենատորներից մեկի դիրքորոշումը, այլ ինքնաբերաբար կվերածվեր ի պաշտոնե շատ ավելի մեծ կշիռ ունեցող մեկի՝ երկրի ղեկավարի մակարդակով արված հայտարարության:

